









АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ им. М. АБЕГЯНА

Дж. М. МИРЗАБЕКЯН

МЕСРОП ТАГИАДЯН

ЖИЗНЬ и ТВОРЧЕСТВО

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1971

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱՐԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ


Ջ. Մ. ՄԻՐՋԱՐԵԿՅԱՆ

ՄԵՍՐՈՊ ԹԱՂԻԱԴՅԱՆ

ԿՅԱՆՔԸ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

A $\frac{11}{4688}$

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԴԱ ՀՐԱՏԱՐԱԿԱՊՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1971



Մենագրության մեջ լուսաբանվում է հայ նոր գրականության հիմնադիրներից մեկի՝ զրադ, զիտնական, մանկավարժ, հրապարակախոս և հասարակական գործիչ Մեսրոպ Թաղիադյանի կյանքի և գործունեության հիմնական գծերը: Գրքում արխիվային նաև նյութերի հիման վրա բնական է առնվում «Վեպ Վարդգիսի» ստեղծագործական պատմությունը: Վերջում ներկայացվում է Մ. Թաղիադյանի ստեղծագործական ժառանգության ամբողջական պատկերը:

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

XIX դարի առաջին կեսի հայ լուսավորական շարժման նշանավոր դեմքերից մեկն է գրող, հրապարակախոս, գիտնական և մանկավարժ Մեսրոպ Թաղիադյանը, որի ողջ գործունեությունը սերտորեն առնչվում է իր դարաշրջանի հայկական կյանքում առաջացած հուզող հարցերի հետ: Ազգային վերածնության նորաբողբոջ գաղափարների և սիջնադարյան մտայնության դեմ պայքարի մի ժամանակաշրջան էր դա, երբ գրողը, գիտնականն ու հասարակական գործիչը հաճախ էին միանում մի անձնավորության մեջ. համակողմանի բնավորություններ է վառվառն տաղանդներ, որ բարձրանում էին համատարած գորշության ու անուարբերության ծովից՝ կյանքի ու արթնացման կոչելով ազգին, հույս ու հավատ ներշնչելով գաղիքի հանդեպ:

Թաղիադյանի արկածալից կյանքի դրվագները դարաշրջանի մտավորականության ճակատագիրն են ուրվագծում: Լինելով ըմբոստ ու ազատաբաղձ բնավորություն, Թաղիադյանը գրական-լուսավորական շարժման հորձանուտը նետվեց ոչ առանց համազգային մեծ նպատակների: Իր ամբողջ կյանքն էլ նվիրաբերեց այդ նպատակների իրագործմանը:

Բարդ է Թաղիադյանի ապրած ժամանակաշրջանն իր սոցիալ-պատմական կողմերով:

XVIII դարի վերջին քառորդում և XIX դարի առաջին կիսամյակում եվրոպական երկրներում տեղի են ունենում խոշոր իրադարձություններ՝ աննախադեպ զարգացում են ապրում տեխնիկան, գիտությունը, կուլտուրան: Լայն ծավալ են ստանում առևտուրը, ծովագնացությունը, արդյունաբերությունը: Կապիտալիզմի

անհամաչափ զարգացման հետևանքով ցնցող իրադարձություններ են տեղի ունենում եվրոպական մայր ցամաքում՝ ֆրանսիական բուրժուական հեղափոխությունը, Անգլիայում չարտիստական շարժումը, ռուսական դեկաբրիստների ապստամբությունը, հունական, իտալական ազգային-ազատագրական շարժումները և այլն։ Այդ դարաշրջանը՝ 1789-ից մինչև 1871 թվականը, «... ֆրանսիական մեծ ռևոլյուցիայից մինչև ֆրանկո-պրուսական պատերազմը, բուրժուազիայի վերելքի, նրա լիակատար հաղթանակի դարաշրջանն է։ Դա բուրժուազիայի վերընթաց գիծն է, ընդհանրապես բուրժուա-դեմոկրատական շարժումների, մասնավորապես ազգային-բուրժուական շարժումների դարաշրջանն է, իրենց դարձ ապրած ֆեոդալական-աքսոլյուտիստական հիմնարկների արագ խորտակման դարաշրջանն է»¹։

Քաղաքական ճգնաժամից և տնտեսական փլուզումից դուրս գալու համար եվրոպական երկրներն սովելի վայրագ ձևով են սկսում ճնշել նաև արևելքի գաղութային ու կիսագաղութային երկրների ժողովուրդներին։ Սա իր հերթին խթանում է արևելյան ժողովուրդների ազգային և հեղափոխական պայքարը գաղութատիրության դեմ։

«Արևելյան Հնդկաստանի և Չինաստանի շուկաները, Ամերիկայի գաղութացումը, փոխանակությունը գաղութների հետ, փոխանակության միջոցները և առհասարակ ապրանքների քանակության ավելացումը մինչև այդ չլսված զարկ տվին առևտրին, ծովագնացությանը, արդյունաբերությանը և դրանով իսկ ռևոլյուցիոն տարրի զարգացում առաջացրին քայքայվող ֆեոդալական հասարակության մեջ»²։

Արդյունաբերության և առևտրի վրա խարսխված եվրոպական և արևելյան երկրների կապը, անշուշտ, միայն քաղաքական և տնտեսական չէր, այլև կուլտուր-լուսավորական, գաղափարական։ Լուսավորական շարժումը հսկայական դեր էր կատարել Եվրոպայում ֆեոդալական հասարակարգի խորտակման և բուր-

¹ Վ. Ի. Լենին, *Երկեր*, հ. 21, էջ 173։

² Մարքս, Էնգելս, *Կոմունիստական պարտիայի մանիֆեստը*, Երևան, 1960, էջ 33։

ծուական հարաբերությունների զարգացման ասպարեզում: Այդ շարժումն աչկա չէր բավարարում Եվրոպայի քաղաքական-տնտեսական առաջընթացին: Մինչդեռ արևելյան երկրներում լուսավորական շարժումը հոր-հոր էր սկսում կատարել իր վերափոխիչ դերը: Այն պետք է նպաստեր ժողովուրդների ինքնագիտակցության զարգացմանը, հրանց կուլտուր-կրթական և տնտեսական առաջընթացին: Եվրոպական լուսավորության առաջավոր գաղափարները սկսում են ներթափանցել Արևելք, տեղաշարժելով հնօրյա ու ավանդական հասարակական միտքը, նպաստելով արևելքի երկրների կուլտուր-լուսավորական շարժմանը:

Եվրոպական լուսավորիչների հաջադքները բարերար ներգործություն են ունենում արևելյան երկրների առաջավոր մտավորականության վրա: Այդ իմաստով նշանակալից է հայկական իրականության և հատկապես հնդկահայ գաղթօջախի առնչությունները XVIII դարի լուսավորական շարժման հետ:

XVIII դարի վերջում և XIX դարի սկզբում տեղի են ունենում հնդկական լուսավորական, ազգային-ազատագրական շարժումները, հնդկ ժողովրդի սպաստամբությունները օտար նվաճողների դեմ:

Հնդկաստանի տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքը բնութագրելիս չի կարելի չնշել այս շրջանում եվրոպական երկրների, հատկապես անգլիական կապիտալի բերած ծանր աղետների մասին: Եվրոպական կապիտալը շատ բան էր փոխել հնդկական կյանքում թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական և թե՛ մշակութային տեսակետից³: Ուստի պարզ է, թե ինչու պետք է երկիր ներթափանցեին նաև եվրոպական առաջավոր գաղափարները հենց նույն անգլիացի գործիչների և երիտասարդ հնդկ մտավորականության միջոցով ու նպաստեին լուսավորական գաղափարների տարածմանը:

«... Եվ համենայն դեպս անգլիական գաղափարները, գրականությունը և քաղաքական սովորույթները ներթերվեցին Հրեդ-

3 *Տե՛ս Нирендранатх Рай*, Бенгальская поэзия XIX—XX вв., М., 1963, стр. 18.

կաստան հատկապես շնորհիվ եռանդուն, աշխատասեր անգլիացիների ջանքերի, որոնք իրենց շուրջ համախմբեցին էնտոզիակամով լի հնդկական ուսանողական խմբեր»⁴:

Դարասկզբի հնդկական գրականության հիմնական թեմաներից մեկը ազգային-ազատագրական շարժումների գաղափարն է: Հնդկական լուսավորիչները մարտի են կոչում ժողովրդին՝ թոթափելու գաղութակալության լուծը⁵:

Այս շրջանում է սկզբնավորվում հնդկական պարբերական մամուլը, որի հիմնադիրներն են հնդիկ լուսավորիչներ Ռամ Մոխան Ռաշ, Յուգալկիշար Շկուլը և ուրիշներ: Ռուս արևելագետները միանգամայն իրավացի հնդկական լուսավորականության սկիզբը համարում են XIX դարի առաջին քառորդը:

«Ավելի տրամաբանական կլիներ լուսավորականության շրջանն սկսել ոչ թե 60-ական թվականներից..., այլ XIX դարի ըսկզբներից: Բանը նրանում է, որ հնդկական նոր գրականության սկզբնավորումը համընկնում է Հնդկաստանում կապիտալիստական հարաբերությունների առաջացման ու զարգացման հետ»⁶:

Հնդկական լուսավորականության արտահայտություններից մեկն է երկրում ծայր առած կրթական շարժումը, որը թեև դանդաղ, բայց զգալի չափով զարկ է տվել նոր գաղափարների տարածմանը. «Չնայած դա սահմանափակ և աղճատված գրականությունն էր, բայց այն բացեց հնդիկների հոգին նոր գաղափարների և դիմափկ մտքերի ընկալման համար»⁷:

Սոցիալ-քաղաքական այս պայմաններում տնտեսական և մշակութային առանձնահատուկ իրադարձություններ են տեղի ու-

4 Дж. Неру, Открытие Индии, М., 1955, стр. 334.

5 S. M. Hirenadaranath Ray, Бенгальская поэзия XIX—XX вв., М., 1963, стр. 19.

6 Н. М. Сазанова, Замечание по периодизации литературы хинди, журнал «Народы Азии и Африки», 1963, № 5, стр. 144.

7 Дж. Неру, Открытие Индии, М., 1955, стр. 334.

նենում ինչպես հայկական բնօրրանում, այնպես էլ հայ գաղթօջախներում:

Մեզ հետաքրքրող ժամանակահատվածում աչքի են ընկնում Ռուսաստանի և Անդրկովկասի հայաշատ կենտրոնները՝ Մոսկվա, Աստրախան, Նոր Նախիջևան, Թիֆլիս և արևելյան ու եվրոպական երկրներում հայկական գաղութները՝ Կ. Պոլիս, Վենետիկ, Իրան, Հնդկաստան և այլն, որոնք մեծ դեր են խաղացել հայ մշակույթի, հայերի ազգային գիտակցության զարթոնքի և ազգային-ազատագրական շարժումների գործում: Գաղթօջախներում ալկի վաղ, բուն բնաշխարհում ստաջացած բուրժուական հարաբերությունները նպաստել են հայ մշակույթի զարգացմանը հենց սովյալ վայրերում:

XVIII դարի վերջին քստորդից սկսած զգալի կերպով զարգանում է տպագրությունը, բացվում են դպրոցներ, սկզբնավորվում է հայ պարբերական մամուլը. գործոններ, որոնք նպաստում են նաև գեղարվեստական գրականության զարգացմանը: Հայ տպագրության կենտրոններից՝ Վենետիկ (1512), Պոլիս (1567), Նոր Զոռլա (1640), Ամստերդամ (1660), ավելանում են նոր կենտրոններ՝ Զմյուռնիա (1762), Էջմիածին (1771), Մադրաս (1772), Տրիեստ (1775), Պետերբուրգ (1780), Նոր Նախիջևան (1789), Կալկաթա և Աստրախան (1796), Վիեննա (1811), Մոսկվա (1820), Շուշի (1827), Թիֆլիս (1833), Վարսագ (1854):

Նախորդ դարերում տպագրված կրոնական-եկեղեցական բրնույթի գրքերի փոխարեն, XVIII դարի երկրորդ կեսից սկսած, հասարակական միանգամայն նոր պահանջների թելադրանքով տպագրվում են պատմագրական, աշխարհագրական-տեղագրական, լեզվագիտական, գիտական, գեղարվեստական գրքեր: Հրատարակվում են ոչ միայն ալեմարան, Աստվածաշունչ, աղոթագրքեր, այլ նաև Գրիգոր Նարեկացու, Մխիթար Գոշի, Ներսես Շնորհալու, Եզնիկ Կողբացու, Դավիթ Անհատլի, Մովսես Խորենացու, Եղիշեի, Փավստոս Բուզանդի, Հազար Փարպեցու և շատ ուրիշների երկերը:

Հայկական գաղթօջախների կուլտուր-լուսավորական կյանքը ցույց տալու համար չի կարելի համառոտակի չթվարկել դըպրոցները, կրթական կենտրոնները, մամուլը: Մոսկվայում Լազարյան ճեմարանը հիմնադրվել էր 1815 թ., 1810 թ. Աստրախանում գործում էր Աղաբաբյան դպրոցը: Ներսէս Աշտարակեցու գործադրած համառ ջանքերի շնորհիվ 1813 թ. Էջմիածնում գործել է սկսել ժառանգավորաց դպրոցը, իսկ 1824 թ. Թիֆլիսում բացվում է Ներսիսյան դպրոցը:

XVIII դարի վերջերին թաղային վարժարաններ են հիմնվում Կ. Պոլսում: 1838 թ. Կ. Պոլսում հիմնվում է Ոսկոտարի ճեմարանը: Մխիթարյանների հիմնադրած Մուրադյան (1834) և Ռաֆայելյան (1836) վարժարանները նույնպես կարևոր դեր են կատարել հայ մշակույթի զարգացման գործում: Զմյուռնիայում 1775 թվականից գործող Մեսրոպյան վարժարանը XIX դարի 40-ական թվականներին եղել է աչդ գաղութի մտավոր կյանքի կենտրոնը: Աշակերտության ուժերով թատերական ներկայացումներ են կազմակերպվում Վեներտիկի Մխիթարյանների, Պոլսի, Թիֆլիսի, Մոսկվայի, Նոր Նախիջևանի դպրոցներում:

Քաղաքական և տնտեսական նոր հարաբերությունների արդյունք էր ստանձին կրթական, լուսավորական ընկերությունների հանդես գալը: Տակավին 1781 թ. Կ. Պոլսում հիմնվել է «Լուսավորչաց եղբայրություն» ընկերությունը, հետագայում «Արշարունյաց» (1812), «Ուսումնական» (1841), «Համագգյաց» (1846), «Արամյան» (1846), «Նարեկյան» (1846) ընկերությունները և «Վերածնության թանգարանը» (1847): Զմյուռնիայի «Այունյաց ընկերությունը» հիմնվել է 1841 թվականին:



Հայ գաղթօջախների շարքում ժամանակին կարևոր դեր է կատարել հնդկահայ գաղութը: Աչդ գաղութն իր տնտեսական ծաղկման շրջանն ապրել է XVII դարում և XVIII դարի առաջին կեսին: Մինչդեռ XVIII դարի երկրորդ կեսից սկսած, երբ եվրոպական, հատկապես անգլիական կապիտալը սկսում է ավելի ա-

րագ մուտք գործել Հնդկաստան, հայ առևտրական կապիտալը իր դիրքերը զիջում է ու կախման մեջ ընկնում նրանից:

«Կալկաթայի հիմնադրութենեն (1690) մինչև 1790, ամբողջ դարու մը տևողությունը, այն շրջանն է, ուր հայ գաղութը իր գոյության նյութական և բարոյական հիմերը կամրապնդե առևտրական գործունեության փայլուն հաջողություններով...»⁸:

Նախորդ հարյուրամյակում հայ առևտրականները գործուն մասնակցություն են ունեցել Հնդկաստանի քաղաքական, տնտեսական, մշակութային ու ռազմական կյանքին: Հայտնի են այնպիսի գործիչներ, ինչպիսիք են Խոջա Իսրայել Սարհադը, Մարգար Ծենենցը և Խոջա Պետրոս Հարությունը, ռազմական գործիչներ՝ Գորգին խանը, Հակոբ Պետրոսը, բանաստեղծներ՝ Միրզա Զուլ Բուրնայը և Սարմադը⁹:

1763 թ. Բենգալիայում անգլիացիների դեմ տեղի ունեցած պատերազմում հրամանատարական պաշտոններ են զբաղեցրել նաև հայերը, որոնց մշակած ռազմական ծրագրերով հնդիկ զորքերը հաջողությամբ վարել են մարտը:

«Անգլիական վաճառականները XVII դարի առաջին կեսին գալով Հնդկաստան, մեծ հիասթափությամբ տեսան, որ հայերը, Հնդկաստանում արտասահմանյան առևտրի պիոներները, հիանալի տեղավորվել են այդ երկրում և վարում են իրենց կարևոր և հատկապես շահավետ էքսպորտային առևտուրը Եգիպտոսի, Հաբեշտանի, Թուրքիայի և Միջերկրականի ծովային ճախարհագրությունների, գլխավորապես Վենետիկի և Լիվոռնոյի հետ: Արաբական առագաստանավերով նրանք կտրում էին ամբողջ Հնդկական օվկիանոսը և մուտք էին գործում Սումատրա, Ճավա, Ֆիլիպիններ և անգամ հեռավոր Չինաստան»¹⁰:

Հնդկաստանի էկոնոմիկայի անկման հետ անկում է ապրում նաև հայ առևտրական կապիտալը: Ասահմանափակվում են Հնդկաստանում ապրող ժողովուրդների իրավունքները: Այս շրջա-

8 Թ. Գուշակյան, *Հնդկահայեր. Երոսադեն, 1941, էջ 90*:

⁹ *Sh' u M. Seth, Armenians in India, Calcutta, 1937, p. VII*.

10 Նույն տեղում, էջ 227—228:

նում XVIII դարի վերջում, հնդկահայ գաղութում ավելի որոշակի է դրսևորվում ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսությունը. որքան ակներև էր դառնում անգլիացիների գաղութային տիրապետությունը, այնքան մարդկանց գիտակցության մեջ անում էր այդ տիրապետության դեմ պայքարելու անհրաժեշտության և անխուսափելիության միտքը:

Հնդկահայ գաղութի պատմության համար նշանակալից երկվոյք է 1772 թ. Մադրաս քաղաքում Հակոբ Ծահամիրյանի հիմնադրած տպարանը: Իր գոյության ավելի քան տասը տարիների ընթացքում տպարանը լույս է ընծայել 9 գիրք, որոնցից հայտնի են՝ «Նոր տետրակ, որ կոչի Յորդորակ» (1772), «Ռոդայք փառաց» (1773), «Տետրակ, որ կոչի նշառակ» (1783) և այլն:

Հնդկահայ, ինչպես նաև առհասարակ հայ մշակութային կյանքում մեծ դեր է կատարել առաջին պարբերականի հիմնադիր Հարություն Ծմալոնյանը: Նա իր հայացքներով թեև հեռու էր կանգնած Հ. Ծահամիրյանի ու Հ. Էմինի քարոզած ազգային-ազատագրական գաղափարներից, բայց իր գործունեությամբ կապվում էր հնդկահայ լուսավորիչների հետ:

Ծմալոնյանի հիմնած տպարանից 1789—1809 թթ. դուրս է եկել ավելի քան 20 գիրք, այդ թվում՝ «Բերականոթիւն Բաղդասար դարի» (1791), «Տաղարան փոքրիկ» (1791), «Գորոյկ երկրաչափական» (1792), «Բառգիրք փոքրիկ անգլիացոց լեզուէ» (1803), «Տետրակ, որ կոչի պատճառ», թարգմանություն պարսկերենից (1804), «Անցք կամ գործք» (1806) և այլն:

XIX դարի առաջին կեսին նոր թափ է ստանում հնդկահայ մշակութային ու գրական կյանքը: 1815 թ. Բոմբեյ քաղաքում հիմնադրվում է Օճանափոյան ընկերությունը, որի նպատակն էր զարկ տալ հնդկահայ գաղթօջախի մշակութային կյանքին: Այդ ընկերությունը ձեռք է բերում նաև տպարան: Օճանափոյան ընկերության մի մասնաճյուղ՝ «Իմաստախնդրյան ընկերություն» անունով, հիմնադրվում է 1820 թ. Կալկաթա քաղաքում: «Իմաստախնդրյան ընկերության» գործունեությունն ավելի բեղմնավոր է եղել: Ընկերությունը ձեռք է բերել տպարան, որտեղ լույս են տեսել մի շարք թարգմանական և ինքնուրույն գրքեր: Ընկերության նա-

խաճեղնությանը 1820 թ. հրատարակվում է հնդկահայ գաղթօջախի երկրորդ պարբերականը՝ «Հայելի Կալկաթեան» հանդեսը, որն իր ընդամենը մեկ տարվա գոյության ընթացքում կարևոր դեր է կատարում՝ տպագրելով հնդկահայ կյանքին վերաբերող նյութեր, ինչպես նաև թարգմանական և ինքնուրույն բանաստեղծություններ: «Հայելի Կալկաթեան»-ի էջերում է տպագրվել XIX դարի առաջին կեսի հայ քաղաքացիական պոեզիայի լավագույն նմուշներից մեկը՝ «Տէր, կեցո զհաշս» բանաստեղծությունը, որն իր ժամանակին արժանացել է Միքայել Նալբանդյանի բարձր գնահատականին: «Իմաստախնդրյան ընկերության» ջանքերով է 1821 թ. Կալկաթայում հիմնադրվել Հայոց մարդասիրական ճեմարանը, որը, իր գոյությունը պաշտպանելով մինչև այսօր, հնդկահայ մշակութային կյանքում կարևոր դեր է կատարել՝ կրթելով ու դաստիարակելով բազմաթիվ հայ պատանիների ու աղջիկների:

Մարդասիրական ճեմարանում 1822 թվականին հիմնադրվում է տպարան, որտեղից լույս են տեսնում մի շարք գրքեր:

Հնդկահայության կյանքում որոշ դեր է խաղացել թատրոնը: 1821—1822 թվականներից սկսած Կալկաթայում և Մադրասում բեմադրվել են կենցաղային կոմեդիաներ ու պատմական ողբերգություններ: Ուշագրավ է «Ծոռեմարան» պարբերականի խմբագիր Մարտիրոս Մկրտչյանի գրչին պատկանող «Խտրադիմայ դժբողութեան» կատակերգությունը, որը բեմադրվել է 20-ական թվականներին:

1821—1823 թվականներին Կալկաթայում հրատարակվող «Ծոռեմարան» պարբերականը որոշակի արձագանքում էր հնդկահայ գաղթօջախի հասարակական տարբեր շերտերի և հակադիր հոսանքների բախումներին, «Խեղճ մարդկանց» իրավունքների պաշտպանությունը, հասարակական գործերում նրանց ձայն տալու պահանջը, մեծատոնների և հոգևորականների կամայականությունների մերկացումը, խուլ բողոքը գաղութային ճնշման դեմ վկայում են, որ «Ծոռեմարանը» արտահայտում է հնդկահայ գաղութում ձևավորվող բուրժուական դեմոկրատիայի գաղափարախոսությունը¹¹:

¹¹ Տե՛ս Ա. Կարինյան, *Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. 1, 1956, էջ 239*:

Հնդկահայ բուրժուազիան, նրա առաջավոր մտավորականությունը, արտահայտելով ազգային-ազատագրական շարժման գաղափարը, այնուամենայնիվ տնտեսական քայքայման պատճառով աստիճանաբար հեռանում է 1770-ական թվականներին առաջացած ազատամտական գաղափարներից և վերցնում լիբերալ-սահայանդական ուղղություն:



XVIII դարի սկզբին Հայաստանում, Իսրայել Օրու և Դավիթ Բեկի ղեկավարությամբ, ծայր են ստնում ազգային-ազատագրական շարժումներ: Դարի երկրորդ կեսին, ուղղակի կապ պաշտպանելով հայկական բնաշխարհի հետ, Հնդկաստանի հայկական գաղութում ձևավորվում է ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսությունը, որն, ըստ էության, ելնում էր Ռուսաստանի օգնությամբ հայրենիքն ազատագրելու քաղաքական կողմնորոշումից:

Հնդկահայ լուսավորիչների համակրանքը Ռուսաստանի նրկատմամբ հայկական ազգային-ազատագրական շարժումների ընդհանուր ուղղության արտահայտություններից մեկն էր:

Հնդկահայ գործիչները լսելով Հայաստանի ազատագրման լուրը շնորհավորական նամակներ են հղում հայրենիք՝ Եփրեմ կաթողիկոսին ու Ներսես Աշտարակեցուն:

Սակայն կարճ ժամանակ անց, 30-ական թվականներին փոխում են դեպի Ռուսաստանն ունեցած իրենց վերաբերմունքը: Պատճառը, իհարկե, ոչ այնքան Անգլիայի ու Ռուսաստանի փոխհարաբերություններն էին, որոնք սրվել էին հատկապես այդ տարիներին, որքան ցարիզմի վարած քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ:

Հնդկահայ բուրժուազիան վաղուց իր հույսերը կապելով Ռուսաստանի հետ, նպատակ էր հետապնդում ազատագրել Հայաստանը, մինչդեռ ցարիզմը նույնպես վարում էր գաղութային քաղաքականություն:

Անդրկովկասը Ռուսաստանին միանալու պրոցեսն, ինչպես նկատել են ռուս պատմաբանները, ունեցել է երկու հակասական

կողմ. «...մեկը՝ դա համատուսական կապիտալիստական սխտե-
մի շրջանակներում ժողովուրդների տնտեսական մերձեցման
պրոգրեսիվ տեղեկեցն է, որը չի կարող չարագացնել բուրժուական
ազգերի ձևավորման պրոցեսը Ռուսաստանի ճնշված ժողովուրդնե-
րի մոտ, այդ պրոցեսի մյուս կողմը... ցարիզմի ազգայն-
գաղութային քաղաքականության «ռազմա-ֆեոդալական» մեթոդ-
ներն են, ցարիզմի, որը կողմնորոշվում էր դեպի ֆեոդալական-
ռեակցիոն տարրերը և արգելակում էր ծայրամասերի ճնշված ժո-
ղովուրդների արտադրողական ուժերի աճը, տնտեսական և կուլ-
տուրական զարգացումը»¹²:

Հնդկահայ բուրժուազիայի համար, անկասկած, պարզ էր
այս բոլորը: Եվ այդ պատճառով էլ, տեսնելով Հայաստանը Ռու-
սաստանին միանալու առաջավոր կողմը, Մ. Թադիսդյանը և
հնդկահայ գործիչները մինչև վերջը մնում են ռուսական կողմնո-
րոշման հետևորդներ, թեև միշտ էլ վերապահությամբ են խոսում
ցարիզմի մասին:

Հետևելով հնդկահայ բուրժուական մտավորականության ա-
ռաջավոր ներկայացուցիչներին, Մ. Թադիսդյանը մի կողմից հա-
յացքը դարձնում է դեպի եվրոպական կյանքն ու կուլտուրան, մյուս
կողմից՝ դեռ կառչած է հնին, ասիականին, որը և որոշ չափով
կաշկանդում է նրան ամբողջապես կանգնելու իր ժամանակի ա-
ռաջավոր գաղափարախոսության դիրքերում: Թադիսդյանն անց-
ման շրջանի մոածող էր: Նա իր առաջավոր հայացքներով հան-
դերձ մասամբ կապված էր հնին: «Թադիսդյանը հայ այն մտա-
վորականներից ու հասարակական գործիչներից էր, որոնց բնո-
րոշ է ֆեոդալա-կղերական մտայնությունից բուրժուական լուսա-
վորչական աշխարհըմբռնմանն անցնելու երկվությունը: Հիմնակա-
նում խորտակելով ֆեոդալա-կղերական պատկերացումների շղ-
թաները և բազմաթիվ հարցերում հանդես գալով լուսավորչական,
ժամանակի համար առաջավոր գաղափարներով, նա միաժամա-
նակ ցուցաբերում է անհետևողականություն և տարբեր խնդիրնե-

¹² Л. Максимов, О журнале «Вопросы истории», «Большевик»,
1952, № 13, стр. 62.

րում առավել կամ պակաս չափով մնում է կապված անցյալի մը-տածողության հետ»¹³։

Սոցիալ-քաղաքական այս պայմաններում առանձնահատուկ զարգացում է ապրում նաև հայ գեղարվեստական գրականությունը, որը կլասիցիզմից անցում էր կատարում դեպի ողորմանտիզմ։ Հրապարակ են գալիս հայ լուսավորիչներ Հ. Ալամդարյանը, Մ. Թադիսոյանը, Խ. Աբովյանը, Ստ. Նազարյանը և ուրիշներ, որոնք շարունակում ու զարգացնում են Հակոբ Ծափամիրյանի և Հովսեփ Էմինի գործը։

XVIII դարի 70—80-ական թվականներին ձևավորված հայ լուսավորական գաղափարախոսությունը ազգային-ազատագրական շարժումների բուն զարգացման շրջանի արդյունքն է։ Այդ գաղափարախոսությունն է արտահայտված Ծափամիրյանի՝ Մադրասում տպագրված «Նոր տնտրակ, որ կոչի Յորդորակ» (1772) և «Գիրք անուանեալ Որոգայթ փառաց» (1773) երկերում, որոնց մեջ արձագանք են գտել ֆրանսիական լուսավորիչների գաղափարները։

Հնդկահայ լուսավորիչների, անշուշտ նաև Թադիսոյանի համար գաղափարական մեծ ազդակ են հանդիսացել ոչ միայն եվրոպական լուսավորական միտքը և հայ ազգային-ազատագրական շարժումները, այլև Հնդկաստանի ու արևելքի մյուս երկրների ժողովուրդների հերոսամարտերը օտար նվաճողների դեմ։

XVIII դարի վերջի և XIX դարի սկզբի՝ հատկապես առաջին քառորդի, հայ գրականության տիրապետող ուղղությունը կլասիցիզմն է։

Պատմական հանգամանքների բերումով, կլասիցիզմի գրական ուղղությունը սկզբում զարգանում է ներփակ և կրոնական

¹³ Գ. Գրիգորյան, Մ. Թադիսոյանի աշխարհայացքի հիմնական գրքեր, «Տեղեկագիր» հասարակական գիտությունների, 1963, № 2, էջ 53։


ստացնությանը հազեցած և Ղազար կղզում՝ Մխիթարյան բանաստեղծների մոտ: Գաբրիել Ավետիքյանի, Ղուկաս Ինճիճյանի, Մկրտիչ Ավգերյանի, Մանուել Զախջախյանի, Նիհա Թովմաճանի, Արսեն Բագրատունու երկերում այս ուղղությունն ստացավ իր կոնկրետ պատմական բովանդակությունը, որն, իհարկե, տարբերվում էր եվրոպական կլասիցիզմից:

«Իրենց արծարծած լուսավորական, ազգային-ազատագրական գաղափարներով, համաշխարհային գրական-գեղարվեստական կուլտուրայի մի շարք հուշարձանների թարգմանությամբ և պոռպագանդայով հայկական կլասիցիզմի ներկայացուցիչները օբյեկտիվորեն նպաստեցին նոր էսթետիկական ըմբռնումների առաջացմանը և նրա գրական սկզբունքների աստիճանական հաղթանակին: Սակայն մյուս կողմից աշխարհայացքին ու ստեղծագործությանը հատուկ էին և կղերաաւխտական ըմբռնումներ, անցյալի արտապատմական իդեալականացում, հնացած գրական ձևերի պահպանողական սրբազործում, ժողովրդի համար անհասկանալի գրաբար լեզվի համառ պաշտպանություն»¹⁴:

Մխիթարյան բանաստեղծները չէին կարող բոլորովին հեռու մնալ դարաշրջանի հրամայական պահանջներից և այս կամ այն կերպ անդրադառնում էին դրանց: Մանուել Զախջախյանն, օրինակ, երգում էր սրբերին, մինչդեռ նրա երգերում արտացոլվում է նաև Հունաստանի ազգային-ազատագրական պայքարը թուրքական զավթիչների դեմ:

XVIII դարի վերջում և XIX դարի սկզբում հնդկահայ գրականության ուղղությունը նույնպես կլասիցիզմն է: Այստեղ սկիզբ է առնում ու զարգանում, որոշ շեղումներով հանդերձ, լուսավորական, ազգային-ազատագրական շարժման պոեզիան՝ սկսած «Տեոթակ որ կոչի Յորդորակից» մինչև XIX դարի առաջին կեսի գրականությունը: Ժամանակի ստաջավոր բուրժուական լուսավորական գաղափարներով է տոգորված «Խորադիմայ դժոդութեան» կոմեդիան: Գրական ուղղությունը աստիճանաբար թերվում է դեպի սեմտիմենտալիզմն ու ռոմանտիզմը:

14 Վ. Քերգիրաջյան, Հայկական կլասիցիզմը, Հայ նոր գրականության պատմություն, հ. 1, 1982, էջ 150:



«Պատմական անցումները հատկանշվում են բարդ ու հակասական որոնումներով. լինելով անցման շրջանի մտավոր գործիչներից մեկը, Թադիսդյանը, հիրավի, անձնավորեց ժամանակի հաշկական իրականության .գաղափարական հակասություններն ու բարդությունները: Հենց սա էր նրա անհատականության ամենաբնորոշ առանձնահատկությունը»¹⁵:

Անցման շրջանի, այսինքն՝ կլասիցիզմից դեպի ռոմանտիզմն անցնելու շրջանի մեր գրականության ողին մի բարդ պրոցես է եղել: Անցումը հարատևել է որոշ ժամանակ՝ XIX դարի տասական-քսանական թվականներից մինչև քառասնական թվականները: Անցման այդ շրթան իրար են համակցում Հ. Ալամդարյանն ու Մ. Թադիսդյանը:

15 Ս. Սարիեյան, *Հայկական ռոմանտիզմ, 1966, էջ 108*:

ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԸ

Մ. Թադիադյանի նախնիները շատ վաղուց Աշտարակի Կարբի գյուղից տեղափոխվել և բնակություն են հաստատել Երևանի Ձորագյուղի Կարբի թաղամասում: Այստեղ էլ, 1803 թ. հունվարի երկուսին, ծնվում է Մեսրոպը: Նա վաղ մանկությունից զրկվում է հորից և մնում տատի խնամքին: Երեխան ծնված օրից վատառողջ էր: Տատը որդեգրելով Մեսրոպին, ուխտում է նրան նվիրել էջմիածնին: Մի քանի տարի անց մահանում է նաև տատը, և երեխան բոլորովին անօգնական է մնում: Մայրը՝ Զարդարն, ամուսնացել էր և որպեսզի որդու ներկայությունը երկրորդ ամուսնու հարկի տակ անախորժությունների տեղիք չտար, նրան հանձնում է Մեսրոպի հորաքրոջ ամուսնուն՝ էջմիածնի վեհաբանի տա-
կառապետ Հովհաննես Ասկարյանին: Վերջինս 1812 թ. 9 տա-
րեկան Մեսրոպին տանում է Ներսես արքեպիսկոպոսի մոտ,
որի կարգադրությամբ երեխան ընդունվում է վանքի վերա-
կանգնված դպրոցը: Մեսրոպի առաջին ուսուցիչն էր Հով-
հաննես վարդապետ Բագրեանդացին: Մեսրոպը սրա մոտ
երկու տարի սրբապալում է ժամադիրք ու պաշմոս, երկու
տարի էլ սովորում է շարական:

Կաթողիկոս Եփրեմը թույլատրում է Մեսրոպին աշա-
կերտելու համբավավոր դիտնական և մանկավարժ Պողոս
Ղարադաղցուն: Վերջինս էջմիածին էր եկել կաթողիկոսի,
հրավերով:

Պողոս վարդապետի մոտ Մեսրոպը սովորում է քերա-
կանություն:

վարդապետի առողջութունն այնքան էլ լավ չէր և կսթողիկոսից թուլլովութիւնն է ստանում գնալու Մասիսի ստորոտին ընկած Ակոռիի¹ սուրբ Հակովբա վանքն՝ օգալիոխութեան: Էջմիածնից Երեւան գնալիս Պողոս վարդապետը ճանապարհին խոստում է պատմական և աշխարհագրական վայրերի մասին:

Երեւանից նրանք անցնում են Զրիկժ, Գառնի, Գեղարդ, ապա վերադառնում Քանաքեռ: Քանաքեռում հանդիպում են Սեանի վանքի միաբան Պողոս վարդապետին, որի հրավերով այցելութեան են գնում Սեանի վանքը: Այստեղ Մեսրոպն առիթ է ունենում մոտիկից ծանոթանալու Սեանի վանականների կյանքին, տեսնել լիճը և վայելել բնութեան այդ հրաշալիքի գեղեցկութիւնը:

Սեանից նրանք վերադառնում են Երեւան և գնում Խոր Վիրապ:

Այնուհետև Մեսրոպն իր ուսումը շարունակում է Ակոռիի վանքում: Երբ Պողոս վարդապետը քիչ կազդուրվում է, սկսում է պարապմունքը, բայց այս անգամ ոչ թե քերականութիւն, որն արդեն Մեսրոպը սովորել էր, այլ ճարտասանութիւն:

Ակոռիից վերադառնալով Էջմիածին, որոշ ժամանակ նա լքադվում է կոնդակների և Պետրոս եպիսկոպոս Բերդումյանի քարոզչրքի արտագրութեամբ: Սակայն շուտով նորից ճանապարհորդելու հնարավորութիւն է ստանում:

Արագածոտնի վանքերի խնամարկութիւնը հանձնված էր Կեսարացի Բաբսեղ եպիսկոպոսին, որը գնալու էր շրջելու վանքերը: Նա իր հետ պիտք է տաներ իր եղբորորդուն՝ Պողոս Գրիգորյանին, որը Մեսրոպի մոտիկ ընկերն էր: Սրա խնդրանքով Մեսրոպն էլ ընկերանում է նրանց: Ճանապարհին նրանք այցելում են Օշական: Պատանի Մեսրոպը խոր ակնածանքով է նշում Մաշտոցի շիրիմին իր տված այցը:

Այդ օրերին Կոստանդնուպոլսից Էջմիածին է գալիս

¹ Ակոռին հիմնովին ավերվել է 1840 թ. երկրաշարժից:

գիտնական Զաքարիա վարդապետը։ Նա Թիֆլիսի հայտնի Գուլասպյանց գերդաստանից էր սերում և իր գիտելիքներով չէր զիջում Ներսես Աշտարակեցուն։

Մեսրոպը աշակերտում է Զաքարիային։

1819 թ. դարնանը Սյունյաց աշխարհի նվիրակ է նշանակվում Դանիել հայխկոպոսը, որն իր հետ որպես փոքրավոր տանում է Մեսրոպին։ Այդ ճանապարհորդության ընթացքում Մեսրոպը հնարավորություն է ունենում ի մոտո՝ ծանոթանալու էջմիածնից մինչև Տաթև և Սյունյաց երկիրն ընկած Հայաստան աշխարհին։ Նա ոչ միայն գաղափար է կազմում երկրի աշխարհագրական դիրքի և տեղանքի մասին, այլև տեսնում է հայ աշխատավոր ժողովրդի շարքաշկյանքը, նրա ջերմհուանդ ցույցերը նվիրակին ընդունելու ժամանակ, նրա ծիսերը, սովորությունները, և, որ գլխավորն է, ծանոթանում հայոց լեզվի տարբեր բարբառներին, որոնցից և օրինակներ է բերում իր հիշատակարանում։

Տաթևի կողմերը 20 ամիս շրջելուց հետո, Դանիել հայխկոպոսի խումբը 1821 թվականի սեպտեմբերի 25-ին դալիս է Նախիջևան։ Այստեղ նրանք լսում են, որ Նիբեմ կաթողիկոսը մի քանի հայխկոպոսների հետ միասին անցնելու է Նախիջևանով։ էջմիածինը կրում էր պարտքերի տակ։

Արարատյան դաշտի բնակչությունը տներում էր պարսկական խաների ու սարգարների անընդմեջ հարկահանությունից։ Կաթողիկոսը գնում էր Շուշի՝ նյութական օգնություն ստանալու ակնկալությամբ։

Նախիջևանում Նիբեմ կաթողիկոսը Մեսրոպին չորս աստիճան և ուրար է տալիս ու իր մոտ նշանակում որպես կոնդակագիր։

Մեսրոպը մեկ ամիս մնալով Տաթևի վանքում 1821 թ. նոյեմբերի 3-ին կաթողիկոսի խմբի հետ գնում է Շուշի։

Այդ օրերին Շուշիում էին գտնվում Հովսեփ վարդապետ Խմաստասերը և Պողոս վարդապետ Ղարադաղցին, որոնց Շուշիի Թառումյանց, Հախումյանց, Զալալյանց և ուրիշ հա-

ըուստ գերդաստաններ հրավիրել էին իրենց երեխաների հետ պարապելու համար:

Մեսրոպն այստեղ Հովսեփ Իմաստասերի մոտ սովորում է տրամաբանութուն:

Արցախի մի բանի վայրերով անցնելով, Գյուլիստանում մեկիք Հովսեփի մոտ մեկ ամիս հյուր մնալուց հետո, կաթողիկոսն իր խմբով գալիս է Հաղպատի վանքը՝ ձմեռելու: Այդ օրերին Հաղպատ են գալիս Ֆրանսիայում Պարսկաստանի ղեկավար Դավիթ Մատուրյանը և Հնդկաստանում էջմիածնի նվիրակ Թովմաս վարդապետը:

Առաջինը շատ կրթված մարդ էր: Նա հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում լուսավորված Եվրոպայի, Փարիզի հրաշալիքների մասին: Մեսրոպն անհապ ուշադրություն ցուցնում է նրան:

Երկրորդը պատմում է Հնդկաստանի, հնդկահայ մեծատունների և շատ այլ բաների մասին:

Մեսրոպը հրապուրվում է այդ ամենով: Հեռատես երիտասարդն զգում է, որ Հաղպատում, տգետ վանականների շրջապատում, ինքն անկարող է ձևոք բերել այն, ինչ իրեն հարկավոր է: Նա թախանձում է Եփրեմ կաթողիկոսին, որ արձակի հոգևոր կոչումից և ուղարկի արտասահման՝ կրթություն: Սակայն Եփրեմը մերժում է:

Տեսնելով, որ անօգուտ են իր թախանձանքները, Մեսրոպը խնդրում է կաթողիկոսին, որ գոնե սղատ արձակի իրեն. ի վերջո Մեսրոպն ստանում է կաթողիկոսի հավանությունը և 1823 թ. դարնանը հեռանում վանքից:

Նա Հաղպատի վանքից դուրս է գալիս իր հետ ունենալով մոր պարգևած «Աստվածաշունչը», նախիջևանցի Պետրոս վարդապետ Բերդումյանի «Աստվածամանությունը», որ ընդօրինակել էր իր ձեռքով և 17 ոխալ պարսկական փող:

Տաթևում Մարտիրոս եպիսկոպոսը շատ է հորդորում Մեսրոպին մնալ վանքում՝ խոստանալով հավաքել աշակերտներ և նրան հանձնել մեծ Անապատը իբրև վարժարան՝ շրջակա գյուղերի մանուկներին ուսուցանելու համար:

— Ես ինքս պիտը ունեմ ուսանելու, — պատասխանում է Մեսրոպը:

Նախիջևանում 15 օր մնալուց հետո, Մեսրոպն ստիպված հրաժարվում է հիվրոպա գնալու մտադրությունից և ուղևորվում Իրան, այնտեղից էլ՝ Հնդկաստան:

Մ. Թաղիադյանի մանկության և ուսումնառության առաջին շրջանի մասին եղած ամենահիմնական և հավաստի աղբյուրը իր «Ճանապարհորդություն ի Հայաստան»-ն է: Նրա կյանքի և գործունեության հետագա շրջանի մասին նման լիարժեք աղբյուր չկա, սակայն այդ բացը լրացվում է արխիվային առանձին փաստաթղթերի, «Աղգասեր» և «Այդասեր Արարատյան» հանդեսներում որոշ առիթներով նրա կենսագրության մասին լույս տեսած առանձին գրվագների, մի շարք հայ բանասերների ու պատմաբանների աշխատությունների և օտար լեզվով որոշ աղբյուրների միջոցով:

Նրա կենսագրության այս շրջանի վերաբերյալ մի էջ տնտեսվել է հայ բանասիրության մեջ: Դա Ն. Զուլալյում Թաղիադյանի 1823 թ. ուսուցչությամբ զբաղվելու փաստն է:

1858 թ. հոկտեմբերի 16-ին Նոր Զուլալից պրած նամակում Մեսրոպ Սեթյանը Հ. Մկրյանին հայտնում է, որ առաջին անգամ Հնդկաստան մեկնելիս Թաղիադյանը 1823 թ. դնացել է նախ Նոր Զուլա, ուր իջևանել է Սուրբ Ամենափրկիչ վանքում և 3—4 ամիս զբաղվել ուսուցչությամբ այն պայմանով, որ յուրաքանչյուր աշակերտ մի շնչին դումար տա. բայց ջուղայեցիք իրենց խոստումը չեն կատարել:

ԿԱԼԿԱԹԱՅԻ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Մ. Թաղիադյանը Նոր Զուլալից գնում է Բուշիր և այնտեղից էլ՝ 1824 թ. սկզբին, անցնում Հնդկաստան: Հընդկաստանը մեծ դեր է խաղացել Թաղիադյանի կյանքում: Սկզբում նա գնացել է Կալկաթա և ապա տեղեկանալով, որ էջմիածնի նվիրակ Թովմաս վարդապետը գտնվում է Դաքա ջաղաքում, գնում է նրա մոտ և մնում շուրջ մեկ տարի: Դա-

բայում Երուսաղեմի նվիրակ Աբրահամ Բյուրականցու մոտ պաշտոնավարել է որպես սարկավադ:

1825 թ. Թաղիադյանը Թովմաս վարդապետի և Աբրահամ Բյուրականցու հետ տեղափոխվում է Կալկաթա:

XIX դարի 20-ական թվականների սկզբից Կալկաթայում արդեն գործում էր Հայոց մարդասիրական ճեմարանը: Ճեմարանի ուսկույր և հայոց լեզվի ուսուցիչ, հնդկահայ գիտնական Հովհաննես Ավդալյանը Թաղիադյանին ընդունում է դպրոցում որպես հայոց լեզվի ուսուցիչ:

Ուսումնատեղն էր Երուսաղեմի հանդիսա շի մոտ: Նա հույսը դնում է, անշուշտ, հնդկահայ մեծատունների վրա, բայց նրա հույսերը հօգս են ցնդում: Նրան չի գոհացնում իր վիճակը: Եվ ահա մի գեղեցիկ պատահույթով նոր լույս է գուռ է բացում նրա առջև:

Մեսրոպի՝ Դաքայում գտնված ժամանակ, այնտեղ է գալիս Կալկաթայում անգլիական եպիսկոպոսական ճեմարանի ուսկույր Ռիչնալդ Հիրբը: Պողոս և Աբրահամ վարդապետների հրավերով Հիրբը այցելում է հայոց եկեղեցին և նրանց միջև ստեղծվում են սերտ կապեր:

Դաքայում ստեղծված բարեկամությունը Աբրահամ Բյուրականցու և Ռիչնալդ Հիրբի միջև ավելի է խորանում Կալկաթայում: Թաղիադյանը օգտվելով առիթից թախանձագին խնդրում է Աբրահամ Բյուրականցուն միջնորդել, որպեսզի ինքն ընդունվի անգլիական եպիսկոպոսական ճեմարան: Մինչդեռ Բյուրականցին Թաղիադյանի հետ այդ հույսեր է կապում: Նրա նպատակն էր Թաղիադյանին իր հետ տանել Երուսաղեմ, բայց տեսնելով երիտասարդի ուսման բուռն ձգտումը և այն, որ Երուսաղեմում իրենց հարկավոր է եվրոպական լեզուներ իմացող մարդ, համաձայնվում է և խնդրում ուսկույր Ռիչնալդ Հիրբին նրան ընդունելու ճեմարան: Հիրբը, խախտելով ճեմարանի կանոնադրությունը, ըստ որի չափահաս աշակերտներ չէին ընդունվում, Թաղիադյանին ընդունում է ճեմարան և պահում իր ծախքով:

1826 թ. փետրվարի 12-ին Թաղիադյանն ընդունվում է Կալկաթայի անգլիական եպիսկոպոսական ճեմարանը։ Անշուշտ ճեմարանն ընդունվելու համար միջնորդող Աբրահամ Բյուրականցին և ընդունող Ռիչնալդ Հիբբը ակնկալում էին, որ իրենք հետագայում կունենան կրթված, գիտելիքներով հարուստ մի վարդապետ, բայց այլ էին Թաղիադյանի ծրագրերը։ Ճեմարանում նա հնարավորություն է ունենում ի մոտո շփվել եվրոպական գրականության, փիլիսոփայության և արվեստի հետ։ Նա սովորում է լատիներեն, հունարեն, պարսկերեն ու անգլերեն։ Բնագրերից կարդում է Հոմերոսի, Շեքսպիրի, Բայրոնի, Ֆիրդուսու, Սաադիի և շատ ուրիշների ստեղծագործությունները։ Լեզուներ արագ յուրացնելու ընդունակությամբ Թաղիադյանը իր վրա է հրավիրում ռեկտորի և ճեմարանի դասախոսների ուշադրությունը, վայելում նրանց սերն ու հարգանքը։

1827 թ. մեռնում է Ռ. Հիբբը։ Թաղիադյանը 1828 թ. անգլերենից թարգմանում է նրա «Պաղեստին» պոեմը, կցելով մի առաջաբան, ուր մանրամասն նկարագրում է իր սովմնառության շրջանը Հնդկաստանում։

Հաջորդ տարին Թաղիադյանը լատիներենից թարգմանում և եպիսկոպոսական ճեմարանի տպարանում լույս է ընծայում Հոգոն Գրովտիոսի «Ճշմարտության քրիստոսական հաւատոյ» գիրքը, ավելացնելով մանրամասն ծանոթագրություններ ու հավելվածներ։ 1830 թ. նույն տպարանում լույս է տեսնում Ռիչնալդ Հիբբի «Պաղեստին» պոեմը։ Երկուսի թարգմանությունն էլ գրաբար էր։ Մատենադարանում պահվող վերոհիշյալ փաստաթղթի մեջ Թաղիադյանը թվարկում է նաև մի քանի այլ թարգմանություններ հունարենից, պարսկերենից, անգլերենից, ինչպես նաև հայերենից անգլերեն, որ կատարել էր եպիսկոպոսական ճեմարանում սովորելու տարիներին²։

Միսրոպն ուսանել է մի այնպիսի ժամանակ, երբ իր

2 Մատենադարան, Աշ. Հովհաննիսյանի ֆ., Թղթ. 284, վավ. 4։

հայրենիքը պատերազմական գործողությունների թատերա-
բեմ էր: Ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմ-
ների և Արեւելյան Հայաստանը պարսից բռնակալական լը-
ծից աղատագրվելու լուրը հասնում է Հնդկաստան: Հնդկա-
հայերը ցնծությամբ են ընդունում հայրենի երկրի ազատու-
թյան լուրը, իսկ Մ. Թաղիադյանը իր ողջույնի նամակն է
ուղարկում Հայաստան՝ երեանցիներին: Նամակում գրում
է. «Աչքներդ լույս, որ մեր քաղցր աշխարհքն պարսից դառն
չարչարանքիցն ազատվեց, քրիստոնեի տերության ներքո
ընկավ: Փա՛ռք բարերարին աստծո, որ այսուհետեւ ավել
նեղություն չիք ունենալեց, ազատ քաղաքի քաղաքացի պի-
տիր անվանիք, ձեր ազգասիրության՝ իմաստասիրության
լուրն և արվեստից հառաջագիմությունն բոլոր Աշխարհ պի-
տիր տարածվին»:

Նամակում Թաղիադյանը, անսահման ուրախություն
հայտնելով Հայաստանի ազատագրման առթիվ, իր պատ-
րաստակամությունն է հայտնում վերադառնալու և ծառայելու
Ժողովրդին:

Թաղիադյանը վերջացնում է հետևյալ խոսքերով. «Ահա
էսա իմ ցանկությունս իմ քաղցր աշխարհիս համար, հի՞հ
որ հաճելի կլինի վերն գրածիս համաձայնիլ և կատարել, ու-
րեմն հեշտ է, մենք հիմն կդնենք և աստված կշինի. և ես
ուրախ կլինեմ ապրիլ ձեզ համար՝ և մեռնիլ ձեզ համար»³,

Հնդկահայ առաջավոր խավերի կողմից Հայաստանի
ազատագրման առթիվ կաղմակերպված Ժողովում Թաղիադ-
յանը արտասանում է մի սքանչելի ու հայրենասիրական
ճառ, որտեղ բնութագրում է պատմական աչդ խոշոր իրա-
դարձության կարեորությունը հայ Ժողովրդի կյանքում: Հա-
մեմատելով Արշակունյաց դինաստիայի ժամանակ հղած
Հայաստանի վիճակի հետ և նշելով Ռուսաստանի դերը, նա
թախանձադին դիմում է հնդկահայերին, ոչինչ չխնայել

3 Հ. Մկրյան, Կենսագրություն Մ. Դ. Թաղիադյան, Թիֆլիս, 1886,
էջ 241:

հայրենիքը՝ Հայաստանը ծաղկեցնելու և լուսավորելու համար⁴:

ԷԶՄԻԱՄԵՆՈՒՄ:

Կալկաթայում ավարտելով անգլիական եպիսկոպոսական ճեմարանը, Թադիադյանը պատրաստվում էր վերադառնալ հայրենիք: Լսելով Մ. Թադիադյանի՝ ճեմարանն ավարտելու լուրը, 1831 թ. մայիսի 10-ին, նոր Զուղայի հասարակության անունից, Հակոբոս վարդապետը, տասը քուհանա և տասներկու աշխարհական մի հրավեր հն ուղարկում նրան և խնդրում գալ նոր Զուղա ու հանձն առնել ջուղայեցի երեխաների դաստիարակության գործը:

Ընդունելով ջուղայեցիների հրավերը, Թադիադյանը 1831 թ. հունիսին հասնում է նոր Զուղա և նույն թվականի հուլիսի 1-ին դպրոցում սկսում է իր պարապմունքները: Սակայն հրկար չի մնում այստեղ, ջուղայեցիները չեն կարողանում ապահովել նրա վարձը, որով և երիտասարդ ուսուցիչը, որն իր սուղ միջոցներն անգամ տրամադրել էր դպրոցին, ստիպված է լինում թողնել նոր Զուղան և ճանապարհվել Հայաստան: Նա էջմիածին է հասնում 1831 թ. նոյեմբերի 8-ին:

Սալլանթյանի՝ հաշատուր Աբովյանին գրած նամակներից մեկում կարդում ենք. «Մեսրոպ Թադիադյանը եկել է Հնդկաստանից և իր հետ բերել է վեց բեռ գրականութուն, տպարան և դրամ, մի ոմն բարերարի օգնությամբ երևանում հայոց դպրոց հիմնելու համար»⁵:

Իսկ Մսեր Մսերյանը Թիֆլիսից նույնպես Աբովյանին գրում է. «Մեսրոպ Թադիադյանը, որի մասին գուցե լսած լինեք, գալով Հնդկաստանից, ջանք է դնում մի դպրոց բանալու Վաղարշապատի ավերակներում՝ հայրենիքի որդինե-

⁴ Տե՛ս «Ցուցակ վասն յամի տեառն 1829», Կալկաթա, 1829:

⁵ Ռ. Նաճումյան, Մ. Թադիադյան, Երևան, 1947, էջ 20:

րին լուսավորելու համար: Հրաշք կլինի եթե գլուխ դա, ինչպես ինքը հուշս ունի»⁶:

Խ. Աբովյանը խանդավառված հայրենիքից ստացած այս ուրախառիթ լուրերով, կաթողիկոս Կարբեցուն գրում է. «...Ժողովել զպիտանի անձինս, որք կարեն օժանդակել ստորանկեալ բազմութեան: Զմինն ահա ունիք ի ներկայութեան, զՄեսրոպ Թաղիադեանն, եղիցին ընկերք նորա բազում, բազում: Գանձք ձեր եղիցին որդիք Հայաստանի և լուսաւորութիւն նոցա ձեզ փառք անմեռանելի»⁷:

Սակայն ի՞նչ պայմաններում պետք է գործեր ժողովրդի լուսավորութեան գործին ծառայել Թաղիադեանը: Ի՞նչ հնարավորութիւններ կար նրա ծրագրերի իրագործման համար:

Վանքը լուսավորութեան օջախ դարձնելու նրա հույսերը հօգս են ցնդում:

Թաղիադեանը էջմիածնում սրուշ ժամանակ անգործ է մնում, հետո վանքում ստանձնում է ուսուցչի պաշտոն:

1832 թ. փետրվարի 13-ին Հովհաննես Շահխաթունյանը Մսեր Մսերյանին գրում է. «...Մեսրոպ Թաղիադեանց յետ մուտ գործնելոյ այսր յԵրեւան մնայր անգործ, այլ ի սկիզբն այսր ամի պաշտպանեալ ի նորոգ կաթողիկոսէ և իթ՝ կարգեցաւ ուսուցիչ սարկաւադաց և դպրաց սրբոյ Աթոռոյս, որոյ զղիարդն ծանուցից զկնի. յայտնի են Զեղ, սէ՛ր իմ, զի նորաձեռնութիւն հանդերձի և արտաքին շարժմունք չեն ինչ առ իս, և չհայլիմ յայնս ի խափան հարկաւորացն աղգի և հայրենեաց...»⁸:

Իսկ ապրիլի 9-ին գրում է. «Մեսրոպ Թաղիադեանց կարգեալն ուսուցիչ ոմանց գլերց Աթոռոյս և մանկանց սակաւուց գեղջս ըստ ինքնայօժար կամեցողութեանն խոս-

6 Ն. Շահագիգ, Դիւան Խ. Աբովյանի, Երեւան, 1940, էջ 274:

7 Նույն տեղում, էջ 38:

8 Արխատալես Եպ. Սեդրակյան, Հովհաննես Կոպ. Շահխաթունյանցի կենսագրութիւնը, ՍՊԲ, 1898, էջ 33:

տացեալ էր շատանալ յայսմ ամի զվարձս, բայց եթէ զկարեոր ինչ հարկաւորսն անձին իւրոյ ի կերէիաց և յըմպելեաց յԱթոռոյս:

Գասառու ժառանգաւորք Աթոռոյս սարկաւադ շորք, Գէորդ, Ալէքսան, Մովսէս և Գասպար. և դպիրք ի վարժարանէն վեց. այսոցիկ և ոմանց մանկանց գեղջս եկաց ուսուցիչ ի քերականութեան, յԱստուածաշնչի և ի Թեսաւորոսն մինչև ցվախճան քառասնաւորց պահոց, զի հասու լեալ ինքնին՝ եթէ անխոհեմ և անպատշաճ ասացուածք բանից իւրոց յինչ-ինչ նիւթս խորհրդոց եկեղեցւոյ, և առ երեւելի և հասարակ անձինս ոմանս, լսելի լինին հետզհետէ, ոյր վասն և ի վերջոյ, ունի կրել զնախատինս և զանպատութիւնս, մանաւանդ՝ զի՝ յուսայր եթէ զբերեալն ընդ իւր զգիրս տըւպագրութեան գործարանի ունին ընկալնու Սթոռայինք դըրամով կամ ալլով շահեցողութեամբ, որ ոչ յաջողեցաւ, զի Աթոռայինն կարի ընտիր գտաւ, քան զնորայն, ըստ քաջ վերահասութեան առն Յովակիմայ, եկելոյն այտի այսր յատուկ վասն կարգադրութեան գործարանին, յորում աշխատի աշտմ. և իցէ թէ նախ քան զմուտս աշնան տպեացի փոքրիկ զրքույկ ինչ, կամ օրացոյցն հանդերձեալ ամի. վասն որոյ նա ինքն Մեսրովր ի նոյն վախճանի քառասնորդաց պահոցն յոչեացն ի պահու գիշերային ժամերգութեան առաքէ զարկեղս գրենոյն և զայլ ինչս իւր յԵրեւան. և ինքն ևս առանց ումեք ի մեծամեծացն կամ ի փոքունց ազգելոյ գնայ անդր յերեւան անդարձ. և կայ անդէն ցարդ. ոյր վասն և տարածայնութիւնք ինչ ծաղեցան, և թերեւ ծագեացին. ալլ միայն զայս ինչ ունիմ յայտնել Ձերում հղբայրութեան, չվտահանալ երբէք առ նա բացահայտ գրութեամբ զխորհրդոյն, զի բաց յանհաստատ լինելոյն ի բանս և ի գործս, թերութիւնք ինչ ևս նշմարին տեսանին ի նմա հակառակ ողջախոհ մտաց, և անհամաձայնութիւն վարուց և բարուց նորին մերումս ընկերակցութեան՝ զորս իբրեւ խորհուրդ բացածանուցի ձեզ, և հետզհետէ սասուցութիւն այսոցիկ ևս բացաւիայլեացին այ-

լովքն հանդերձ. ուստի և հաւանական թուի կասկած ձեր
զնմանէ...»⁹:

Նպատակահարմար ենք համարում մեջ բերել Առաքել
Արարատյանի նամակի այս հատվածը ևս.

«Մեսրոպ Թաղիադեանց իբրև ղլիհառն առակաբանիւ
առասպելին ի Հնդկաստանէ տստի, ձայն բարձիւալ ուժգինո
գոշիւալ եկն հաս յէջմիածին, աղնդիւղաս ամբարտաւանու-
թեամբ իւրով մուկն շնչին ծնաւ ի նախատինս իւր»¹⁰:

Երբ ուշադիր նայում ենք Աբովյանի, Սալլանթյանի,
Մսերյանի, Շահխաթունյանի և Արարատյանի՝ Թաղիադյա-
նի մասին գրած նամակներին, պարզ է դառնում մեծ հու-
մանիստի իր ժողովրդին ծառայելու ծրագրերը:

Թաղիադյանի բերած վեց բեռ գրականությունը, տպա-
րանը և գրամբ ինքնին պարզում են այն մեծ խնդիրները, որ
նա գրել էր իր առաջ:

Բայց Շահխաթունյանի և Արարատյանի նամակները
պարզում են, թե ի՞նչ վիճակ է ստեղծվել Թաղիադյանի հա-
մար և թե ինչու է նա գործունեության անհաջող շրջան ասլ-
րիւ, մանավանդ, իրը ծանոթանում ենք նրա «Ցուցակ
ստացեալ տան աղխից իմոց...» բանաստեղծությանը:

Թաղիադյանը չկարողանալով տանել վանքում տիրող
բարքերը, 1832 թ. ապրիլի 1-ին գիշերով հեռանում է վան-
քից և գնում Երևան:

Այդ օրերին ղգալի տարածայնություններ կային վան-
քի միաբանների միջև. բանը հասել էր այնտեղ, որ միաբան-
ներից ութը՝ Շահխաթունյանցը և ուրիշներ, բացարձակ բո-
ւոք էին հասնել Կարբեցուն և պախարակել նրա գործու-
նեությունը: Իսկ Կարբեցին, որպեսդի Մեսրոպին հեռացնի
այդ խմբից և իր կողմը գրավի, բարյացակամ է տրամա-
դրվում նրա նկատմամբ:

⁹ Նույն տեղում, էջ 34—35:

¹⁰ Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Արով-
յանի ֆոնդ, № 22:

Այնուամենայնիւ, ինչ էլ որ պատահած լիներ Կարբե-
ցու և մշուս միաբանների միջև, Թաղիադջանը հանդես է գա-
լիս որպէս գործունշա, անպատամիտ ու առաջավոր գաղա-
փարներին տեր մարդ, որը դուր չէ. գալիս հետագեմ միա-
բաններին։ Այս մասին սովելի ճիշտ և որոշակի գաղափար
կատանանք. երբ հնարավոր կլինի ծանոթանալ Թաղիադջա-
նի օրագրերի՝, որոնք պահւում են Անթիլիասի կաթողիկո-
սարանի մատենադարանում։

1833 թ. հունիսի 1-ին մի դաշնագիր է կնքւում Թա-
ղիադջանի և Սինոդի միջև։ Այդ դաշնագրով Թաղիադջանը
հանձն էր առնում «զգործ գլխաւոր վարժապետութեան սըր-
բոյ աթոռոյն» ու Սինոդի քարտուղարությունը կամ ինչպէս
ինքն էր ասում՝ «խորհրդական գրագրութեան» պաշտոնը։

ՆՈՐ ԶՈՒՂԱՅՈՒՄ

Զգալով թույլ տված սխալը և ավելի կարող ուժ չգտնե-
լով իրենց երեսխաններին դաստիարակելու համար, հասարա-
կության պահանջով Նոր Զուղայի առաջնորդ Հովհաննես
Կոյսկոպոսը և Ամենափրկիչ վանքի չորս հոգաբարձուները
1834 թ. մարտի 16-ին դիմում են Հովհաննես կաթողիկոս
Կարբեցուն և խնդրում Մ. Թաղիադջանին ուղարկել Նոր
Զուղա որպէս դպրոցի ուսուցիչ ու տեսուչ։

Այդ օրերին Թաղիադջանը գտնւում էր Թիֆլիսում՝
Կովկասի կառավարչապետ բարոն Ռոզենի հրավերով, որի
համար պետք է թարգմանություններ կատարեր։

Հովհաննես կաթողիկոսը Թաղիադջանին Թիֆլիսից հա-
ն է կանչում և տալով 1834 թ. հունիսի 8-ի իր կոնդակը՝ ուղար-
կում է Նոր Զուղա։

Թաղիադջանը 1834 թ. հուլիսից մինչև 1836 թ. օգոստոս
ամիսը ընդմիջումներով է վարել իր պաշտոնը Նոր Զուղայի
դպրոցում։ Այդ մասին իմանում ենք Մեսրոպ Սեթյանի՝
Հովհաննես Մկրջանին ուղղած նամակից։ Սեթյանը գրում է,
որ դպրոցի հոգաբարձությունը՝ «գինեգործներ և լուսավո-

լուծքն հանդերձ. ուստի և հաւանական թուի կասկած ձեր
գնմանէ...»⁹:

Նպատակահարմար ենք համարում մեջ բերել Առաքել
Արարատյանի նամակի այս հատվածը ևս.

«Մեսրոպ Թաղիադեանց իբրև ղլհառն առակաբանեալ
առասպելին ի Հնդկաստանէ տստի, ձայն բարձեալ ուժգինո
գոչեալ եկն հաս յէջմիածին, աղնդիւղաս ամբարտաւանու-
թեամբ իւրով մուկն շնչին ծնաւ ի նախատինս իւր»¹⁰:

Երբ ուշադիր նայում ենք Աբովյանի, Սալլանթյանի,
Մսերյանի, Շահխաթունյանի և Արարատյանի՝ Թաղիադյա-
նի մասին գրած նամակներին, պարզ է դառնում մեծ հու-
մանիստի իր ժողովրդին ծառայելու ծրագրերը:

Թաղիադյանի բերած վեց բեռ գրականությունը, տպա-
րանը և գրամբ ինքնին պարզում են այն մեծ խնդիրները, որ
նա գրել էր իր առաջ:

Բայց Շահխաթունյանի և Արարատյանի նամակները
պարզում են, թե ի՞նչ վիճակ է ստեղծվել Թաղիադյանի հա-
մար և թե ինչու է նա գործունեության անհաջող շրջան ասլ-
րիւ, մանավանդ, իրը ծանոթանում ենք նրա «Ցուցակ
ստացեալ տան աղխից իմոց...» բանաստեղծությանը:

Թաղիադյանը չկարողանալով տանել վանքում տիրող
բարքերը, 1832 թ. ապրիլի 1-ին գիշերով հեռանում է վան-
քից և գնում Երևան:

Այդ օրերին ղգալի տարածայնություններ կային վան-
քի միաբանների միջև. բանը հասել էր այնտեղ, որ միաբան-
ներից ութը՝ Շահխաթունյանցը և ուրիշներ, բացարձակ բո-
ւոք էին հայտնել Կարբեցուն և պախարակել նրա գործու-
նեությունը: Իսկ Կարբեցին, որպեսզի Մեսրոպին հեռացնի
այդ խմբից և իր կողմը գրավի, բարյացակամ է տրամա-
դրվում նրա նկատմամբ:

⁹ Նույն տեղում, էջ 34—35:

¹⁰ Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Արով-
յանի ֆոնդ, № 22:

բությանը ոչ մոտ կանգնած մարդիկ», ձգձգում էր Թաղիադ-
յանի աշխատավարձը, և նա միշտ նյութական կարիքի մեջ
էր: Սեթյանի նամակից պարզվում է նաև մի հետաքրքիր
փաստ. «Գժտվելով հոգաբարձուների հետ, Իսֆահանում մի
մահամեղականացած վրացու որդու հետ պարապում էր անգ-
լերեն, որից և ինքը սովորում էր վրացերեն»¹¹:

Թաղիադյանը 1835 թ. սկզբին նոր Զուղայում ամուս-
նանում է ջուղայեցի վաճառական Մկրտիչ Սեթի դստեր՝
Թանգ խաթունի հետ, որին ինքը անվանում էր Թանգում:

Հետաքրքիր նամակ է պահպանվել Թանգ խաթունից,
գրված 1834 թ. նոյեմբերի 15-ին:

«Շատ և շատ շնորհակալ ամ, որ ինձ մտածել աս և դիր
աս գրել. շին կենաս, ապրի արեդ և միշտ պայծառ էլնիս, որ
դուշմանի սրտով չլինի: Էս քանի շարքն զոր կարողացա
գրեցի ձեր հրամանաց աշակերտ և իմ փոքրիկ եղբոր սիրե-
լի Հակոբի ձեռնով, քուրիկ Վարդխաթունիցն դադտնիկ և էն
գրիչն, որով գրեցի էս գիրն, որ լուսահոգի հայրս բերել էր
իր հետ Սուրաթուց էն էլ որպես մին պսակի հարգողի ու-
ղարկում ամ գիտնական վարժապետիդ, իմ սիրելի մորաքույր
Սիրվարդի ձեռնով, որ թեպետ և զարլիաթ չունի, ամեն ան-
գամ, երբ որ գործ կածես էդ գրիչն, կմտաբերես հրամանույց
խոնարհ և խղճով Թանգ խաթունին, որպես ևս միշտ պիտի
մտաբերեմ իմ գիտնական վարժապետին ամեն անգամ, երբ
որ տեսնեմ, իմ սիրուն մատանին իմ մատոս»¹²:

ԹԱՎՐԻԶՈՒՄ

Թողնելով նոր Զուղան, Մ. Թաղիադյանը 1836 թ. աշ-
նանը կնոջ հետ գնում է Թավրիզ: Թավրիզում անգլիական
հյուպատոսի միջնորդությամբ անգլերեն դասեր է տալիս
պարսկական արքայորդի Մելիք Ղասըմ Միրզային, ապա

¹¹ ԳԱԹ, ԹԱՖ, № 1060:

¹² Մ. Սեթյան, Գրիչ Ոսկեգրիչ Մ. Դ. Թաղիադյանց, Վենետիկ, 1926,
էջ 11—12:

նաև աշխատում տեղի հաջող գործըցում որպիս հայերեն, անգլերեն և պարսկերեն լեզուների ուսուցիչ:

Թավրիզից նոր Զուզա՝ իր կնոջ հարազատներին՝ Անթ-յաններին ուղարկած նամակում Թաղիադյանը գրում է. «ես ներկա Մելիք Ղասթմ Միրզա Շահգադի շնորհիվն ինգլիզի-վար, հայեվար և ֆարսեվար լեզվաց շկոլ ամ բացել տեղս, ամեն կողմից հայ և թուրք աշակերտներ են գուման, ուսում ասնում և իմ պատիվը օրեցօր ավելանում է»¹³:

Սակայն Թավրիզում էլ նրա վիճակը չի լավանում: Նա պարձյալ նշտվական խիստ կարիքի մեջ է լինում:

«Եթե Թաղիադյանը ճշտությամբ ստանար իր ուժիկը, նա երկար ժամանակ կը ծառայեր մանուկներին, բայց ցա-վելով պիտի ասեմ, որ շատ անգամ ուժիկը պակաս լինելու համար, նա ստիպված է լինում փոխ դրամ առնել իր ծա-նոթներից օրական պարենը հայթայթելու համար»¹⁴:

1837 թվականի նոյեմբերի 18-ին Թավրիզում մահա-նում է Թաղիադյանի կինը: Գրականության և արվեստի թանգարանում է պահվում նրա մի նամակի պատճենը, որ գրել է Թանգի հարազատներին: Այդ նամակից երևում է, թե որքան հուսահատ և ծանր օրեր է ապրել նա: Նրա «Եղե-րերգություն հօրհաս Թանգա Թաղիադյանց» պոեմը գրված է այդ թախծի և վշտի ազդեցության տակ:

Թաղիադյանն իր կնոջ զերեզմանի վրա սև մարմարից շինարարում է կոնկրետնում հետևյալ մակագրությամբ.

Թանգ Մեսրոպբայ Թաղիադեան

Օտար չիմոց հայրենիաց

Ի ծնանել զմարդ աշխարհի

Ծնույ ինքնին առ Աստուած:

(1837 ամի 18 նոյեմբերի)

13 Գրականության և արվեստի թանգարան, ԹԱՖ, № 10099 (այս դպրոցի հարցը բավական տարակուսանք է առաջացնում, արդյոք նկատի ունի՞ տեղի հայոց դպրոցը, թե՞ ինքն է հիմնադրել մի նոր դպրոց):

14 Գ. Շիրմազանյան, Ս. արք. Սաղունյանց, «Մասիս», 1875, № 1759:

Հուսահատված ու հուսալքված Բաղիադցանք, 1838 թ. փետրվարին, գալիս է Հայաստան:

Ինչ-որ աշխատանք ստանձնելու ցանկությամբ Բաղիադցանք զննում է էջմիածին՝ կաթողիկոսի մոտ: Բայց բն-դոնեկություն չգտնելով նաև այս անգամ, կրկին զտոնում է վատրանդի:

ՊՈԼՍՈՒՄ

Հնդկաստանը հեռու էր, նոր Զուղան ու Թավրիզը՝ անհյուրընկալ և գործելու համար միանգամայն անհարմար, հայրենի երկիրը չէր զնահատում իր գովակին և հալածական էր դարձրել, ուստի Բաղիադցանք որոշում է զնալ Պոլիս, ուր հասնում է 1838 թվականի մայիսին: Պոլսում Բաղիադցանք հանդիպում է Սաեփաննոս Աղալնի պատրիարքին, որի օգնությամբ ու միջնորդությամբ կեսարացի Սերվերյան Հովհաննես ամիրայի տանն ստանձնում է դատարակի պաշտոն:

Այդ օրերին Պոլսում ծայր էր առել էսնաֆների ուժեղ շարժում: Այս հանգամանքից աշխատում էին օգուտ քաղել բողոքական և կաթոլիկ միսիոներները: Նրանք նպատառվաբ պայմաններով զարդյուններ էին հիմնում Պոլսում, սրտնցում բնդգրկում էին էսնաֆների երեխաներին: Հակասություններն ալեկի էին սրվում էսնաֆների, ամիրաների և մեծ ժողովրդ-դականություն վալեղող Սաեփաննոս Աղալնի պատրիարքի միջև, որի հետևանքով ամիրաները հրապարակից հեռացնում են Սաեփաննոս Աղալնուն և նրա փոխարեն պատրիարք նըշանակում Հակոբ Սերոբյանին:

Կտակածից վեր է, որ Բաղիադցանք մասնակցել է այս պոչքարին և նրա համակրանքը միշտ էլ արհեստավորների ու աշխատավորության կողմն է եղել:

Ինչպես նոր Զուղայում, էջմիածնում, այնպես էլ Պոլսում նա աշխատել է բարեփոխումների կատարել՝ զարդա-կան կյանքում, ալեկի հեշտացնել երեխաների ուսուցման:

գործը և այլն: Այս հանգամանքը նույնպես առիթ է տվել ամիրաներին հետապնդելու Թաղիադջանին:

Թաղիադջանը որոշ ժամանակ մնում է անգործ և ապա մի հուլնի միջոցով ծանոթանում Պոլսում բողոքական միսիոներների պարագլուխ, Ռոբերտյան կոլեջի հիմնադիր Սալբա Համլինի հետ: Թաղիադջանը նրա համար կատարում է թարգմանություններ և կազմակերպում բողոքականների գրքերի վաճառքը: Չնայած նա միշտ էլ եղել է լուսավորչական՝ եկեղեցու հեռուորդ, սակայն հետագիմ ամիրաներն ու նրանց կողմնակից պատրիարքը բողոքականների մոտ Թաղիադջանի աշխատելու հանգամանքը պատրվակելով, նրան մեղադրել են բողոքականության մեջ, ձերբակալել և հանձնել են ցարական դեսպանին՝ Սիրիբ աքսորելու համար: Բողոքական Սալբա Համլինը շատ բարձր է գնահատել Թաղիադջանի հայրենասիրությունը: Իր «Իմ կյանքը և ժամանակները» (My life and times) գրքում Մեսրոպի մասին նա գրել է. «Թաղիադջանը կրթված, բարձր կուլտուրայի և առաջավոր գաղափարներով զինված մարդ էր և ինձ ծանոթ հայերի մեջ բոլորից շատ մտահոգվուղը հայ ժողովրդի կյանքով: Նա աշխատում էր ամեն ինչ անել հայ ժողովրդի լուսավորության համար: Նա մեծ հայրենասեր էր»¹⁵:

Համլինը ոչինչ չի ասում նրա կրոնական համոզումների մասին: Գրքում մեջ է բերված Թաղիադջանի՝ ձերբակալման և աքսորման առթիվ Համլինին գրած հեռագրալ նամակը.

«Սիրելի, սիրելի միտեր Համլին:

Իմ հոգին չափազանց տխուր է: Ես թուրքական շոգենավի վրա եմ, այն ուղևորվում է դեպի Տրապիզոն: Ռուսական դեսպանի հրամանով ես ուղարկվում եմ Սիրիբ: Գրաբերիս ավեր իմ հագուստները և այրեցեք իմ ձեռագրերը: Գրքերս նվիրում եմ առաքելության գրադարանին: Թող իմ

¹⁵ C. Hamlin, My life and times. Boston, 1893, p. 186.

բոլոր բույրերը և եղբայրներն աղսթեն ինձ համար, որովհետեւ ես շատ տխուր եմ:

Մ. Թաղիադջան»¹⁶:

Մ. Թաղիադջանի այս շրջանի գործունեության մասին, գրականության և արխիվային նյութերի պահպանության պատճառով, բանասերները նրա կապը բողոքական միախոնիքների հետ բացատրել են Մեսրոպի նյութական գծվարությանուններով: Իբր, Պոլսում անգործ մնալով, նա ստիպված է եղել ստանձնել գրավաճառի պարտականություն ու միաժամանակ գավառապետ է եղել: Բայց խորամուխ լինելով Թաղիադջանի ծրագրերի մեջ, պարզ են դառնում նրա հետաքրքիր նպատակները: Մ. Թաղիադջանը գրականության և գիտության համար ուներ շատ մեծ ծրագրեր: Պոլսում չըդառնելով ավելի հարմար հենարան, նա իր հույսերը կապում է բողոքական միախոնիքների հետ, բայց երբեք չհրաժարվելով և շնորհիվ լուսավորչական եկեղեցուց: Իհարկե, չպետք է մտածել, որ բողոքական միախոնիքները առաջադիմական մեծ գործունեություն էին ծավալել, թեև բաղաքական նպատակներով նրանց միջոցառումները մշակութային տեսակետից որոշ դեր կատարել են: Ուստի վերջին հանգամանքը ի նկատի ունենալով էր, որ նրանց միացավ նաև Թաղիադջանը: Թաղիադջանը միամտորեն ուզում էր օգտագործել նրանց հնարավորությունները: Բողոքական միախոնիքները Պոլսում հիմնել էին տպարան. Մ. Թաղիադջանը հույս ուներ այդ արպարանում տպագրել իր գործերը:

Դեռևս 1830 թվականին Կալկաթայում եղած ժամանակ, նա կախկոպոսական ճեմարանի տպարանում հրատարակել էր իր «Դիցաբանություն» աշխատությունը և պատրաստել մեկ ուրիշը՝ «Աստղաբաշխություն» վերնագրով:

1839 թ. նախքան ձերբակալվելը, նա Պոլսից կնոջ՝ Թանգումի հարսպատանիքին հագորդում է, որ շուտով ապա-

¹⁶ Նույն տեղում, էջ 187:

բանից դուրս կզան իր բանաստեղծությունների գիրքը և «Աստղարաշխությունը», մի քանի օրինակ էլ խոստանում էր ուղարկել նրանց: Բայց նրա ձերբակալությունը խանգարում է այդ գործին: Մի ալլ նամակում, 1839 թ. ապրիլի 11-ին Թաղիադյանը Պոլսից գրում է. «...Գրում ես թե Թանգումի գերեզմանի խաթրու յուր անվամբն մին գիր շինեմ, ոչ թե մին գիր ոտանավոր, ալլ էսա տարի ու կեսա ամեն օր իմ աշխատանքսս նորա վերա ոտանավորով գրքեր շինելս: Պատճառ մինչև հիմա ձեզ չուղարկելս նորանց օրինակն, էնա որ պիտի տպագրեմ և աչնպես ուղարկեմ:

Ես ձմեռս շատ նեղությամբ անցկացրի, անգործ, ծախսս շատ և անձամբ հիվանդ, էնքան որ պարտավորվեցի անցյալ ամսու 15-ին ամեն ունեցած բաներս լիչլում (աճուրդ—Ջ. Մ.) արարի և պատրաստվեցի, որ գնամ մյուս անգամ Հրն-դրատան, սիրելի Հովհաննեսին կարգալ տամ յուր քրոջ լալս արժանավոր գրքերս, բայց տեղվույս անդլիացի բարեկամ-ներս, իմ հիվանդության պատճառով, և եղանակի ցրտու-թյան, թույլ չտվին, յուրենք ինձ գործ տվեցին, որ կամ տեղս և տպարանի հետ էլ կապակցություն ունեմ, նոր մին գիրք էլ շինեցի, Աստղարաշխության վերա, և հիմա կտպվի, Աս-տուծով 4 կամ 5 ամսեն հա դուրս կուզա, և քեզ կուղարկեմ քանի հատ»¹⁷:

Միբիր արքայիկու նպատակով Թաղիադյանին ձերբա-կալում են ու Պոլսից դուրս բերում 1839 թ. մայիսի 11-ին: Համլինի ձեռնարկած բոլոր միջոցները՝ ապատելու Թաղիա-դյանին տպարդյուն էին անցել:

Քաջատեղյակ լինելով անդլերենին, Թաղիադյանը կա-րողանում է անդլիացի նախապետին հասկացնել իր վիճա-կը, որը և հնարավորություն է ստեղծում ծաղաված իջնել Տրապիզոնում: Այստեղ նա գիմում է պարսկական գետա-նին և հանդես գալով որպես արքայորդու ուսուցիչ, անցա-

¹⁷ ԴԱԼԵ, Թ. Աղատյանի ֆ., վավերագիր N 10099:

զիր է ստանում էրգրումի վրայով Պարսկաստան գնալու համար:

Գրականության և արվեստի թանգարանում, Թ. Աղա-
յանի ֆոնդում պահվում են մի քանի հատվածներ Քա-
ղիազյանի նամակներից, որոնք բնագրերից արտագրել է Ն.
Սեթյանը և ուղարկել Մկրչյանին: Դրանցից են. «Սիրելի, ես
Ստամբուլուց վեր կացա, եկա էրգրում էն մտքովն, որ պետք
է զննի Նրեան, բայց որովհետեւ տեղն պետք էր ձեռքս սաքս
կապած մենք առանց ազատորեն մին տեղս զուրս գտնա,
վասն որո մասլահաթ տեսա իմ տեղն պահված բարեկամնե-
րի հետ, որ կրկին Հնդստան վերագառնամ. ուստի ճանա-
պարհս թերեցի, Դիարբեքիրու վերնովն հուլիս 24-ումն հա-
սա ի Բաղդադ. Տեղիցս 6 օրեն ետ թե սաղ մնացի վերկա-
լեցամ ի Բասրա, և անդուստ գեպի Կալկաթա»: 1839 թ.
հոկտեմբերի 9-ին Բուշեռից Քանգի հարապատներին գրում
է. «...Ես Ստամբուլուց վեր կացա, ճանապարհին Արզնի
սասցած քաղաքումն զողերն մտան մեր բնակությունն, խըղ-
ճալուս (Քանդումի—Չ. Մ.) քամարն, արծաթե տմեն մանր
բաներն, հանդերձ մի քանի մատանիքով և մերձ 36 թումա-
նի արժույթյան տարան:

Բասրա 20 օր կացա, մեծ հիվանդությամբ հիվանդա-
ցա, մերձ ի մահ, այլ աստված վերստին կենդանացույց:
Երեք օր ետ Բուշերուց վեր կալեց ենք գեպի Կալկաթա»:

Մի այլ նամակում. «...Ստամբուլուց մայիսի վերջն վեր
կացա, շափարով հուլիսի վերջն հասա ի Բաղդադ»:

Սվաճյան Միհրանը 1891 թ. հունվարի 3-ին Բաղդադից
գրում է Մկրչյան Հովհաննեսին, որ 1839 թ. Մ. Քաղիազյա-
նը երեք տմիս մնացել է Բաղդադում¹⁸:

Մի նամակում Քաղիազյանն ասում է, որ ինքը 1839 թ.
հուլիսի վերջին հասել է Բաղդադ, իսկ 1839 թ. հոկտեմբերի
9-ի նամակում, որ գրել է Բուշեր հասած օրը, հայտնում է,

¹⁸ ԳԱԹ, Աղաայանի ֆոնդ, № 10367:

որ Բաղդադից հեկել է Բասրա և այնտեղ 20 օր մնալուց հետո՝ այսինքն սեպտեմբերի 20-ին հեկել Բուշեր:

ՆՈՐԻՅ ԿԱԼԿԱԹԱՅՈՒՄ

Մ. Թաղիադյանը Կալկաթա է հասնում 1839 թ. դեկտեմբեր ամսին, ուր երեք ամիս հնդկահայ հարուստ Հարություն Աբդարյանի տանը հյուրընկալվելուց հետո, վերստին մանում է անգլիական եպիսկոպոսական ճեմարան որպես տղարանի հայերեն բաժնի վարիչ: Այս տարիներին է, որ Թաղիադյանը ապագրում է իր «Պատմություն հին Հնդկաստանի», «Մեսրոպյան այլբենարան» և «Մեսրոպյան շարագրիչ» գիտա-մանկավարժական գործերը: Մ. Թաղիադյանը 1842 թ. գուրս է գալիս եպիսկոպոսական ճեմարանից և փորձում մանրավաճառություն վաստակել իր հացը: Այս թափառումների ընթացքում, չնայած Թաղիադյանը խիստ չարչարանքներ է կրել, բայց ձևոր է բերել շատ հարուստ տեղեկություններ հնդիկ ժողովրդի մասին:

Մ. Թաղիադյանը հրկրորդ անգամ ամուսնանում է 1844 թ. Կալկաթաբնակ Հովհանի գուստր Շուշանի հետ: Հետագայում կինն էլ է մասնակցում նրա թափառական կյանքին և միասին են զբաղվում փերեզակությամբ:

1845 թ. մեծ շրջադարձ է տեղի ունենում Մ. Թաղիադյանի կյանքում: Նա մի քանի հնդկահայ առաջավոր առևտրականների հետ, Մանուկ Զորաբյանի ղեկավարությամբ, հիմք է դնում Արաբաստյան ընկերությանը: Ընկերությունը որոշում է սննհալ իր օրդանը՝ «Ազգասեր» հանգեսը, որի խմբագիր-վերատեսուչ է նշանակվում Մ. Թաղիադյանը:

Ատանձնելով «Ազգասերի» խմբագրությունը, Մ. Թաղիադյանը նոր սիրով ու հուանդով առաջ է տանում իր ստեղծագործական և հրապարակախոսական գործունեությունը: 1845-ից մինչև 1852 թվականը Մ. Թաղիադյանի ստեղծագործական կյանքի ամենաբեղմնավոր տարիներն են: Մեծ մասամբ ինքն է հանգես գալիս «Ազգասերում»: Տպագրում է տեղական և արտարին լուրեր, տեղեկություններ Հայաստա-

նի մասին, որոնք քաղում է «Արշալույս Արարատյանից», որի հետ սերտ կապեր ունեն, «Բազմավեպից», «Կապիկասից», ինչպես նաև Հնդկաստանում տնդլերեն լեզվով հրատարակվող «Բնդիան նյուզից», «Բնդլիշմանից», «Քրիսչընից», «Սթաբից» և այլ թերթերից ու հանդեսներից: Իր հանդեսի էջերում Թադիադյանը տպագրում է քաղաքական, կենցաղագրական, դրական-զեղարվեստական, գիտական, մանկավարժական և այլ բնույթի հոդվածներ: Միաժամանակ նա ունեն թղթակիցներ, որոնք պարբերաբար հանդես էին գալիս թերթում:

1848 թ. վախճանվում է Մանուկ Զորարյանը: Նրա մահից հետո քայքայվում է Արարատյան ընկերությունը և դադարում գոյություն ունենալուց: Սակայն «Ազգասերի» խմբագրի համառ ջանքերի շնորհիվ պարբերականը պաշտպանում է իր գոյությունը և կարճատև դադարից հետո հրատարակվում «Ազգասեր Արարատյան» անունով, որը հարատևում է մինչև 1852 թվականը: Այս անգամ արդեն ինքը՝ Թադիադյանն է տնօրինում հանդեսի ողջ աշխատանքները: Չնայած նյութական դժվարություններին, նա ավելի ազատ է զգում իրեն, որովհետև այլևս նկատի չէր առնվում բնկերության մյուս անդամների կարծիքը և գործադրվող որոշ ճշմանները հրատարակվող նյութերի վերաբերյալ:

Արարատյան ընկերության տպարանում Մ. Թադիադյանը տպագրում է «Պատմություն պարսից», «Զվարճախոս առակք պարսից», «Թուխակ Թադիդյանց», «Կարգ և կանոնք Սուրբ Սանդուխտ դպրոցի», «Ճանապարհորդություն ի Հայս», «Ճանապարհորդություն ի Պարս», «Ճառ դաստիարակության օրիորդաց», «Մեսրոպյան առաջնորդ», «Սոս և Սոնդիպի», «Վեպ Վարդգիսի», «Վեպ Վարսենկան» և «Վկայարանություն սրբույն Սանդուխտի» զեղարվեստական, գիտա-մանկավարժական և թարգմանական գործերը:

ԿՅԱՆՔԻ ՎԵՐՋՈՒ ՇՐՋԱՆՔ

Հնդկական Զիչրա փոքրիկ քաղաքում, որը գտնվում էր Կալկաթայից 20 մղոն հեռավորության վրա, ժամանակին:

տարեկ էին սրտշ թվով հայ ընտանիքներ, կառուցել իրենց եկեղեցին: 1840-ական թվականներին Չիչրայում ալլահ հայ շէր մնացել և եկեղեցին շէր ծառայում իր նպատակին: Թաղիաղյանը մի քանի անգամ տկնարկել էր այն մասին, որ նպատակահարմար է Չիչրայի հայ եկեղեցին դարձնել վանք և այնտեղ ծափալել մշակութային մեծ գործունեություն: Այդ նկատառումով էլ Թաղիաղյանը 1852 թ. իր տպարանը, «Ազգասեր Արարատյանի» խմբագրությունը և Սուրբ Սանդուխտ դպրոցը, որ հիմնել էր 1846 թ. կնոջ հետ, տեղափոխում է Չիչրայ: Սակայն մի քանի ամիս անց «Ազգասեր Արարատյանը» ընդմիջում փակվում է: Իսկ դպրոցը նույնպես փակված կարելի է համարել, սրովհետեւ Չիչրայում Թաղիաղյանն ունեցել է ընդամենը երեք աշակերտ, որոնք հաճախել են Հուշի համալսարանը ու դասերից հետո միայն պարապել հայոց լեզու¹⁹:

Թե ինչ է արել Թաղիաղյանը Չիչրայում 1852-ից մինչև 1857 թվականը, ամբողջ հինգ տարի, մեզ հայտնի չէ: Ասել, որ նա զսպարել է ստեղծագործելուց, միանգամայն սխալ կլինի: Նա ուներ տպարան և անհավանական է, որ հինգ տարի շարունակ տպարանը չաշխատեր: Անշուշտ Կալիաթայում պահվող այլ արխիվներ և ժամանակի անդերին լեզվով մամուլը կամ Նոր Զուլայի Ամենափրկչյան վանքի մատենադարանի արխիվներում պահվող փաստաթղթերը շատ բան կասեն այս մասին, բայց այժմ գրկված ենք այդ հնարավորությունից:

1855 թ. վախճանվում է Մ. Թաղիաղյանի երկրորդ կինը՝ Շուշանը: Գնալով ավելի է ծանրանում Թաղիաղյանի վիճակը. հուսահատությունը ճնշում է նրան: Դառն օրեր է անցկացնում կյանքի վերջին շրջանում:

1857 թ. Թաղիաղյանը Չիչրայից գալիս է Կալիաթա: Այնտեղ իր ունեցած ձեռագրերն ու օրագրերի մի մասը կրթական հետ միասին հանձնում է իր մտերիմ և աշխատակից,

¹⁹ Տե՛ս «Ազգասեր Արարատյան», 1852, № 82, էջ 651:

հնդկահայ գրական և հասարակական գործիչ Քաղեոս Ավետուճյանին, իսկ տպարանը վաճառում Կալիկաթայի տվագերեց Հովհաննես Խաչիկյանին և հիմադ վրձակում ճանապարհովում է դեպի հայրենիք։ Նրեք տմիս Բոմբեյում մնալուց հետո, գալիս է Պարսկաստան։ Ճանապարհին ավելի է ծանրանում նրա հիվանդությունը։ Քաղիադյանը հազիվ հասնում է Պարսկաստանի Շիրազ քաղաքը, որտեղ և վախճանվում է 1858 թ. հունիսի 10-ին։ Նա թաղվել է արևելքի մեծ հումանիստ բանաստեղծների Սաադու և Հաֆիզի գերեզմանների մոտ՝ Բաբաբուհ կոչվող վայրում։

Շիրազի հայոց եկեղեցու գավթում Քաղեոս Ավետուճյանը մահարձան է կանգնեցրել հետևյալ մակագրությամբ.

Մեսրոպ Դավթեան Քաղիադեան
Պերճ վարժապետ, մեծ գիտնական.
Վսեմ քերթող մատենագիր
Հանգիստ առնու այս թուխ դամբան
Զքեզ հայոց գիտնոց կաճառ
Պատուասիրէ միշտ սիրավառ
Եվ նոր Զուղա և Կալիկաթա
Ոչ մոռասցեն գրեզ իռպառ:

1858 թ. հունիս 10

Մ. ԹԱՂԻԱԳՅԱՆԻ ՊՈՆԶԻԱՆ

Թաղիաղյանի պոեզիան հայ դասական գրականության մեջ ունի իր ուրույն տեղը։ Այդ ստեղծագործության մի մասը տպագրվել է XIX դարի 40-ական թվականներին՝ «Աղղասեր» և «Աղղասեր Արարատյան» հանդեսներում, ինչպես նաև «Թուխակ Թաղիղյանց» (1847) ժողովածուում։ Հետագայում պոետի հատուկենտ բանաստեղծությունները երևացել են «Մեղու Հայաստանի», «Արարատ» և այլ պարբերականներում ու երգարաններում։ 1893 թ. Հովհաննես Մկրչանը Թիֆլիսում հրատարակում է «Եղերերգութիւն յօրհաս Թանկա Թաղիաղեանց» պոեմների ու բանաստեղծությունների ժողովածուն։

Մ. Թաղիաղյանը բանաստեղծական արվեստի մասին մշակել էր իր տեսությունը, որի գիտական արժեքը հաղիվ թե հնարավոր է վիճարկել նաև այսօր։

1846 թ. բանաստեղծը «Աղղասեր» հանդեսում տպագրում է «Ի վերայ բանաստեղծութեան» հոդվածը, ուր հակադրվում է այն տեսության կողմնակիցներին, ովքեր պնդում էին, թե իբր միայն բաղարակրթված ժողովուրդները կարող են ունենալ բանաստեղծություն, դեպարվեստական ստեղծագործություն։

«Ճաշակն բանաստեղծութեան այնքան ընդհանրական է, մինչ զի ամենահեռուոր և անկիրթ ազինք տեսանեմք, զի ունին զոտանուոր տաղս և բնիկ քերթուածս ի մէջ իւրեանց, և բարբարոսք և վայրենիք՝ իւրեանց պատերազմական, որով երգեն զարարս և զբաջութիւնս նախնեաց իւրեանց»¹։

¹ «Աղղասեր», 1846, № 24, էջ 32։

Մ. Թաղիադյանը հակադրում է նաև այն փիլիսոփաներին և արվեստի տեսաբաններին, որոնց կարծիքով բանաստեղծական խոսքը զարգանում է աշնանդ, որտեղ կան բարենպաստ կլիմայական պայմաններ: Հակադրվելով այդ տեսակետին, բանաստեղծը նկատում է. «Ոմանք ի փիլիսոփայից կարծեցին թէ բանաստեղծութիւն՝ որպէս ալլ զեղեցիկ արհեստք, է միայն գտանելի ի շտի կատարելութեան ի բարեխառն օգս և ի կլիմայս, հին պետութիւնք նպաստեն ալամ կարծեաց, որպէս Հոմերոս և Վերգիլիոս, էին բնիկք Յունաստանի և Իտալիոյ, Մադիսարոս, Շնորհալին, Լամբրոնացին ի Հայս: Բայց արդի բանաստեղծք որպէս Շեքսպիր, Միլտոն, Պօպ, Ռասին, Վոլգէյր ևն բազաքացիք առուել ցրդային նահանգաց աշխարհի և որք նախանձելի արարին զինքեանս ընդ հնոց, ի տեսակս ամենայն բանաստեղծական շարադրութեան»²:

Գեղարվեստական գրականության, հատկապես պոեզիայի համամարդկային-էսթետիկական և պատմա-դատարարական նշանակությունն բնոգծելով, Թաղիադյանը հայ լուսավորչականության հասարակական նախադժումներից էր ելնում պոեզիայի բովանդակության հարցերը վճռելիս: Նրա համար զլիսավորը, ըստ երևույթին, միջնադարական հոգեբանության թոխափումն էր, ազդի բազաքական և սոցիալական վերածնության հեռանկարը: Դրա համար էլ նա աշխատում էր տեսականորեն հիմնավորել ազգային գրականության ստեղծման պահանջը՝ որպես ազգային վերածնության առաջնահերթ պայման: Ազգային գրականության ու պոեզիայի պատմական գերի նմանօրինակ բմբռնումը նրա ստեղծագործությունը «կամրջում» էր ումանտիզմի գրական ուղղության հետ:

Հայ բանասիրության մեջ ընդունված է ասել, որ Մ. Թաղիադյանի ստեղծագործական կյանքն սկսվել է XIX դա-

² Նույն տեղում:

քի 30-ական թվականներից, երբ հայկական կլասիցիզմն իր նահանջն էր տպրում: Սակայն կան փաստեր, որոնք տպացուցում են, որ նա ավելի վաղ է սկսել բանաստեղծությունների գրել: Որ Թաղիադյանը անցյալ դարի 20-ական թվականներից է սկսել բանաստեղծությունների գրել, հիմնավորվում է մի շատ կարևոր փաստաթղթով, որը վերաբերում է Վ. Թաղիադյանի՝ Կալկաթայում ուսանելու տարիներին: Այդտեղ Թաղիադյանը հայտնում է, որ ինքը բավական առաջադիմել է և կարճ ժամանակամիջոցում յուրացրել հունարենը, անգլերենը, պարսկերենը ու այդ լեզուներից կառարել թարգմանություններ: Լուսանցքներում գրել է մի բանաստեղծություն, որը հորինել է Հնդկաստանում 1825 թվականին: Բանաստեղծությունը բաղկացած է 38 տնից և յուրաքանչյուր տուն առաջին տառերը միասին հոդում են. «Մեսրոփրայ Գաթեան Թաղիադեանց Կարբեցւոյ երգ»: Կլասիցիզմի կանոններով, գրաբար, փոքր-ինչ խրթին գրված այդ երգում Թաղիադյանը բավական լավատես է աշխարհի ու մարդկանց հանդեպ: Օտարականի և թափառաշրջիկի էջանքն տնգամ չի քնկճում պոետին ու նա բավական սպասելիքներ ունի կյանքից:

Այդ առաջին ստեղծագործության մեջ իսկ երևում է Թաղիադյանի բանաստեղծական շնորհքը: Որպես նմուշ մեջ ենք քերում մի փոքր հատված.

«Անցք

Մեսրոփր

Մինչ իմ խաղ՝ մանկություն չինէն անց,

Ընձուղեաց՝ յիս մտաց՝ նախախաջժ.

Ուր սիրտ իմ զարթուցեալ զմառաւ ամ,

Գտանիւ իւր անուն բարութեանց:

Տէ ի դաշտ՝ առապար՝ խիստ վաշրաց,

Զբրաջան՝ հնարիւ՝ զեղս իրաց,

Ուր զազանք և վիշապք՝ գիշախանձ
Ի վերա գիմէին՝ խուռ բնթաց»³։

Բանաստեղծության վերջում գրված է։

«Ի գիրս պատահարացն իմոց. զլուխ 21, պրակ 6, էջ 247, ց 249։ Շարագրեալ յանտիրունջ պանդխտութեան իմում, որ յԱրեւելն Հնդկաստան։ Նոյեմբեր 26, 1825։ Որոց՝ զլիստառք յօրինեն «Մեսրոպբայ Դաւթեան Թաղիազեանց Կարբեցուց երգ»⁴։

Մ. Թաղիազյանի պոեզիան բազմազան է թե՛ բովանդակությամբ և թե՛ ձևով։ Նա գրել է հայրենասիրական, սիրո և բնության երգեր։ Նրա պոեզիայի հիմնական մոտիվը, սակայն, հայրենիքն է։

Ի տարբերություն իր նախորդների, Մ. Թաղիազյանը չէ գրել կրոնական տաղեր ու աղոթքներ, սրբերին ու հոգևորականներին նվիրված ձոներգեր։ Նրա գրած ներբողները վերաբերում են աշխարհիկ մարդկանց, հայրենասեր զործիչներին, ժողովրդի լուսավորությանը հույս առնող անհատներին։

Քաղաքացիական-հայրենասիրական բնաբերգությունը Մ. Թաղիազյանի պոեզիայի առանձին մասն է կազմում։ Այդ բնաբերգությունը հնդկահայ գրականության համար նորություն չէր։ Այն իր ժամանակին արտահայտվել էր Մ. Բաղրամյանի բանաստեղծություններում, Թ. Սոսինյանի «Ողբ Հայաստանի» պոեմում և այլն։

Քաղաքացիական-հայրենասիրական շնչով է գրված «Ի տես հոգեհարազատ սիրելուցն Գէորգայ յաշխարհին հնդկաց 1827 թ.» բանաստեղծությունը։ Վերը հիշված բանաստեղծությունից հետո, սա Թաղիազյանի, թերեւ, մեզ հայանի բանաստեղծություններից երկրորդն է, որ նա գրել է Հրնդկաստանում։ Առաջին անգամ այն լույս է տեսել «Ազգասիրում» 1845 թ., երկրորդ անգամ Հովհ. Մկրչյանը վերադրել է նրա ժողովածուում 1893 թվականին։

3 Մատենադարան, Ա. Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 243, վ. 4։

4 Նույն տեղում։

Մ. Թաղիադյանի տոռաջին բանաստեղծությունները աշ-
քի են բնկնում մի մտայնությամբ, որ թերևս անմիջապես
առնչված չէ նրա լուսավորական գաղափարախոսության
հետ: Հայրենիքի նկատմամբ կարոտի և սիրո պանդխտա-
կան զգացումները ոգոգում են նրա կրակված սիրտը, երբ
հեռավոր Հնդկաստանում, պատահաբար հանդիպած հա-
մաերկրացուց և ընկերոջից տեղեկանում է, թե մայր հայրե-
նիքը «ապահով կայ»:

Տուր իմոց պապակեալ շրթանց,
Համբոյր սուրբ հողոյն հայրենեաց⁵:

«Սուրբ հողի» նկատմամբ կարոտի այս զեղումները՝ տ-
վելի քան ատրված են. անկեղծ է բանաստեղծի տառապան-
քը և այնքան մեծ, որքան հեռու է նա իր հայրենիքից: Պանդխտի ուրախություն է նրա ուրախությունը, լի վշտով
և անձկալի կարոտով «զաշխարհն հայոց»: Վերին բարձրա-
լին ուզված գոհության խոսքը՝ դարձյալ հոգեկան նույն աղ-
քյուրից է սնվում. համաերկրացին, ընկերը իր հետ բերել է
հայրենիքի շունչը, նա հայրենիքի մի կենդանի «բեկորն է»,
դարձյալ սև ճակատագրին արժանացած:

Այ անմեղ իմ խաղուց ընկեր
Յայս և դու՝ դառն անկար յերկիր
Ըննամեան պանդխտիս լինել
Հրեշտակ ոմն ավատաբեր⁶:

Դրամատիկ երանգները, խոր հուզականությունը բա-
նաստեղծությանը հաղորդում են անմիջականություն, որ
հատկապես միջնադարյան պանդխտական երգերին է հա-
տուկ: Իդուր չէին անցել Թաղիադյան-բանահավաքի աշխա-
տանքները: Ժողովրդական երգից նա շատ բան էր սովորել

5 Մ. Թաղիադյան, Եղերերգություն..., Կ. Պոլիս, 1893, էջ 56:

6 նույն տեղում:

և բանաստեղծական ոգևորութեան տչն պահին, երբ ամէլիք գրում էր անկեղծ լինելու, բան թէ «բարձրարժեք անաս-բանելու» համար, ստեղծում է մտերմիկ, հուզիչ երգ-պատ-կեր՝ տալով երկու պանդուխտների հանգիստման մանրամաս-նութեանները:

Սակայն բանաստեղծի անգրանիկ ստանալորները գետ միայն նախափորձեր են: Կլասիցիստական բանաստեղծու-թյան ավանդները ամուր արմատներ էին նետել գրականու-թյան ասպարեկը նոր ստեղծութիւններում բանաստեղծի մտածողու-թյան մէջ: Եվ դա միանգամայն հասկանալի է, բանի սր և-կեղեցական երգը և Մխիթարյան նորօրյա բանաստեղծու-թյունը, որից նա սովորել էր, և որը միաժամանակ միակ իս-կական գրականութեան օրինակն էր նրա աչքում, պետք է որ նրա առաջին գեղարարական ըմբռնումների կազմավորման գործում վճռական դեր կատարէին:

Իրոք «Հայկերգ» և «Արամերգ» բանաստեղծութեաննե-րը⁷ կլասիցիստական ստանալորների տիպիկ օրինակներ են: Հայկեր և Արամը՝ հայ անկախութեան և հայ հաշտեցիքի պատ-մական սիմվոլները, քնարերգւում են մի տշնայիսի շտեմ-ծոցով և մտայնութեամբ, որ անմիջապէս մասնում է բա-նաստեղծի գոյրոցը և այդ գոյրոցից նրա կրած ազդեցու-թյունը: Հայկին ու Արամին երգելու նույն ոճադասակերպին՝ հնարանքները, նույն մեծարումը անցյալ վառքի, նույն ող-բը ներկա թշուառ վիճակի, հակադրութեանների նույն մեթո-

7 «Քնար հայկականում» այս բանաստեղծութեանները տպագրվել են անստորագիր, իսկ գրքի վերջում, վրիպակների բաժնում գրանք վերա-գրվել են Մ. Մսերյանին: Ոչ Մսերյանի ժողովածուում, ոչ էլ այլ ազ-բուրում վերահիշյալ բանաստեղծութեանները չկան: Գրանք առաջին ան-գամ 1845 թ. տպագրվել են «Ազգասերում», նույնպէս անստորագիր: Թա-ղիադանն այդտեղ տպագրված այլ հեղինակների բանաստեղծութեաններէ տակ անսխալման նշում էր հեղինակը, անստորագիր էր տպագրում միայն իր բանաստեղծութեանները: Զիշտ է, Մսերյանը այդ թեմայով բանաստեղ-ծութեաններ ունի, բայց «Հայկերգի» և «Արամերգի» ոճը Թաղիադանինն է, հետեաբար, գրանք Մսերյանին վերագրելը անհիշմէն է:

դր, որ կաշկանդում էր բանաստեղծական միտքը և գնում
մի կապապարի մեջ, որը վարդանալու ալլ ուղի շուներ, և՛
ոչ միազծորեն առաջ բնթանալը:

«Արամհրգր», ստեղծել, գաղափարական ենթիմաստով
փոքր-ինչ կարվում է կլասիցիստական ուսանալորնեից.
«Հայոց լեզուն տարածելու» Արամի կոչը՝ ըստ էության,
ուղղված էր օտարախոսության ազգային սովորութի դեմ,
առավելապես թրքախոսության.

Նիւբար գտարուկ Ասորին,
Բարբառ կոչէ առաջին,
Գլուխն յաշտարակ մեխեցէք,
Որ յերկնից սովրի հայերէն:
Ո՛հ Արամ, Արամ, բամ:

Ո՛վ չըզիտէ հայերէն,
Ոչ ճանաչէ նա զօրէն:
Որ բանիւ հայոց արար,
Այս մեծ աշխարհ մեզ համար:
Ո՛հ Արամ, Արամ, բամ:

Ի ծովէ մինչև ի ծով,
Թող խօսին հայ բառերով
Ներհակողին նիզակով,
Յուցէք որ՝ ասաց Արամ:
Ո՛հ Արամ...⁸

Ազգային սնտադարձության հոգեբանությամբ չէ, որ
գրված են այս տողերը. «Ի ծովէ մինչև ի ծով» արտահայ-
տությունը հուշում է, որ հեղինակի խոսքը գաղութահայերին
է ուղղված. երկրից երկիր ցրված հայերին, որոնք ոչ միայն
աստիճանաբար կորցնում էին տեղական ժողովուրդների նը-
կատմամբ տնտեսական գերիշխանության իրենց դիրքերը,
ալլև լեզուն և ազգային սովորությունները մոռանալով ձուլ-
վում, անհետանում էին:

⁸ «Ազգասեր», Կալկաթա, 1845, № 4:

Հայ լուսավորականութիւնը լեզվի պահպանման հար-
ցը իր ղլխավոր նպատակներից մեկն է համարել, լեզվական
միասնութեամբ ազգային ինքնավարութեան հասնելու պա-
տական հայացքը ձեռնարկում էր ազգային կրօնական
ավանդութեանների հիման վրայ Մի կողմից ազգասիրական
բարոյներ, որոնք կապվում էին պատմական Հայաստանի
անցյալ փառքի հետ, մյուս կողմից՝ կոնկրետ մտահոգու-
թիւն՝ ազգի միասնութեան պահպանման նկատմամբ։ Ար-
քանք իրար շէին հակասում։ Հակասակը, լուսավորականու-
թիւնը մի ավելի լայնախոհ հայացք էր բերում կյանքի նը-
կատմամբ, թեև ղեռն աշխարհն էլ որոշակի շէին նրա ազգա-
յին-բազարական ծրագրերը։ Բայց որ նա լեզուն և ուսումը
դիտւում էր որպէս ազգի փրկութեան հզոր գործամիջոցներ՝
դա տեսնուած է։ Այդ է պատճառը, որ Թաղիադեանը մի
կողմից պատմական անցյալի վերհուշն է արծարծում, մյուս
կողմից՝ ընդհուպ մոտենում ժամանակի ամենահրատապ
ազգային խնդրին։ Լեզվի պահպանման նկատմամբ հասա-
բակական մտահոգութիւնն արթնացնելու նրա ջանքերը,
իող որ դրանք դարձյալ հնօրյա ձեւերով են պարուրված, չեն
խանդարում տեսնել, թե ինչպէս լուսավորականութեան մեր
ոտաջին ներկայացուցիչներից մեկը փորձում է նոր բովան-
դակութեամբ լցնել այդ հին ձեւերը։

Մ. Թաղիադեանի մի բանաստեղծութիւնն ունի «Մի
մոռնար» խորագիրը։ Լիրիկական, թախծալի մի ոտանավոր
է դա, բայց երևութին հորինված Հնդկաստանում։ Մոր՝ որ-
դուն ուզած խնդրանքի մեջ ուրվագծվում է դարձյալ գաղ-
թաշխարհին ուղղված բանաստեղծի խոսքը. ուր էլ լինես,
ինչ փորձանքի ու ձախորդութեան մեջ, ինչ «հեշտութեան» ու
«կրքերի» գերի՝ չմոռնաս ինձ,— ասում է մայրը։

Մի մոռնար...

Այլ մշտապէս մտածեալ դիմ⁹։

Մ. Թաղիադեան, Եղերեղութիւն..., էջ 70.

Մայր հոգի կանչն է սա՛ղ պանդխտութեան գնացած քր-
դիներին, մի կանչ, որ սրտամաշ ու տխուր զորովով է լըց-
ված, որ վառվում է ներքին խոր հավատով ու հույսով: Նույն-
իսկ այն ժամանակ, երբ ես կմեռնեմ,—ասում է լալահա-
սաշ մայրը,— նույնիսկ այն ժամանակ, երբ իմ տաղանք
կժամկով՝ ողով՝

Որ հասակ քեզ, կամ որ վիճակ

Մի մոռնար զիս՝ իմ որդեակ¹⁰:

Հասկանալի է, որ բանաստեղծական մտահղացման
ինքնօրինակութեան մեջ չէ այս ստանալորի արժեքը. զգա-
յական խիստ հագեցվածությունը յարաբանչյուր բանաստեղ-
գարձնում է լավագույն արտահայտիչն այն տրամադրու-
թյունների, սրունցով շնչում էր տարաշխարհիկ հանդրմո-
տերում ապաստանած հայությունը: Բանաստեղծը գտել է
իսկապես հայրենի երկրի նկատմամբ պարտավորվածությունը
գիտակցությունը հրահրելու բանաստեղծական ձևը, որ ե՛
սուրջեկաթով, ե՛ օբյեկտիվ նշանակություն ունի: Այս առիթով
պետք է նկատել, որ Թաղիադյանի բանաստեղծությունների
մեծ մասը գրված են ինչ-ինչ առիթներով. ինչ-որ գեպրի,
ինչ-որ իրադրության թելադրանքով: Թվում է, թե բանա-
ստեղծը գրիչ է վերցրել ոչ թե ներշնչման «աստվածային պա-
հին», ինչպես ասում էր Բելինսկին, այլ գեպրի հրահրմամբ,
միջադեպի թելադրանքով:

Անձնական հակասությունները էջմիածնում, և ահա
«Երբ թրաման թանաքամանը», «Յուցակ ստացեալ աղխից
տան իմոյ...» կամ «Ականջ արէք էս իմ բանիս...» բանաս-
տեղծությունները: Մեռնում է Թանգ խաթունը, և ահա՝
«Եղերերգութիւն ի Թանգ» անավարտ պոեմը, նոր Ջուղայում
հիմնադրվում է զպրոց, և ահա՝ «Երգ» ստանալօրը, որ հե-
տո գարձնում է զպրոցի հիմներ:

10 Նույն տեղում:

Նկատված է, որ ուսման տիրակալն բանաստեղծութեան և արձակի կազմավորման շրջանում ինքնակենսագրական տարրը ներխուժում է գրականութեան բնագավառ, շեշտվում է հեղինակի սուրյեկտիվ մտորումը, արդեն ի հակադրութուն կլասիկական արվեստի կանոնիկ ձևերի: Սուրյեկտիվիզմը, ոչ անհատականի իմաստով, ուսման տիրակալն զեղազրտութեան զլխավոր առանձնահատկություններից մեկն է դառնում, և որքան բանաստեղծը ընդգծում է այն, այնքան հակադրվում է կլասիկական օրյեկտիվիզմին: Բանաստեղծութեան մեջ մտնում են զգայականի ու անհատականի միասնութեան արդյունք հանգիստացող անձնական ապրումները, ուղարկութունը, խանդը, կիրքը և այլն, որոնք ոչ միայն աշխարհի նկատմամբ հատուկ վերաբերմունքի արդյունք են, այլև արվեստի նկատմամբ նոր հայացքի հետևանք: Սուրյեկտիվի միջոցով օրյեկտիվն արտահայտելու զեղարվեստական նոր եղանակն ու միջոցները՝ կյանքի հարցերին անմիջապես արձագանքելու պատմական անհրաժեշտության արդյունք էին: Այս իմաստով Թադիստիանի հետագա շրջանի բանաստեղծություններն արդեն կտրվում են կլասիցիստական բանարվեստից և, թեև զրաբարը դեռ չի հաղթահարված ինչպես հարկն է, այնուամենայնիվ այն չի խանդարում տեսնելու ուսման տիրակալն պոեզիայի հանդես գալը:



Ինչպես տեսանք Թադիստիանն աստիճանաբար բնթանում էր պոեզիայի հասարակական բովանդակության շրջանակներն ընդլայնելու ուղիով: Այն ներքին խռովքը, տառապանքը, ցավը, որ նա ապրում էր, առնելով կյանքի հարվածները, հրահրում էին նրան զբաղվելու ոչ միայն և ոչ այնքան իրեն բաժին ընկած բախտի քննական վերլուծությամբ, այլ ավելի ու ավելի մոտենալու կյանքի ցավաւ հարցերին, զրանց մեջ տեսնելով և իր զժբախտութեան բացառութիւնը: «Ազգասերում» հրապարակած մի ուսանա-

վորի մեջ («Համասփյուռ ծաղիկ») բանաստեղծը տվել է իր՝
որպես ստեղծագործողի բնութագիրը. դա երկնային մուսա-
ների քնկերակցության երանությունից հրաժարվածի խոս-
տովանանք է, մի մարդ, որ բռնել է ժողովրդի ցավն ու կրս-
կիծը երգելու ուղին. նա սղբի երգիչ է, տխրության քնարեր-
դակ:

Ո՞վ քանի անհատ Մուղալք երկնային,
Ոչ համարէի ինձ. հրանութիւն,
Եթէ ի կատար Դարունեաց լերին,
Տայիք ինձ զոնե ըզժամուն գրուն¹¹:

Բանաստեղծի «հեղահնչյուն ախուր տատնողին», որ
ներս ողբերգը դեպի երկինք է ուղղում, պատրաստ է այլ եր-
գեր հնչեցնելու, եթէ, իհարկե, գրանք ինչ-որ շափով կարող
են օգտակար լինել մարդկանց:

Դեռևս այս շրջանից ձևավորվում է կյանքի նկատմամբ
տևիով վերաբերմունքի պահանջը, սնոտի սերը և աշխար-
հային հաճույքները մերժելու բաղաբացիական տրամա-
դրությունը, որն, ի դեպ, Թադիաղյանի՝ որպես գրող-քաղա-
բացու ամենատիպական գծերից մեկն է: Մտաբերենք էջ-
միաձնական մոնիթ Մեսրոպին. տակավին պատանի, բայց
նա արդեն կարողանում է ոչ միայն տեսնել վանական կեն-
ցադավարության ու հարաբերությունների ամբողջ դարձի-
լիությունը, այլև ինչ-որ հակառակ դիրք գրավելու դրանց
նկատմամբ: Թադիաղյանի կենսագրության որոշ փաստեր
արդեն ցույց են տալիս, թե ինչպես է ձևավորվել նրա բնա-
կությունը որոշ գծեր՝ կեղծիքի, խարեության, ազահության,
սոսոր բնագծերի այդ միջավայրում: Մի փոքրիկ գանցանքի
համար պատիժ ստանալով, նա ոչ թե լուռ է, այլ փռօձում
է չուրովի պատժել հանցավորին՝ մատնիչին: Բնավորության
այս գիծը, ըմբոստացման այս կարողությունը, արդարու-
թյա՛ն ու ճշմարտության նկատմամբ բուռն սիրո հեռուներ

¹¹ «Ազգասեր», 1847, № 97:

էր: Պատանի Թաղիադցանը չէր լսում, և դրա համար նրան պատժում էին: Հասուն Թաղիադցանը նույնպէս չէր լսում, և դրա համար նրան դարձյալ պատժում էին, բայց կշանքի և ոչ մի շրջանում նա չընկճվեց. լուսավոր մի հավատ ունէր նա իրականութեան վերաբերման իր ջանքերի նկատմամբ: Այդ հավատը պահում ու պահպանում էր նրան: Սեւ ժամանակ առ ժամանակ, հուսախաբութիւնն ու հուսահատութիւնը մեզի պէս պարուրում էին նրա մարի ու զգացմունքի աշխարհները, բայց էլի կենսախինդ հավատը հասցնում էր, ի վերջո, լուսավորել բանաստեղծի սեականո՞ւ հոգին:

Ըմբոսա բանականութիւնը, տպատամբ հոգին՝ խռով սրտի համբով էին ստեղծել նրա համար: Էջմիածնական շրջանում գրած երգիծական ստանալորները և նշանավոր «Թրաման թանաքամանը» հայանի չափով մեկնում են բանաստեղծի վերաբերմունքը՝ ոչ միայն և ոչ այնքան հոգևոր տան սպասարկուների կենցաղի նկատմամբ, այլև ընդհանրապէս կղերի, որի վերաբերմամբ, «մարբազործումը» Թաղիադցանի լուսավորչական ծրագրերի զխռովոր նպատակադրումներից մեկն էր: Բանաստեղծի սոցիալական առաջին պատկերացումները կազմավորվել էին հոգևոր գասի ներքին կշանքի ուսումնասիրութեան հիման վրա: Այդ պատճառով նա փորձում էր լավի, բարու, հակառակորակների, մարգար-սիրութեան իր ըմբռնումների գիրքերից գնահատել հայ եկեղեցականութեան գործունեութիւնը: Այս տեսակետից չափազանց հետաքրքրական է 1833-ին գրած «Համեմատութիւն Մեսրոպրա վարժապետի և աթարակիր իշոյն...» բանաստեղծութիւնը: Երկախոսութեան ձևը և երգիծելու եղանակը Թաղիադցանին ուղիղ գծով կապում են նազալ Հովնաթանի հետ:

Հայկական միջնադարյան երգիծական բանաստեղծութեան ավանդների օգտագործումը շատ էր տարածված ՃԼՃ լարի սկզբներին: Այդ վկայում է ոչ միայն Աբովյանի ստեղծագործութիւնը, այլև աշուղական գրականութիւնը: Թաղիադցանը լավ գիտեր մեր միջնադարյան պոետիան: Նազալ

Հովհաննիս երգերը, մասնավորապես կղերի դեմ ուղղած երգիծական ոտանավորները մեծ տարածում ունեին: Առնելով ձևը, բանաստեղծն աշխատում էր, իր ժամանակի գիրքերից, մշակել երգիծական վերաբերմունքի ու մատածողության նոր տարրեր, հասնել զազափարական սրության և սոցիալական հարցադրումների:

«Համեմատութիւն Մեսրոպէս վարժապետի և տխարակիր իշոյն...» ոտանավորը կառուցված է երկու պլանով. միևնույն տնձի մեջ՝ ծաղրված են հոգևորականն ու աշխարհականը: «Առաջ ես վանական էի,—ասում է էջը,—բայց տեսնելով թե մեռնել կա՝ «մեծագոյի թաւադ» դարձաւ: Իմ անունը «տեր հիմարություն» է, այդ պատճառով ինձ բաժին է ընկել «հարգ և ակնածութիւն» և եթե ես այսօր «մեծագին և անկար» մուշտակ եմ հագնում ու կրում արծաթյա բեռ, տպա դրանք մյուսներից զանազանող իմ նշաններն են»: Երբ բանաստեղծը փորձում է մի համեմատություն անցկացնել իր և «տեր հիմարության» միջև այն մաքով, թե ինքն էլ ժամանակին վանական է եղել և լքելով վանքը աշխարհական դարձել, բայց չի արժանացել ժառանգների և հարստության, տխարակիր «տեր հիմարությունը» զայրացած պատասխանում է.

Ի՞նձ համավիճակ իցես դու մութիկ.

Զի՞նչ անում ե քո, զի՞նչ վերադառնիւն.

Զի՞նչ պատիւ ունիս թեև վարժապետ

Որ հավաստիս արդևիր իշոյն¹²:

— Ո՞ւմ է պետք վարժատունը, ուսումը,— ասում է «տեր հիմարությունը»,— ես ամեն ինչ սովորել եմ առանց վարժապետի-վարժարանի, աուն ու տեղի տեր դարձել, հասել մինչև «ծայր երջանկության», չբաշխելով ուսման հաւկապված հոգսերն ու տանջանքները:

Բանաստեղծը պատասխանում է.

Պարտեցա այո էշ ազնվական

Իմ հոգը ծանրագույն եմ բան դքոյդ շաւակ.

12 ԳԱԹ, Ա. Արարատյանի ֆոնդ, վավ. 1, էջ 42:

Անբաղդ վարժապետ, անբաղդ գիտնական
Ոյր և համեմատ իշոյց չէ վիճակ¹³:

Այս խոստովանութեան մեջ արդեն երգիծանք չկա: Ինքը՝
բանաստեղծը համոզված է, որ վաղուց ի վեր այդպես է սահ-
մանվել. չէ՞ որ նույնիսկ այն ժամանակ, երբ նրա սահմանվ
մարդիկ անասնանում են, անասուններն ավելի բարձր են
մարդկանցից, քանի որ՝

Իշխանք աշխարհի իշացան խելօր,
Երբ խոտն ու գարին կերան կրօնիւր¹⁴:

Կրօնն ինքը մարդուն իշեցնում է անասունից էլ ցածր:
Բանաստեղծը պարզում է իր մտորումների սոցիալական խո-
վանդակությունը: — Էշ, դու երջանիկ ես բոլոր անգամ, — ա-
սում է նա, — որովհետեւ դու ես կյանքի տերը: «Տեր հիմա-
րութունը» չի ժխտում այդ, այլ, բնականապես, մի խորի-
մաստ պատասխան է տալիս.

Ապերջանիկ մարդ, այլ կայ բան մի կայ.
Այս աշխարհ իշոց է, քան թե մարդկան¹⁵:

Մի «գիտնական» էշ այս բանը բացատրել է հետեւյալ
կերպ. երբ մարդիկ զաղթեցին այս աշխարհից, մոռացան
իրենց հետ տանել էշերի երամակները և թողեցին նրանց
ապրել այստեղ այնպես, որպես կարող են: Այդ է պատճա-
ռը, որ հիմա աշխարհի տերերը ոչ թե մարդիկ են, այլ էշերը:
Ժամանակի գիտուկ, սուր և կրքոտ քննադատութեան այսպի-
սի օրինակ բիշ կա հայ բանաստեղծութեան մեջ: Թաղիադ-
յանը սոցիալական անհավասարութեանների բացատրու-
թյունը փորձում էր գտնել մարդկանց բարոյական ըմբռնում-
ների մեջ: — Ինչիս է պետք դպրոցը, գիրքը, կրթութունը,
նրբ առանց դրան էլ աշխարհի տեր եմ ես, — ասում է «տեր
հիմարութունը»: Այս մտայնութեան դեմ է ուղղում բանա-

13 նույն տեղում:

14 նույն տեղում:

15 նույն տեղում:

ստեղծը իր զայրույթի կաշծակը, քանզի զա է պատճառը համատարած ազիտութեան, մարդկանց սնահավատութեան, դիտունների կործանման, շարի հաղթանակի: Բարոյախոսական այս ելակետը, ինքնին, իր հետ բերել է հասարակական կարգերի խոր մերկացումներ, որոնք արժեքավոր են դառնում հենց միայն որպէս սոցիալական շարիքի դեմ պայքարի առաջին արձագանքները:

«Յուցակ ստացեալ ազխից տան իմով» երգիծական ոտանավորը ինքնակենսուրական բնույթ ունի, և ավելի էջմիածնական միջավայրի մերկացմանն է ծառայում: Այլ իմաստով այս բանաստեղծութեանը կապված է նախորդի հետ, քանի որ այստեղ կենդանի ու վառ գծերով պատկերված են արդեն հոգեւոր դասի և բանաստեղծի, եթէ կարելի է այսպէս ասել, կենցաղային փոխհարաբերութեանները, հարաբերութեաններ, որոնք մեկնում են վանական ներքնախավի դժուծ, սղորմելի, ընշաքաղց, արծաթասեր, անհաշտ բնավորութեանը:

Ի՞նչ է ստանում բանաստեղծը վարժապետ կարգվելով Արարատյան ճեմարանում. մի կիսախարխուլ խրճիթ, ժանգոտած երկու-երեք թառ, կոտրված մի մահճակալ, հնութեանից արդեն անգործածելի դարձած փալտ-խալի, որի վրա աչք ունի «մեծ Աբրահամ վարդապետը», «ջուխտ շանգալ-զանակ»: Քաղկեդոնի ժողովի ժամանակներից մնացած իրեր են սրանք, որ տղքատին տալն անգամ անհարմար է. խեղճ վարժապետը հարկադրված էր տասնհինգ օր սոված քարշ գալ:

Տասն և հինգ օրեն յետքն,
Ինձ նոր ուտելիք զրկեցին.
Լիար ու կես բրինձ տվին,
Զիբիլ էր սորա կես փայլքն¹⁶:

Յուրա, խոնավ սենյակում արթնրթացող վարժապետը, երբ փորձում է վառել վառարանը, փայտ չեն տալիս:

¹⁶ «Երեւոյն...», էջ 81:

Ըտեհնց կըլնի, վանքի բան ա:

Պատաճական չէ, որ էջմիածնից ձանձրացած, զըզված ու դատնացած բանաստեղծը, վանքը թողնելուց տառջ գրեւ է.

Եւրբ թրաման թանաքաման

Դարձեալ ետեւ յայս վեհարան,

Զի՞նչ ալ բեզ յայս երջանկութեան,

Փախիր փութով Մեսրոփք Դութեան:

Երգիծական բանաստեղծութեան մի նմուշ է «Հիպոն» ստանալորը, որտեղ բանաստեղծը բննագատում և ծաղրում է հնդկահայ ոմն Հիպոն աղայի: Բանաստեղծութեանը թերի է: Թաղիաղյանը խոստանում է շարունակել, բայց այդ հաւաքածից հետո «Ազգասերի» համարներում ալլեա չենք հանդիպում զրա շարունակութեանը: Սա նշանակում է, որ Թաղիաղյանը խիստ կաշկանդված էր, որ նրա թշնամիները ավելի զորեղ են զուրա եկել և զսպել են նրան: Բանաստեղծութեանը գրված է աշխարհաբար: Սկիզբը շատ նման է 30-ական թվականներին գրված իր «Համեմատութիւն Մեսրոփքի վարժապետի և ավարակիր իշոյն» բանաստեղծութեանը:

Ստանալորի մեջ մերկացվում է Հիպոնի քսութեանը, ստորութեանը և հիմարութեան հասնող ազահութեանը:

Թաղիաղյանի երգիծանքը ուղղված է ոչ միայն հայ իրականութեան բացասական երեւոյթների, այլև անդլիական և ամերիկյան միսիոներների դեմ, որոնք շատ արտենյալ ձևով և ազատ շրջում էին արեւելյան երկրներում: Ըստ բանաստեղծի, քրիստոնեական քարոզիչ պատվելին ոչ թե «իմաստութեան, արժանիք, ազնվութեան, հանճար» է, այլ միայն «մայր հիմարաց, այր շվաշտակ և շնացող»: Գեղեցիկ ու պատկերավոր են վերջին տողերը.

Ի շարաց այր շարագոյն, բայց զի ունի տուն և մաման
Հով սեղան տա, պար և սյուկա, ուստի ազնիւ

պարոն է նա¹⁷:

¹⁷ «Ազգասեր Արարաւան», 1850, էջ 424:

Մ. Թադիադյանի հոգուն հարազատ է սիրո թեման: Նրա ստեղծագործության մեջ սիրո զգացմունքի վառ արտահայտություն է 30-ական իլլահաններին աշխարհաբար (Ջուլալի բարբառով) գրված «Սիրելի Սիրվարդ» բանաստեղծությունը, ուր արտահայտված է պոետի անկաշառ սերը դեպի սիրած աղջիկը: Չնայած խոսքն ուղղում է Սիրվարդին, բայց ամբողջ ուշադրությունը դեպի իր սիրած Թանգ խաթունն է

Սիրելի Սիրվարդ իմ բարով ողջանաս
Թանգում օրիորդին դիտանի զնաս
Շատ կարոտ բարեւ տաս և հասկանաս
Թէ ե՞րբ ա յուր կամքն, որ իրար տեսնենք¹⁸:

Նույն Թանգին, իր սիրածին է նվիրել այս անգամ զբարբար «Զեփյուռ» բանաստեղծությունը: Սիրուհու բացակայությունն այնքան է ազդել բանաստեղծի վրա, որ անգամ գիմում է զեփյուռին՝ նրա միջոցով առնելու իր կարոտը: Շատ խորն է նրա ապրած ու զգացած սերը.

Եվ դու յորժամ կնդրկեալ
Վաղիւ անդուստ առ իս գալ
Ախորժիցիս, բոյր զանոյշ
Զնորս ի քէն տռեալ¹⁹:

Եթե Թադիադյանի «Սիրելի Սիրվարդ», «Զեփյուռ» բանաստեղծություններում շեշտված է անհատական սիրո հարցը, ապա «Նենդ կանանց» բանաստեղծության մեջ, որը գրված է բավական խրթին դրաբարով, պոետը նկատի ունի ամուսնական կյանքում կնոջ ունեցած մեծ դերը: Թադիադյանը խիստ պախարակում է նրանց, ովքեր իրենց խարդավանքներով բաժանում են ամուսիններին, խախտում նրանց

¹⁸ «Եղերերգություն...», էջ 53:

¹⁹ «Եղերերգություն...», էջ 55:

խաղաղ կշահեր, թույն լցնում աղամարդու և նրա կնոջ սիրտ բաժակի մեջ:

Սիրտ լիբիկայի գեղեցիկ նմուշ է Թաղիադյանի «Տուտու» բանաստեղծությունը, որը հեղինակը գեակեղ է 1847 թվականին իր կողմից հրատարակած «Թուխակ Թաղիադյան» ժողովածուի մեջ:

Հասարակության մեջ տիրող սոցիալական անհավասարությունը մարդկանց դարձրել է խարերա, նենդ, սխառ-դրուժ: Այդ երևույթը մուտք է գործել նաև սիրտ մեջ: Բանաստեղծն անգրագատնալով դրան, գայրանում է, երբ սիրտ մեջ խարերայություն է տեսնում.

Ն՞մ ես արդեոք խաղալիկ քոյ
մը ի հրապույր խաբէութեան,
Մտեալ չամուրս հոգւոյ իմոյ,
Կողոպտեցիր սղջ զիս, տուտու²⁰:

Բանաստեղծի սերն անկեղծ է: Փոխադարձ սերն է, որ կարող է իրեն երջանկացնել ու իր վշտերին գարման լինել: Նա պատրաստ է գոհարերության.

Սիրտ իմ գերի տարար գեղոյ,
Կեանս արարեր ստուեր սնուչն,
Արդ փրկանակ սիրտ գերուչ քոյ,
Թէ զիս կամիս, առ քեզ, տուտու:
Բաց կամ զգուռն սրտի իմոյ
Յարժաթափալ ծոցոյդ սեղան,
Զի անդ գկեանս արարից զոհ,
Սիրոչն և քեզ՝ անդութ տուտու²¹:

Բացի Հ. Ալամգորչյանի սիրտ երգերից, Թաղիադյանից և Աբովյանից տուտ հայկական կլասիցիստական գրականություն մեջ սիրտ թեմային նվիրված աշուղիսի արտահայ-

20 «Եղերերգություն...», էջ 109:

21 «Եղերերգություն...», էջ 110:

առաջնություններ չենք կարող ցույց տալ: Ու սխալված չենք լինի, եթե ասենք, թե Թաղիադյանը չգրեց աշխարհաբար լեզվով, բայց աշխարհիկ թեման դարձրեց իր ստեղծագործություն լեյամոտիվը: Նա արտահայտեց մարդկային սիրո ամենաբարձր ու գեղեցիկ զգացմունքները:

«Թուֆակ Թաղիադյանը» ժողովածուի մեջ գետեղված բանաստեղծությունների շարքին է պատկանում «Աեր վրիպյալ» լիրիկական բանաստեղծությունը:

Բանաստեղծի լիրիկական հերոսը, սիրած էակը նկարագրված է ուժանտիկոսեն. նրա զուխը երկնահամբույր աշտարակ է, ճակատն անմատույց ամրոց, շրթունքները մեղրածուր շուշաններ, աչքերն շաեմարան, իսկ հոնքերը աղեղ, որոնցով գինվողը ոչ մի գենքի տուաջ չի քնկրկի: Երկրի երեսին շրջող այս չքնաղ գիցուհին իր գեղեցկությամբ բարձր է երկնային հուրիններից: Աշխարհիկ իրականություն է, որ զբաղեցնում է մեր պոետին: Այս բոլորից հետո, սակայն, անբախտ է իր սիրուհին, կույր ուժերին գերի և խաղալիք նրանց ձեռքին:

Ինչպես նախորդ, այնպես էլ այս բանաստեղծության մեջ պոետը ցույց է տալիս, որ այդ կարգերում ազատ սերը զոհ է դնում ոսկուն, որ սերն առ ու ծախի առարկա է.

Կույր հայր, կույր մայր, — ախ և դու բազզ գաշտցու,
Զիա՞րդ վկանս իմ արարիք ոսկույ զոհ:

Կարե՞ն արդ ձեր հալանք և հանք պսպղունք.

Պատասխանել աշխուժանաց վեհ սիրոյ²²:

Թաղիադյանի ստեղծագործության մեջ ուշադրով է 30-ական թվականներին գրված «Մեսրոպըս բանք» անախյոս ոտանավորը²³, Աշխարհիկ սիրո արտահայտության մի նկարագրություն է այն: Եթե Հ. Ալամդարյանը իր սիրուհու «Եր-

²² «Եղերերգություն...», էջ 119:

²³ Այս բանաստեղծության ձևագիր օրինակը պահվում է Մատենադարանում, Շահան Զրպեայանի ձեռագրերի մեջ (Ալ. երիցյանի ֆոնդ):

ձու ձեռին երկու մոմ» է տեսել, ապա Թաղիադյանը Վինիուսի ջաճն է տեսել՝

Ընդ Վինուս ջաճ ի ձեռքն
Բարբսքէք վհրդեհ նսրին,
Եվ ի զով անդ տուշորման
Սաթօրեն զսիրտ նորին²⁴:

Ռոմանտիկական գրականության առանձնահատկություններից մեկը բնության յուրահատուկ նկարագրությունն է: Հայրենասիրական բանաստեղծություններից բացի, Մ. Թաղիադյանը գրել է նաև բնությունը պատկերող լիրիկական, ռոմանտիկական ոտանավորներ:

Բնության հրաշալիքները վերաբաղեցրելու և պատկերելու գեղեցիկ նմուշներ են նրա մի քանի բանաստեղծությունները: «Մեսրոպյան աշնան առավոտ» բանաստեղծությունը առաջին անգամ գետեղվել է 1830 թ. Կալկաթայում Ստեփաննոս Զնվումի Ավետյանի հավաքած «Սիրակարկաշ, որ է հանդիսարան հայերեն, պարսկերեն և հնդստաներեն երգոց» երգարանում:

«Գարնան առավոտ» և «Մեսրոպյան աշնան առավոտ» բանաստեղծությունները պատկերում են պոետի սերը գեպյ բնությունը: Նրա նկարագրած բնությունը վշտոտ ու թախծոտ չէ, այլ ընդհակառակը, վիշա ու թախիժ փարատող.

Ահ, աշնան առաւոտ սրտի իմոյ զարդ,
Դու բարեաւ ծաղկցար ինձ բերկրութիւն արդ
Արեւոտն կարապետ, քոյ պայծառ գիմոց
Տամ սիրտ իմ զիւրովիմ պատարագ կամաց²⁵:

Հարկ է նկատել, թե որքան է պոետը կապված բնության հետ.

Դու հոգի ստիակի, դու շունչ ես վարդին
Դու և քո քերթողին, քո սիրահարին²⁶:

²⁴ Մատենադարան, Այ. Երիցյանի ֆոնդ, թղթ. 153, վ. 3:

²⁵ Բ. Նանուժյան, Մ. Թաղիադյան, 1947, էջ 113:

²⁶ Նույն աեղում, էջ 114:

Պոեւորի թախիժն է տրտահաշտոված «Երեկո» բանաստեղծութեան մեջ: Նա հուսահատոված է իրականութեանից, խուշո է տալիս մարդկանցից և ցանկանում է առանձնանալ բնութեան խաղաղ գրկում: Իրո՞ք նրա վիճակն այդպիսին էր: Այո, նա շատ էր բախվել հասարակական արատավոր բարքերի հետ ու խիստ հիասթափվել կյանքից: Միանգամայն հասկանալի է նրա հոգեվիճակը: Երգի գաղափարը հենց այդպիսին է: Բայց լավ է նկարագրոված բնութեանը: Պատկերները կենդանի են, հնչուն: Ահա լուսափայլ ցերեկը գանգաղ խավարում է ու նրան է հաւելում երեկոն:

Երբ պոետը հանգիստ շրջում է խաղաղ Գանգեսի տփին, լուսինը վսեմորեն բարձրանում է երկնակամարի վրա: Ամեն ինչ լուռ է ու հանգիստ: Սակայն պոետը տխուր է, կյանքից դժգոհ:

Երեկոյ
Այն ինչ վերջանալոյ
Տիւրն լուսափայլ,
Եւ վսեմութեամբ
Լուսին յառաջ գալոյ,
Լոկի շրջէի
Յառանձին վայրի,
Ի խաղաղասէր
Յափրն Գանգիսի²⁷:

Մ. Թադիսագեանի շտիպած ստեղծագործութեան կարեւոր և նշանակալից մասն է կազմում պոեմը:

Պոեմներում Թադիսագեան բանաստեղծն ու մտածողը հանդես է գալիս շատ ավելի համապարփակ ու խոր, քան բանաստեղծութեան մեջ:

Եվրոպական պոեզիայի տկենրե ազդեցութեամբ (բանաստեղծը բնագրում կարգացել էր Բայրոնին ու Շելլին) նա բողոքապատկեց հայ պոեմի ժանրային հնարավորու-

²⁷ «Ազգասեր Արարատեան», 1848, № 26, էջ 208:

խնայողները՝ սլովակաւային, կոմպոզիցիոն մի շարք նորահայտ ստեղծագործական ըմբռնումներ բերելով: Թաղիադյանը խոհական-փիլիսոփայական պոեմի ժանրը արդեն մշակում էր ոչ թէ բնդհանուր բարոյա-էթիկական կամ տասովածաբանական խնդիրների լուծման տեսանկյունով, ինչպէս նախկինում կլասիցիստների մոտ, այլ ձգտում էր ճեղքել այդ սահմանները՝ իրական հարաբերութիւնների և իր իսկ սուբյեկտիվ փորձի բանաստեղծական բնդհանրացման օգնութեամբ, որ նշանակում է, թէ նա արդեն պոեզիայի այդ սահմաններում փորձում էր հաղթահարել կլասիցիզմի ժանրային սահմանափակութիւնները՝ զեպի ուսմանտիվը զանաւորով:

Հայ կլասիցիստները իրենց ստեղծագործութեան համար ընտրում էին հիմնականում առասպելական հերոսներ: Պոեմի կառուցվածքի տեսակետից հետեւում էին հիւրոպական կլասիցիստներին:

Վերլուծելով Թաղիադյանի երեք պոեմները՝ «Եղերերգութիւն հօրհաս Թանգա Թաղիադյանց», «Հայկ ի աեսիլ Հայկադինին», «Սոս և Սոնգիպի», հանդում ենք այն եզրակացութեան, որ Թաղիադյանը սկզբում հետեւել է կլասիցիզմին և տպաւնացում կատարել զեպի ուսմանտիվը:

«Եղերերգութիւն հօրհաս Թանգա Թաղիադյանց» անաւարտ և անդրանիկ պոեմում Թաղիադյանը փիլիսոփայական խոհը ծառայեցնում էր իր սուբյեկտիվ վշտի խոր, համարագկային տեսանկյունները մեկնելու գործին: Այստեղ աւելնել է բայրոնյան ներանձնացման ու ինքնավերլուծման իրողութիւնը:

Պոեմի թեման սիրո սղերգութիւնն է: Նրա սիրո առարկան վաղամեռիկ Թանգն է: Կյանքում չգանելով իր տեղը, լինելով հալածված ու թափառական, բանաստեղծը կորցնում է իր գեղահաս կնոջը: Եւ այստեղից էլ սկիզբ է առնում նրա զժգոհութիւնը կյանքից ու շրջապատից:

Պոեմի ամենագեղեցիկ մասերից է այն հատվածը, ուր արտահայտվել է պոետի վերաբերմունքը զեպի ժողովուրդը: Նա անհուն սիրով կապված է իր ժողովրդի հետ: Ահա բա-

նստակցածին է մոտենում Աթենաս Պալլասը: Նրան ցույց է տալիս բարբարոս և դժվարին ուղին, որով անցնողը պետք է ծանր տառապանքներ կրի: Իսկ Աստղիկը երգչին հրավիրում է և մատնացույց անում հարթ ու դյուրին ճանապարհը: Բանաստեղծն ընտրում է առաջինը՝ դժվարին և բարբարոս ուղին՝ հրաժարվելով երկրորդից:

Խրախոյս բարձեալ Աստանդականին
Դժուարութիւն յանձն առ կամովին,
«Մնաս բարեաւ ասէ զրգանք քո Աստղիկ,
Քո վիշտք անանցք են, վայելք վաղանցիկ»²⁸:

Խրոթամանակ պոեմում վառ կերպով արտահայտվում է պոետի անսահման սերը գեպի իր հայրենիքը: Նա ամեն մի դժվարություն հանձն է տռնում, միայն թե աշխատած լինի իր հայրենիքի համար և ծառայած լինի իր ժողովրդին:

Ըստ որում քրտունք վասն հայրենեաց
են Արբունք կենաց հայրենասիրաց,
Ուրեմն բարիք հեշտախա փափկութեան
Առ նոքօք զրին ինձ արհամարհան»²⁹:

Հայրենասիրության այսքան խոր ու որոշակի արտահայտությունը մի նոր էջ էր մեր գրականության համար, որն արտահայտվեց Թադիադյանի և Աբովյանի կողմից ու խորացավ Նալբանդյանի, Պատկանյանի, Շահադիզի և հաջորդների մոտ:

«Հայկ ի տեսիլ Հայկազնին» պոեմում Թադիադյանն արդեն այլ մոտեցում ունի: Հայկ Նահապետի կերպարը օգտագործել և մշակել են այդ շրջանի երեք սերնդի ներկայացուցիչներն էլ: Արսեն Բաղդասարունին զրկել էր «Հայկ Դյուցազն» գլուցադներգությունը: Չնայած պոեմը լույս է տեսել շատ ուշ, 1858 թվականին, երբ հայ կלאսիցիզմն իր մայրամուտն

28 «Եղերերգություն...», էջ 11:

29 Նույն տեղում:

էր ապրում, բայց գրվել էր շատ առաջ: Այնուամենայնիւ «Հայկ Դյուցազն» պոեմում, անշուշտ, պիտի է տեսնել ազգային ազատագրական շարժման գաղափարը: Առասպելական հերոսներ Հայկի և Բելի պայքարն ու առաջինի հաղթանակը սլոակ չի նշանակում անցյալի գովերգում, այլ նաև ինչոր կարգի արձագանք ժամանակի ազգային ազատագրական շարժումներին:

Մ. Թադիադյանը «Հայկ ի տեսիլ Հայկազնին» պոեմում հանդես է գալիս լուսավորության դիրքերից: Պոեմը գրելու ժամանակ Հայաստանի մի մասն իր բախտը կապել էր Ռուսաստանի հետ, որին մեծ նշանակություն էր տալիս Թադիադյանը:

Երկախոսության ձև է ստացել պոեմը, որտեղ հանդես է գալիս Հայկ Նահապետը և խոսում բանաստեղծի հետ: Նա ներկայացվում է իր խոհերով, իր հույզերով, նայում Մասիս լեռան ստորոտին ընկած և իր վաղեմի փառքը կորցրած Հայաստանին ու ողբում նրա ծանր վիճակը:

Այնուհետև պոեմում երևում է ինքը՝ պոետը, որ տառապում է և դառն օրեր անցկացնում պանդխտության մեջ: Խոհերով տարված, նա հիշում է նաև իր կորցրած Թանգին: Հանկարծ երևում է Հայկ Նահապետը: Շատ գեղեցիկ և պատկերավոր է նկարագրված հայոց հսկայի երևալը: Նահապետը նրան հորդորում է վերագառնալ հայրենիք և աշխատել նրա բարօրության համար: Այնտեղ մշակներ շատ կան, ասում է Նահապետը, զնա և բնկերացիր նրանց:

Անհալ յարվւոյն շնորհաց,

Ընդդէմ ճգանց կայ նոցուն

Գնա և դու ընդ նոսա,

Վասն հայրենեաց վաստակեա³⁰:

Պոեմի գաղափարը հայրենիքում կարող ուժերի համախմբումն է, հայրենիքը ծանր վիճակից հանկը, որ բխում է լուսավորչի հայրենասիրական հայացքներից:

³⁰ «Եղերեղոսյան...», էջ 106:

Ինչով է տարբերվում լուսավորիչ-դեմոկրատ Խ. Աբով-
յանի «Մուտ Հայկազն ի Հայաստան և արհամիրք Երեւակա-
լության նորա ի ժամ պատերազմի ի 1826 ամի» հայրենա-
սիրական դաշափարներով և մեծ հուզականությամբ գրված
պոեմը Մ. Թադիաղյանի վերահիշյալ պոեմից:

Ճիշտ է, կառուցվածքով նման են, երկու պոեմում էլ
բանաստեղծներին հետաքրքրում է ժողովրդի վիճակը, ժո-
ղովրդական ուժերի համախմբումը և այլն, սակայն Աբով-
յանը միանգամայն նոր, լուսավորական-դեմոկրատական
գիրքերից է մոտենում խնդրին: Նա բացորոշ նկարագրում է
Հայաստանի մի մասի ազատագրումը Ռուսաստանի կող-
մից ու մեծ հույս է կապում նրա հետ:

«Մեկ թվում է, որ երկու գործիչների աշխարհայացքի
առհամանգիծը պետք է անցկացնել ոչ թե պատմական հա-
ջորդվածության փաստի վրայով (եթե նույնիսկ լրիվ շանտե-
սենք այս), այլ այն տարածության, որով առանձնա-
նում են հայկական լուսավորական շարժման տարբեր թևե-
րը: Եթե Թադիաղյանը կրում էր լուսավորական շարժման
վաղ շրջանի լիբերալ - պահպանողական հայեցողյունը,
ապա Աբովյանը ուղեգծում էր հայ լուսավորականության դե-
մոկրատական հոսանք: Սրանով է պայմանավորվում այն
փաստը, որ Աբովյանը արմատականորեն էր լուծում ազգա-
լին, սոցիալական և մտավոր կյանքի էական հարցերը, մինչ-
դեռ Թադիաղյանը չկարողացավ ազատագրվել հին դադա-
սիարարանության կապանքներից»³¹:

Մ. Թադիաղյանի «Սոս և Սոնդիպի» վեպ-պոեմը առանձ-
նահատուկ տեղ է գրավում հայկական պոեզիայում: «Սոս և
Սոնդիպի» լայնակառավ վեպ-պոեմը հայ պոեզիայի լավա-
գույն հուշարձաններից մեկն է՝ կլասիցիզմից ումանտիզմ
ոճական անցման իմաստով: Այն դնում էր շափաղանց հե-
տադիմիտ բանաստեղծական նորարարութլան սկիզբը, նորա-

31 Մ. Սարխյան, Հայկական ումանտիզմ, 1966, էջ 116:

բարություն, որ հատկանշվում է ուսմանտիկական հերոսների և արկածային սյուժեի օգտագործման փաստով:

«Սոս և Սոնդիպին» տիպիկ անցումնային պոեմ է: Այստեղ համադրվում են կլասիցիստական և ուսմանտիկական գեղարվեստական մտածողության առանձին տարրերը՝ մի յուրահատուկ դաշնության մեջ մտնելով պատումի և սյուժեազգծի առանձին հատվածներում: Տիրապետողն, իհարկե, ուսմանտիկական պատկերամտածողությունն է, քանի որ իր իսկ հեղինակի հարցադրումներն ու գաղափարական ելակետը ամբողջովին ադերսված են վաղ լուսավորական ուսմանտիպի ընդհանուր գաղափարաբանությունը:

Բայց կլասիցիզմի բանաստեղծական դպրոցը, որ անցել էր Թադիսպանը և նրանից ժառանգած արտգրիգիաները, որպես սձական-մտածողական իրողություններ, դեռ ամուր նստած են նրա մեջ: Թերևս այդ է պատճառը, որ «Սոս և Սոնդիպին» պոեմում գտնում ենք գրական տարրեր ոճերի այդօրինակ զուգակցումն ու համադրումը: Այդ տոթիվ «Հայկական ուսմանտիպ» դրքում կարդում ենք. «Ռոմանտիզմի պոետիկան ուրույն ձևով է իրացված «Սոս և Սոնդիպին» պոեմում: Թեև այստեղ առկա են կլասիկական պոեմի որոշ տարրեր, ինչպես, օրինակ, աստվածների մասնակցությունը գործողությունների ընթացքին և այլն, այնուամենայնիվ, իր բովանդակությամբ, իր գաղափարներով և արտահայտչական իր ձևերով այն հիմնականում ելնում է ուսմանտիկական պոեմի սկզբունքներից»³²:

Իր կառուցվածքով «Սոս և Սոնդիպին» պոեմը նման է կլասիցիստների երկերին: Հեղինակը յուրաքանչյուր հատվածի սկզբում (պոեմը բաղկացած է հինգ գլխից) համառոտ շարադրում է այդ հատվածի բովանդակությունը: Լեզուն զբոսբոս է: Սակայն պոեմի հիմքում զննելով Սոսի ու Սոնդիպիի սիրո ուսմանտիկան, միանգամայն հեռանում է կլասիցիզմից: Պոեմում սրպես գիցաբանական հերոս հանդես է

32 Ս. Սարինյան, Հայկական ուսմանտիպ, 1966, էջ 110—111:

գալիս միայն Աստղիկ դիցուհին, այն էլ որպէս գիտողի դերում: Մինչդեռ մյուս հերոսները՝ Սոսը, Սոնդիպին, Կալիդասը և ուրիշներ Թաղիադջանի երեակայական հերոսներն են, որոնց հանդես է բերում հնօրյա շրջանի հայ և հնդկ ժողովուրդների ունեցած բարեկամական հարաբերութիւնների մէջ: Ռոմանտիզմի գիտակցումը և գրականութեան մէջ որպէս ուղղութիւն կիրառելը Թաղիադջանի համար պատահական չէր, այլ միանգամայն հասկանալի ու օրինաշար:

Բայրոնն ու Շելլին, որոնց ստեղծագործութեանը մոտիկից ծանոթ էր Թաղիադջանը, չէին կարող չազդել նրա ստեղծագործութեան վրա: Հայ գրականութիւնն էլ արդեն իր վարդապետն ուր շրջանն էր տպւում: Այժմ հասկանալի է, թե Թաղիադջանը ինչո՞ւ թերի թողեց միանգամայն կլասիցիստական իր «Նդերերգութիւն...» պոեմը և ձեռնարկեց «Սոս և Սոնդիպին» ռոմանտիկական երկին, որը գրել է 1843 թ. ու լույս ընծայել 1847 թ. Կալկաթայում:

«Թաղիադջանը նոր բովանդակութիւն է մտցնում դասական պոեմի ձևական սկզբունքների մէջ: Համազգային թեմաների փոխարեն նա վերցնում է գերազանցապէս հերոսի անհատական կյանքի հետ կապվող հարցեր, արծարծում է հումանիստական և լուսավորական գաղափարներ: Նա ընտրում է կլասիցիստական պոեմի համար բոլորովին անսովոր տաղաշարութիւն (շատ կարճ տողերով), որն ավելի համապատասխանում է լիրիկական տրամագրութիւնների արտահայտման, քան թե երկարաշունչ էպիկական նկարագրութիւնների խնդրին»³³:

Պոեմի գլխավոր հերոսներն են Սոսը և Սոնդիպին: Սոնդիպիի անարատ սիրո շուրջն է հշուտվում ամբողջ պատմութեանը: Սոնդիպին անկեղծօրէն սիրում է և ցանկանում նույնպէս սիրվել: Բայց երբ տեսնում է, որ ինքը խաբւած է, ամեն միջոցի դիմում է, որպէսզի վրեժ լուծի: Սոնդիպին իր

33 Էդ. Զրաչյան, Պոեմի ժանրը սովետահայ գրականութեան մէջ, 1955; էջ 44:

հայրենիքին, իր դավանանքին նվիրված մի անհատ է, որը սրբությամբ պաշտպանում է այն բոլորը, ինչը կտրված է իր հայրենիքի ու իրենց սովորությունների հետ:

Սոսը մի բաջ և հանգուզն երիտասարդ է, որը սիրելով Սոնդիպիին՝ ամեն միջոց գործադրում է, որպեսզի հասնի իր սիրուն:

Բանաստեղծը գովերգում է անկեղծ և ճշմարիտ սերը: Այդ սերը խրախուսում, հերոսացնում է մարդուն և նույնիսկ անմահացնում:

Մահացուն սիրով
Ղորզ անմահանայ³⁴:

Անկեղծ և ճշմարիտ սերը փշրում է դավանական ամեն մի խոչընդոտ: Սոսի համար միևնույն է, ինքը սիրել է և հավատարիմ է մնում իր սիրուն:

Երբ սիրա ընդ սրտի
Սիրով շաղկապի,
Ոչ ազդ, ոչ ազանդ
Անդ ունի զտեղի³⁵:

Սոսի և Սոնդիպիի առաջ ծառացած է ֆեոդալական եկեղեցին իր խիստ օրհնքներով:

Օրենք տակաւին,
Թոյլ ոչ տան նմին,
Պսակ հարսանեաց
Կապել վերստին³⁶:

Այստեղ պարզ երևում է, որ ֆեոդալական հարաբերությունները դեռևս զորեղ ազդեցություն ունեն մարդկանց վրա:

34 Մ. Թալիադյան. Սոս և Սոնդիպի, էջ 55:

35 նույն տեղում, էջ 103:

36 նույն տեղում, էջ 153:

Թագիադյանը խնդիրը լուծում է հօգուտ սիրող սրտերի։
Նրանք մոռանում են ամեն մի ծիսակատարություն, ոտնա-
կոխ են անում ամեն մի օրենք և ավելի ամուր սիրով են
կապվում միմյանց։

Բանաստեղծը Սոսի ազնվությունը, անկեղծությունն ու
քաջությունը հակադրել է Կալիդասին՝ որպես իր սիրո մեջ
կեղծ, թուլամորթ մի երիտասարդի, որը ժամանակավոր հա-
ջողությունից և ոսկու փայլից շլացել և դավաճանել է իր
ւիրուն։ Սոսը անկաշառ սիրո մարմնացում է։

Պահում մեծ տեղ է գտել նաև հայրենասիրության գա-
ղափարը։ Հայրենի երկրի, հայ քաջերի զովքը Սոսն անում է
տառնձին հպարտությունը։ Սոսի համար մեծ պատիվ է, երբ
նա Սոնդիլային ծանոթացնում է հայ քաջերի և նրանց հե-
րոսական գործունեության հետ։ Սոսը զովեստով է խոսում
հայ ժողովրդի անցյալի և ներկա քաջագործության մասին.

Նա քաջ առաջին.
Քաջ կայ տակաւին
Եւ պերճ ի պայծառ
Ճառագայթ բանին։

Լինելով հայ ժողովրդի լուսավորության ռազմիրա, Մ.
Թագիադյանը, սակայն, չի սահմանափակվում նեղ հայրե-
նասիրական հայացքների մեջ։ Անհուն սիրով սիրելով իր
հայրենիքը, նա միաժամանակ արաահայտում է համամարդ-
կային զղացմունքներ։ Նեղ ազգասիրությունը չէ, որ հանդես
է գալիս նրա ստեղծագործություններում։ Սոսն ինչ երազում
է Հայաստանի համար, նույնը ցանկանում է Հնդկաստանի
համար։ Նա անսահման թախիծ ու տրամուլյուն է ապրում,
երբ լսում է հնդիկ աշխատավոր ժողովրդի տառապանքնե-
րի մասին և բացականչում է.

Որք գաշխարհ հնդկաց
Քամեցին յարեանց

Հոկ վասն լկտի
Յանկուֆեան իւրեանց³⁷։

Սոսի համամարդկային զգացմունքներից մեկն էլ աչն է,
բոր նա վիշտ ու տառապանք է տեսնում ոչ միայն Հնդկաստան-
նում, այլև համայն աշխարհում։

Եւ դի մի առ մի,
Վայր տառնց վշտի
Ի ներքոյ երկնից՝
Ոչ ուրէք տեսի³⁸։

Թաղիաղյանը «Սոս և Սոնդիպի» պոեմում արտահայ-
տել է ոչ միայն սեր աշխատավոր ժողովրդի նկատմամբ,
այլև անկեղծ, անկաշառ ու ազատ սիրո վեհություն է նա տե-
սել աշխատավորական խավերում։

Ընդ հիւզ աղքատին,
Առաւել հաճիմ.
Քան ընդ արքունիս
Տաներան բաջին.
Մարդ քանի պարզ կեայ
Աճի սէր նորա.
Բայց ընդ ճոխութեան
Ոխն յաւելանա³⁹։

«Սոս և Սոնդիպի» պոեմում ոսմանական են բնու-
թյան կենդանի պատկերավոր ու խոսուն նկարագրություննե-
րը։

«Սոս և Սոնդիպի» պոեմում տեղ են դրել նաեւ ժողո-
վրդական որոշ տաացվածքներ, թեւավոր խոսքեր ու արտա-
հայտություններ։

37 Մ. Թաղիաղյան, Սոս և Սոնդիպի, էջ 23։

38 նույն տեղում։

39 նույն տեղում, էջ 67։

Ինչպէս իր ստեղծագործութեան մեջ աստատարակ, այս պոեմում նույնպէս բանաստեղծը քարոզում է ոչ թէ ժուժկալութեան, այլ կշանքի վաշկեր: Ուրախ ապրել կշանքում, վաշկել գինին՝

Զի գինի և դեղ
Թէ շիցեն մի տեղ,
Զիա՞րդ ազդիցեն
Որ հաճ ու համեղ⁴⁰:

Թաղիաղյանի պոեմի լեզուն հարուստ է, ճոխ: Հերոսների խոսքն անհատականացած է: Իր հարստութեամբ, հոխութեամբ հանդերձ, օրինակ, Սոսի կերպարի լնդվական ոճավորումը վերամբարձ չէ, ավելի պատկերավոր է ու դեղեցիկ, նույնիսկ որոշ տեղերում ժողովրդական.

Մին՝ աշնպէս խունջիկ
Մին՝ աշնպէս մնջիկ,
Մին նազ նազելով՝
Գործ առնէ հերիք⁴¹:

Մինչպէս աստվածուհու՝ Աստղիկի ոճը վերամբարձ է, շեշտովոր և հրամայական:

Թաղիաղյանը գովերգում է աշխատանքը և պախաբուկում ձրիակերներին ու թուլամորթներին: Կալիդասին հակադրելով Սոսին՝ վերջինիս խրատում է, որ անաշխատանք, առանց քրտինք թափելու ձեռք բերած հացը գժվարամուրս է: Սոսը պետք է ոչ թէ խաբեութեան, այլ պայքարի ու հաղթութեան միջոցով ախրանա իր սիրուն:

Գնա Սօս վանի
Զի հաց օտարի
Զրին կերողաց
Դժուարաւ մարսի⁴²:

⁴⁰ նույն տեղում, էջ 16:

⁴¹ նույն տեղում:

⁴² նույն տեղում, էջ 79:

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՁԱԿԸ

Հայ նոր գրականության պատմության մեջ Մ. Թաղիադյանի գեղարվեստական արձակը ուրույն տեղ է գրավում: Այն կապված է վիպագրության նորագույն շրջանի առաջին սրտնումների հետ և այդ իմաստով առաջնեկ և անդրանիկ նախափորձերից մեկն է:

XIX դարի 40-ական թվականներին Հայ գեղարվեստական արձակը տակավին նոր էր ձևավորվում, այդ պատճառով ամեն մի ինքնուրույն կամ նույնիսկ փոխադրված գործ՝ իր վրա կրում էր ձևավորման շրջանի բոլոր անպատեհությունները:

Մենք չունենք մեր միջնադարյան վեպը՝ այս ժանրի լիակատար իմաստով: Գեղարվեստական արձակը մեծ մասամբ ձևավորվում էր հվրոպական և ռուսական գրականության ակներև ազդեցությամբ: Ժանրերից բացի (վեպ, պատմվածք, նովել և այլն), կային այլ զգվարություններ. ստեղծագործական մեթոդի խնդիրը, սյուժեի կառուցման եղանակները, գրական կերպարի բմբնումը և այլն նորահայտ կատեգորիաներ էին արձակի բնագավառում: Սրանք բոլորն էլ առնվում էին հվրոպական վիպագրությունից՝ նմանակվում էին կամ ընդօրինակվում ավել կամ պակաս հարազատությամբ: Թաղիադյանը կարգացած մարդ էր. նա ծանոթ էր Վալտեր Սկոտի, Դիկկենսի, Դանիել ԴեՖոյի ստեղծագործություններին: Թարգմանաբար և բնագրով կարդացել էր հվրոպական շատ հեղինակներ:

Թաղիադյանին, ինչպես և Աբովյանին, բաժին էր ընկել չափազանց ծանր պարտականություն. նրանք հանդես

էին կէկէ աչն ժամանակ, երբ հարկավոր էր ամեն ինչ ստեղծել՝ գրական ժանրից սկսած մինչև զեղարվեստական խոսքի տարբերք: Այս պայմաններում, հասկանալի է, ընդօրինակումը արդարացվում էր, քանի որ այստեղ գրական մշտածողութեան յուրացման հարցն էր դրված և ոչ թե ինքնուրույն ազգային գրականութեանից հրաժարվելու խնդիրը:

XIX դարի առաջին հիսնամյակում բավական շատ գործեր թարգմանվեցին:

Տակավին XVIII դարի վերջում, 1793 թ. Նոր Նախիջևանում լույս է տեսնում Ֆենելոնի «Արկածք Տելեմաքա» ստեղծագործությունը Մ. Խոճենցի թարգմանությամբ, որը հետագայում թարգմանել է նաև Մ. Զախջախյանը (1826): Մ. Զախջախյանի թարգմանությամբ 1825 թ. լույս է տեսնում Ս. Գեսների «Ժ մահ Արեւի» ստեղծագործությունը: Միլտոնի «Դրախտ կորուստը» լույս է տեսել Վենետիկում 1824 թ. Հ. Էկվերյանի թարգմանությամբ, իսկ 1853 թվականին՝ Ժ. Ֆլորիանի «Նումա Պոմպիլիոսը»:

XIX դարի սկզբին երևում են նաև աշխարհաբար լեզվով թարգմանություններ: Այսպես, Դանիել Դեֆոյի «Ռոբինսոն Կրուզոն» լույս է տեսնում 1818 թվականին Մ. Բըրժլյանի թարգմանությամբ, երկրորդ անգամ տպագրվում է 1836 թվականին:

XIX դարի առաջին կեսում թարգմանվում կամ փոխադրվում են բրիտանական բարոյախոսություն քարոզող մի շարք գրքեր՝ արևմտահայ աշխարհաբար լեզվով: 1840 թ. Վենետիկում լույս է տեսնում «Երանյակ անունով Թանկոյի թագուհիին պատմությունը», Զմյուռնիայում՝ «Հովսեփին պատմությունը» (1847), «Խաշնարածին աղջկանը՝ Եղիսաբեթին երջանիկ մահը» (1841), «Երկու գաղնուկներուն պատմությունը» (1842): «Մին արաբ ծառայի պատմությունը» լույս է տեսել 1830 թ. Մոսկվայում:

Հնդկահայ գաղթօջախում XVIII դարի վերջին քառորդից ձևակերպվում է ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսությունը: Քաղաքացիական-հրապարակա-

խոստական արձակի նմուշ է «նոր տետրակ, որ կոչի հարգութակ»-ը (1772):

Հ. Շահամիրյանի թարգմանությունը 1812 թ. Մադրասում լույս է տեսնում Վոլտերի «Հուլիոս Կեսարի մահը» ողբերգությունը: Այնուհետև Թ. Ավետումյանի թարգմանությունը Կալկաթայում լույս են տեսնում Սեն Պիևի «Պավլոս և Վերգինիա» (1830) և Օլիվեր Գոլդսմիտի «Վերվիլդափոխերեն» (1848) ստեղծագործությունները:

1846 թ. սկզբին «Ազգասերի» մի քանի համարներում, ապա առանձին գրքով, լույս է տեսնում հնդկահայ գրող, թարգմանիչ և հասարակական գործիչ Թադևոս Խաչիկ Ավետումյանի «Արամայիս» վիպակը: Իր ժամանակի համար, տնշուշտ, այս ստեղծագործությունը ունի գրական-պատմական նշանակություն: Զիշտ է, հնդիսական նկարագրած դեպքերը տեղի են ունեցել հնդկահայ գաղութում, բայց թեման միանգամայն հայկական է: Ավետումյանի վիպակի աչն մասը, որ տպագրվել է «Ազգասերի» առաջին համարներում աշխարհարար է (Ջուլաջի բարբառով), իսկ երբ «Ազգասերը» աշխարհարարից անցնում է գրաբարի, ապա «Արամայիս» վիպակը նույնպես տպագրվում է գրաբար: «Արամայիսը» որոշակիորեն ոտմանաիկական ստեղծագործություն է: Ռոմանտիզմի դիրքերից Ավետումյանը քարոզում է ազգապահպանման գաղափարը:

Ահա այսպիսին էր հայ գեղարվեստական արձակի վիճակը, երբ XIX դարի 40-ական թվականներին Մ. Թադիսդյանը հանդես եկավ երկու վեպերով՝ «Վեպ Վարդգիսի» և «Վեպ Վարսենկան»:

XIX դարի 40-ական թվականներին Թադիսդյանը թեալիսում է կյանքի ավելի հասուն շրջանը: Ազդվելով հայ բաղամտդարյան գրականության և ժողովրդական ստեղծագործության տկունքներից և միաժամանակ կարգալուծելով եվրոպական գրականության խոշորագույն արձակագիրներին՝ Դիկենս, Վ. Սկոտ և ուրիշներ, նա դնաց դեպի նորագույն գեղարվեստական արձակը և ինչ-որ շափով առաջ մղեց նրա զարգացումը:

Հայ նոր դրականութեան երկունքի շրջանում Քաղիադ-
յանն իր վեպերով աշխարհիկ բովանդակութեան մտքերի
հայ գեղարվեստական արձակի մեջ: Սա շատ կարևոր հան-
դամանք է Մ. Քաղիադյանի գրական գեմքը բնութագրելու
համար:

Մ. Քաղիադյանը խորապես գիտակցում է գեղարվես-
տական արձակի գերը մարդկանց դաստիարակութեան գոր-
ծում: Նա գտնում է, որ գեղարվեստական գրականութեանը
կտրուկ է մարդու մեջ առաջացնել սեր գեպի աշխատանքն ու
աշխատավոր մարդը, սեր գեպի հայրենիքը: Նա գտնում է,
որ գեղարվեստական գրականութեանը կտրելի է ծառայեց-
նել սրբուհի պաշարի միջոց բնութեան երևույթների և հասա-
րակութեան մեջ գոյութեան ունեցող շար ուժերի գեմ:

Որպեսզի պարզ դառնա, թե Մ. Քաղիադյանը որքան
բարձր է գնահատել գեղարվեստական արձակի նշանակու-
թյունը, հարկ է ուշադրութեան դարձնել «Վեպ Վարսենկանի»
առաջաբանում արտահայտած նրա մտքերին:

Վեպի առաջաբանում Քաղիադյանը շարադրելով իր հա-
յացքները, որոնց ելակետը լուսավորականութեանն է, ցույց
է տվել, որ մինչ այդ եղած կրոնական գրքերը չեն կարող
դաստիարակիչ գեր կատարել, որ անհրաժեշտ է ունենալ
կյանքից բխող սակզմագործութեաններ, որոնք հոգեկան մեծ
բովանդակութեան պատճառելուց բացի, մեծ ազդեցութեան
կունենային պատանիների ու աղջիկների դաստիարակու-
թեան գործում:

«Պատահեցաք երբեմն լեզուագէտ սիրելոյ, զի ընթեո-
նոյր առաջապէս աչլ ազգենիս, հարցրի թէ ընդէ՞ր հայերէն
ոչ ընթեոնոյր, պատասխանեալոյ վասն ամենայն գրեանք մեր
ծանր են և լուրջ գիտութիւնք և գրօսանս մտաց ոչ տան ցոյց,
միայն գրաչափութիւն քո առ այն և ի դմին աչղմիք այն-
բան ոչ պակտսեն գրիչք ազգին»¹:

1 Մ. Քաղիադյան, Վեպ Վարսենկան, Կարկաթա, 1847, էջ 1:

Մ. Թաղիադյանի ստեղծագործությունն ակունքը հայկական բազմադարյան ժողովրդական ստեղծագործությունն է, որից մեծապես օգտվում է նաև Թաղիադյանը միաժամանակ ինքնուրույն և ինքնատիպ շեշտ է մտցրել հայ արձակի մեջ: «Վեպ Վարդգիսի» և «Վեպ Վարսենիկան» ստեղծագործությունները ապագրվել են «Արարատյան բնկերություն» տպարանում առաջինը՝ 1846 թվականին, երկրորդը՝ 1847 թվականին:

«ՎԵՊ ՎԱՐԳԻՍԻ»

Մ. Թաղիադյանը «Վեպ Վարդգիսի» առաջաբանում ներկատել է. «Մի տող ի սմանէ շատ արժէ ի գարթուցանել զոգիս բաջացն հայկապունեաց, որում յաւէտ ոյլտա ունիմք, բան զհազար մատաննս վեհերոտաց: Ճշմարիտ աղգասերին է Երինակաւ բաջի գործոց նախահարց՝ զոգիս որդոց զարթուցանել յազատութիւն հայրենեաց»²:

Ուրեմն գիտակցելով գրականության ուժը, Մ. Թաղիադյանը նպատակ է դրել անհիշելի ժամանակներից բազելով իր ստեղծագործության նյութը՝ արծարծել ժամանակի համար միանգամայն հրատապ և կարևոր խնդիրներ: Այս է նրա երկի գրա - պատմական արժանիքը:

Վեպի զլխավոր հերոսը Վարդգես-Աբեղենն է: Նա առաքինության, բարոյականության, հայրենասիրության և ուժի մարմնացում է: Վարդգես-Աբեղենը ձգտում է խաղաղ կյանք ստեղծել Երվանդ թագավորի երկրում: Իր ուժն ու հնարամտությունը Վարդգեսը միշտ ի բարին է գործադրում: Նա դաժան է շարագործների նկատմամբ և ահավոր դատատան է տեսնում նրանց հետ: Նրա կոտորած առաջին քաջն աչն է, որ անմեղ քաղաքացուն փրկի վտանգից: Վարդգեսը վեպում հանդես է գալիս երեք կերպարով՝ մերթ ավազակ և գժնի Աբեղեն, մերթ՝ Զուրան՝ Աղվանից իշխան, ու վերջում՝ կրկին Վարդգես: Բոլոր մարմնավորումներում էլ նա ունի

2 Մ. Թաղիադյան, Վեպ Վարդգիսի, Կապաթա, 1846, էջ 1:

եմէկ նպատակ: Բայց մի տեղ պարզում է իր ուժ լինելը, մի տեղ այդ հանգամանքն օգտագործում է վերջ տալու ավագաններին և ի հաշտ բերելու գավաղիւ պալատականներին, որոնք ավագանների միջոցով դավ էին նյութում Երվանդ թագավորի դէմ: Վարդգեսը ունի ռոմանտիկական շատ զր-
ծեր: Ուշագրտով հատվածներ են Արեղենի և Հայկունու զրույ-
ցը, Արեղեն-Վարդգեսի մենախոսութիւնը, Արեղեն-Զուրանի
զրույցը Հայկանդուխտի, Երվանդի հետ և այլն:

Հայկանդուխտը առաքինի կնոջ կերպար է: Չնայած նա
չի մասնակցում պետական գործերին, բայց իր ներկայու-
թեամբ նպաստում է գեղքերի ծավալմանը: Նա իր սիրո մեջ
անդրաձայն է:

Երվանդ թագավորը դուրահավատ է: Նա չի կարողա-
նում տեսնել իր պալատում տիրող խառնիճադանձ զրոյթու-
թիւն: Բայց, միաժամանակ, նա շատ է հոգ տանում պետական
իշխանութեան ամրապնդման համար: Նա հոգատար է նաև
քաղաքացիների նկատմամբ և ամեն կերպ աշխատում է
քաղաքում արմատախիլ անել ավագակային որջերը: Նա
նույնիսկ զլխագին է նշանակում Արեղենի համար:

«Վեպ Վարդգեսի» ստեղծագործութեան հիմքում ընկած
են հայրենասիրութեան, հումանիզմի, մարդկային սիրո և
խաղաղ կյանքի գաղափարները: Այդ ամենը Մ. Թադիազյա-
նը տեսնում է կենտրոնական իշխանութեան և ուժեղ անհա-
տի մեջ: Համահնչյուն էր իր ժամանակի հետ այս գաղափա-
քը, թե ոչ: Այս: Հայաստանի վիճակը և հայ ժողովրդի կա-
ցութիւնը թելադրում էր ունենալ կենտրոնական իշխանու-
թեան: Հնդկահայերը առաջադրել էին այդ խնդիրը հրապա-
րակախոսութեան մեջ, Թադիազյանը գեղարվեստական գրա-
կանութեան միջոցով հաստատում էր այն:

Վեպում նկարագրված է ոչ միայն քաղաքում տիրող ա-
վաղակութեան և գրաւոր ազատվելու միջոցները, այլ
նաև պալատականների դավադրութիւնները, նրանց խարդա-
վանքները, որի վերացմանը ավելի մեծ նշանակութիւն էր
տալիս Թադիազյանը:

Վեպում քննադատվում են կրոնավարների խարդախությունները, կաշառակերությունը, սուտ խոստումները և այլն:

Ռոմանտիզմին հատուկ գծերով է օժտված վեպի գլխավոր հերոս Վարդգես-Արեղենը: Միանգամայն ուսմանտիկական է նրա արկածային կյանքը: Ռոմանտիկական է նաև Վարդգեսի և Հայկանդուխտի սիրո նկարագրությունը:

Զնայած Մ. Թադևադյանը իր գրքի հիմքում դնում է հայ առասպելական շրջանի գեպրեքը և անցքերը, բայց բանի ուր վկայակոչում է Մովսես Խորենացուն և նրա «Հայոց պատմություն» գրքից մեջ է բերում Վարդգեսի մասին եղած հատվածը, ուստի հարցերին մոտենում է պատմական տեսակետից:

Մ. Թադևադյանի «Վեպ Վարդգեսին» ամբողջովին չի օգտվում ինքնուրույն ստեղծագործություն լինելու իրավունքից: Եվրոպական գրականության մեջ ունենալով իր նախատիպը, այն ինչ-որ չափով փոխադրության կամ թարգմանության բնույթ ունի:

«Վեպ Վարդգեսի» ստեղծագործությունը տպագրվել է Արարատյան ընկերության տպարանում 1846 թ.: Տպագրելուց առաջ Մ. Թադևադյանը «Ազգասերում» հայտարարել է, որ ինքը «հառաջագրելա ստորագրությամբ տպել «Պատմություն Վարդգեսի տյառն Տուհայ», որո մասին Խորենացին մեր ունի. «Հատուած գնացեալ Վարդգէս մանուկն ի Տուհայ գառառէն... եկեալ նստեալ գՇրեշ բլրով, զԱրարմէդ քաղաքաւ կոեկ կոփեկ զգուռն նրուանդայ Արքայի»: Իսկ այժմ տըպագրվումա մերձ 250 երես...»³:

Համառոտ նկարագրելով բովանդակությունը, Թադևադյանը վերջում շեշտում է, որ իր միակ նպատակը հայրենասիրական կրակի բորբոքումն է, որին խիստ կարոտ են իրենք՝ հայերը:

Հայ բանասիրության մեջ առաջինը Ղ. Աղայանն է հանդես եկել և խոսել «Վեպ Վարդգեսի» մասին: Ղ. Աղայանը

3 «Ազգասեր», 1846, № 17, էջ 134:

զնահատելով Մ. Թաղիադյանի նախաձեռնությունը, գրքում արտահայտված առաջափոր դադափարները, նշել է, որ այն թարգմանություն է եվրոպական մի վեպից:

Համեմատելով եվրոպական վեպի ուսուերեն մի թարգմանությունը «Վեպ Վարդգիսի» հետ, Ղ. Աղայանը պահում է, որ սրանք նույն ստեղծագործություններն են, այն տարբերությամբ միայն, որ Թաղիադյանը շատ վարպետ ձևով կարողացել է փոխել անունները և հարմարեցնել հայոց հին անցյալին: Ղ. Աղայանը, սակայն, հետագայում, երբ գրում է այդ մասին, արդեն մոռացած է լինում թարգմանված եվրոպական գրքի անունն ու հեղինակը:

Գրականագետ Ռ. Նանումյանը «Մ. Թաղիադյան» զբոսում ակնարկում է Ղ. Աղայանի արած հայտարարության մասին, բայց կասկածի տակ առնելով այն, դարձյալ վեպը համարում է Թաղիադյանի սեփական ստեղծագործություն:

Ղ. Աղայանի նշած հետքերով որոնումներ կատարելիս մեզ օգնեցին Մոսկվայի Լենինի անվան Պետական գրադարանի բիրլինգրաֆիայի բաժնի աշխատակիցները և գտան մեզ հետաքրքրող գիրքը:

Ահա այն «Разбойник в Венеции, или ужасный Абеллино». Сочинение господина Левиса, автора «Монаха». Перевод с французского, издание третье, Москва в типографии Н. С. Всеволожского, 1816 г.

Ինչպես տեսնում ենք ուսուերեն թարգմանությունը կատարվել է ֆրանսերենից: Աղբյուրների մանրամասն հետազոտությունը ցույց տվեց, որ ստեղծագործության իսկական հեղինակը գերմանացի հայտնի և առաջափոր գրող, գրամատուրգ և զերասան Յշոկկե Հենրիխն է (Zschokke Heinrich, 1771—1848):

Գեղեցնը իր «Ծղելություններ և խոհեր» գրքում հայտնում է, որ երիտասարդական տարիներին ինքը կարդացել է Յշոկկեի պատմվածքները: Վ. Բելինսկին բազմաթիվ անգամներ հիշատակում է Յշոկկեի անունը և բարձր զնահատում նրա գործերը:

Յշտկէն 1794 թ. հրատարակել է «Մեծ ավազակ Աբալինո» („Abellino der grosse Bandit“) վեպը, որը հետագայում վեր է ածվել դրամայի և երկար մամանակ խաղացվել դերմանական բեմում:

Այդ ստեղծագործությունը «Վենետիկի հերոս» վերնագրով 1804 թ. անդերեն է թարգմանել անգլիացի վիպասան և դրամատուրգ Մ. Գ. Լուիզը, «Վանական» գրքի հեղինակը (Lewis Matthew Gregory—1773—1818 „The Brave of Venice“ a romance translated from the German, was Published in 1804):

Այս հրատարակությունն էլ հիմք է դարձել ֆրանսերեն թարգմանության համար, որի վերնագիրն է «Ավազակը Վենետիկում» („La Bandit de Venise“):

Ռուսերեն թարգմանությունը համեմատեցինք «Վեպ վարդգիսի» հետ և գտանք, որ իրոք նույն ստեղծագործություններն են: Գերմաներեն ստեղծագործության մեջ նկարագրված գործողությունը տեղի է ունեցել Վենետիկում: Նրկու ստեղծագործություններում էլ կառուցվածքը նույնն է: Թաղիադյանը հատուկ անունները հալացրել է, հարմարացրել հին առասպելական վիպասանական կյանքին: Հատուկ անունները փոխված են այսպես. Վենետիկ—Արմավիր, Ադրիատիկ ծով—Նրասիս, Նեապոլ—Տուհաց երկիր, իտալացի հարուստի սրգի գրաֆ Ռոդարվո—Վարդգես որդին բղիշխի Տուհաց, Աբելլինո—Աբելեն, օտարերկրացի Ֆլոդորդո—Զուրան, Ադվանից աշխատհից, թագավորի բարեկամուհի Ռոդարելլա—Թագավորի բույր Հայկանդուխտ, Դոմ—Նրվանդ թագավոր, Մատթեոս—Վաչկուն, Վալերի—Ասենակ և այլն:

«Վեպ վարդգիսի» և ուսական թարգմանության մեջ տարբերությունը հետևյալն է. Թաղիադյանն ավելացրել է առաջաբան, որի մեջ տալիս է իր նպատակների և այդ ստեղծագործության նշանակության մասին: «Վարդգեսը» բաղկացած է երեք մասից և 23 գլխից, իսկ ուսական թարգմանությունը՝ երկու մասից և 22 գլխից: Գլուխների և մասերի այս տարբերությունը չի խախտում գրքի կառուցվածքը:

Վերնագրերը նույնն են: «Վարդիսի» մեջ ավելին Ծ գլուխն է՝ «Ական Արմավիրա», որն առանձին տպագրվել է «Ազգասերում» 1846 թվականին: Վեպի վերջում Թադիագյանը մի քանի տողով նկարագրում է Արմավիրի խաղաղվելուց հետո նրվանդ թագավորի շինարարական աշխատանքները և հետագա խաղաղ կյանքը:

«Ազգասերում» տպված է հնդկահայ հասարակական գործիչ, Արարատյան քննկրության հիմնադիրներից մեկի՝ Մանուկ Զորարքյանի նամակը, որտեղ նա գովելով Թադիագյանի նախաձեռնությունը և շեշտելով «Վեպ Վարդգիսի» ազգասիրական և հայրենասիրական բնույթը, միաժամանակ խնդրում է ցույց տալ օգտագործած աղբյուրները:

Նամակից հետո «Ազգասերի» նույն համարում Թադիագյանը նորից շեշտելով գրքի հայրենասիրական բնույթը, խոստանում է առաջիկայում բավարարել Զորարքյանի խնդիրքը, բայց այս խոստումը խոստում էլ մնում է: Նրկի խարգմանական բնույթը հավանաբար հայտնի է եղել նրա մերձավորներին: Թադիագյանի ամենամոտ բարեկամ և աշխատակից Թադեոս Ավետումյանը, նրա մահվան առթիվ 1858 թ. «Արշալույս Արարատյան» թերթում տպագրված հոդվածում թվարկելով Թադիագյանի ինքնուրույն և թարգմանական գործերը, «Վեպ Վարդգիսին» թարգմանությունների շարքն է դասել: Տալով Մ. Թադիագյանի համառոտ կենսագրությունը, Ավետումյանը գրում է. «Թե որքան վառ էր եռանդ նորա յայսպիսի գործ, և որքան ժիր յաշխատութեան, գործք իւր ինքնին յայանեացեն քաջ: Զի ի միջոցի եօթն ամաց սակաւուց բացի տպագրութենէ «Ազգասէր» լրագրին և ի կասավարութենէ առանձին գլոցի իւրոյ, ի լոյս բնծայեաց և զչեւագա գրեանսն յօրինեալս իւրմէ: «Ալբրենարան», «Դաստիարակութիւն օրիորդաց» — «Ճանապարհորդութիւն ի Հայս», «Պատմութիւն պարսից», «Սօս և Սօնդիպի» — բանաստեղծութիւն շափեալ, «Վարսենիկ» ստեղծագործութիւն արձակ, և քերականութիւն համառոտ:

Եւ թարգմանեալս:

«Առակը պարսից», «Առաջնորդ մանկանց» և «Վարդգէս»¹:

Համոզված ենք, որ Մ. Թադիաղյանին քաջ հայտնի է, եղել հայ ժողովրդի մեջ պատմվող Վարդգեսի և Նրվանի Մա-կաովակյացի մասին եղած գրույցները և որ նա ցանկացել է՝ ազդասիրական ու հայրենասիրական իր գաղափարներն ար-տահայտելու համար, երբույթիան վեպի կառուցվածքով հան-դիս բերել հայ պատմական անցյալը:

«Վեպ ՎԱՐԾԵՆԻԱՆ»

Մ. Թադիաղյանի «Վեպ Վարսենկան» ստեղծագործու-թյունը ավելի ինքնատիպ է, որպէս առաջին վեպերից մեկը, ավելի ինքնորոշ մեր գրականութեան համար և ավելի լավ է բնութագրում Թադիաղյան արձակագրի դեմքը:

Վեպի թեման, ինչպէս նկատել է Լեոն Մանվելյանը, արեւելյան պատումներից է բաղված: Մ. Թադիաղյանը բացի հայկական աղբյուրներից ծանոթ է եղել նաեւ արեւելյան ժո-ղովուրդների մեջ տարածված այլ տարբերակների: Վեպի բու-վանդակութունը հետեւյալն է.

Աղվանից թագաւոր Վաչագանը ծպտված շրջում է Պար-տավ քաղաքում: Ճանապարհին մանում է մի պանդոկ, ուր նստած էին երեք աղքատ օտարականներ՝ Արզունին, Գեղե-նակը և Գուրգենը: Նրանցից մեկն ասում է, որ հոգնել է աշ-խատանքից, գոհ կլինի, որ արքան նրան թուշակ նշանակի. Նրկրորդն ասում է, որ կգերադասեր աղքատ մնալ, քան վա-հանակիւր լինել: Գեղենակը ցանկութեան է հայտնում լինել թագաւորի խոստովանահայրը, Արզունին՝ սպարապետ, իսկ Գուրգենը ցանկանում է խնդրել Վաչագան թագաւորի դուս-տրը Վարսենիկի ձեռքը: Այս գրույցը լսելուց հետո Վաչագա-նը տուն է գնում: Նա պալատում աչցելում է իր գուետը Վար-

¹ «Արշալույս Արարատյան», 1856, № 583: Այս հատվածը Մ. Նու-բանդյանը բաղվածաբար բերել է իր «Մեռելհարցուիւմ», Նրկեր, հ. 1, 1345, էջ 269:

սենիկին, որին դանում է իր գործած զգեստը հաղին: Այս արհեստը նա սովորել է Հռիփսիմյանց կուսանոցում: Արքայի հարցին, թե ո՞ր իշխանի հետ կցանկանա ամուսնանալ, Վարսենիկը պատասխանում է, որ թագավորի իշխաններից ոչ մեկին չի բնարի, որովհետև նրանք չեն կարող իրեն փրկել: պատահական վտանգից:

Հաջորդ օրը արքան կարգադրում է արքունիք բերել երեք պանդուխտներին: Նա ստիպում է, որ պատմեն այն բոլորը, ինչ խորհել են: Կսելուց հետո Վաչագան թագավորը Արղունուն զարձնում է սպարապետ, Գեղենակին՝ ավագ խորհրդական, իսկ Գուրգենին է տալիս Վարսենիկին: Վարսենիկը հրահանգվում է հոր կամքին: Արքան նրան զրկում է ժառանգությունից և պալման դնում, որ հեռանան իր երկրի սահմաններից:

Վարսենիկը և Գուրգենը հրաժեշտ են տալիս բոլորին ու հեռանում: Առաջին օրը նրանք զիշերում են Սավալան լեռան մոտ: Հետո հասնում են Միանդուար քաղաքը, որտեղ իշխում էր Վալեթ թագավորը: Գուրգենը իր վաստակած փողով դնում է տսեղ, թիւ և այլն: Վարսենիկը սկսում է տսեղնագործել: Շուտով քաղաքում տարածվում է Վարսենիկի համբավը, որի մասին լսում է Վալեթ թագավորը: Մի օր Գուրգենը քաղաքի ծալրամասով անցնելիս մի կնոջ ճիշդ է լսում, շտապում է օգնության, բայց նրան խաբում են, մոլորեցնում, երկաթյա դարպասից ներս տանում և ապա փակում են դուռը: Ատրնուշ բերդն էր, որտեղ ապրում էին զեներ և որին քաղաքի ժողովուրդը սարսափում էր մոտենալ: Գուրգենը մաքառում է և զեներին սպանում, բայց դուրս գալու հնարավորություն չի ունենում:

Վարսենիկն իմանալով Գուրգենի անհայտացման մասին դիմում է Վալեթ թագավորի օգնությանը, բայց վերջինս մերժում է, ասելով, որ այնտեղ զեներ են ապրում, հնարավոր չէ մոտենալ: Վարսենիկը տեսնելով, որ Վալեթը չի օգնում, դուրս է գալիս և միայնակ դնում զեպի Ատրնուշ: Վալեթը

ամօթահար է լինում կնոջ այս համարձակության առաջ և կարգադրում է իր գինվորներին գրոհելու բերդի վրա:

Գուրգենն ազատվում է: Գրավված բերդը հանձնում են Գուրգենին և Վարսենիկին: Վերջիններս անշափ հարատանում են, բայց իրենց հարստությունը տրամադրում են ազքատնիքին՝ և բարեկործություններ անում: Նրանց համբավը հասնում է Աղվանից աշխարհ, Վաչագան թագավորին: Վերջինս մեծամեծ նվերներով Գեղենակին և Արղւնուն ուղարկում է Գուրգենին և Վարսենիկին տեսություն:

Մ. Թաղիադյանի «Վեպ Վարսենկան» ստեղծագործության մեջ իշխում է առաջին հերթին ժողովրդական ստեղծագործության ազդեցությունը:

«Ինչ էլ լինի, ժողովրդական սյուժեի յուրացումն իբրև ազգային վեպի ստեղծման ուղեգիծ, գրական նորույթ էր, որի իմաստը երկակի է. մի կողմից դա մատնացույց է անում սյուժեների այն հարստությունը, որի վրա կարող է ձևավորվել գեղարվեստական արձակը, մյուս կողմից՝ ընձեռում հրնորավորություն՝ գրականության մեջ բերելու ժողովրդական կյանքի փրկստփայությունը»⁵:

Ինչպես կերպարների տիպականացումը, այնպես էլ սյուժեի զարգացումը վեպում կատարվում է ռոմանտիզմին հատուկ հղանակով: Անգամ բնության նկարագրությունը, չնայած այն թույլ է վեպում, ռոմանտիկական է: Այստեղ, ինչպես «Վեպ Վարդգիսի» վեպում, հրեում է հեղինակի սուրբեկտիվ վերաբերմունքը բնության հրեույթները նկարագրելիս: Մի հանգամանք, որ բնորոշ է ռոմանտիզմին:

Ուրեմն, եթե Թաղիադյանը իր շափածո ստեղծագործություններում մերթ կլասիցիստ է, մերթ ռոմանտիկ, ապա իր արձակ ստեղծագործությամբ, սոցիալ-քաղաքական միտնդամայն որոշակի պահանջների ազդեցությամբ կողմնորոշվում է դեպի ռոմանտիզմը:

«Վեպ Վարսենկան» ստեղծագործության մեջ Թաղիադյանը ցտնկացել է շեշտել արդար վաստակի և արհեստի մեծ

5 Ս. Սարգսյան, Հայկական ռոմանտիզմ, 1966, էջ 114:

նշանակութիւնը, նրա դերը: Որ ավելի լաւ է տղքատ լինել, բայց ունենալ արհեստ, արդար վաստակի տենչ, քան լինել շնորհքից զուրկ իշխան:

Վեպի գլխավոր հերոսը Վարսենիկն է: Սրա միջոցով Թաղիաղյանը ցանկացել է ցույց տալ կնոջ դերը հասարակական կյանքում: Այդ, իհարկե, նրա մոտ նորութիւնն է: Կնոջ ազատագրման հարցը, հասարակական կյանքում նրան տեղ տալու խնդիրը նա առաջ է քաշել վեպը գրելուց շատ առաջ:

Վարսենիկը Մ. Թաղիաղյանի իդեալական հերոսն է: Նա հրաժարվում է հոր անսահման հարստութիւնից ու դառնում տղքատ Գուրգենի կինը, չի ցանկանում լինել հարուստ, բայց անշնորհք իշխանի կին: Վարսենիկն իր արհեստով հրջանկութեան է հասել, երջանկացրել է նաև Գուրգենին: Նա իր առաքինութեան և աշխատասիրութեան շնորհիվ սիրվել է Վալէթ թագավորի արքունիքում: Վարսենիկը ոչ միայն հրաշալի արհեստ ունի, այլև քաջ է, խիզախ, խելացի: Նա իր խորհուրդներով ու հնարագիտութեամբ ապշեցնում է Գուրգենին: Վարսենիկը կնոջ իդեալական կերպարն է վեպում: Նա միաժամանակ աստվածավախ է, քրիստոնյա հաւատացյալ, հլու հնազանդ իր հորը:

Գուրգենը քաջ է, ուժեղ կամքի տեր և համարձակ: Նա ավելի շատ խոհուն և հեռատես է: Գուրգենը ցնորքների և տեխի չի ընկնում: Սկզբում նա նույնիսկ չի հաւատում, թե Վաչագան թագավորը իրեն և իր ընկերներին պաշտոններ և հարստութիւն կտա: Բայց վերջում միայն ցանկանում է ունենալ Վարսենիկին, քան ողջ աշխարհը: Չնայած Վարսենիկի շնորհիվ բավական բարեկեցիկ վիճակի է հասել, բայց շարունակում է աշխատել: Իր օրինակով է դաստիարակում նաև պատանի Հասոյին, որը կարծում է, թե ծնվել է միայն զոդութիւն և ավազակութիւն անելու համար: Գուրգենը ետ է պահում նրան այդ ուղուց և սովորեցնում արդար վաստակի ճանապարհը: Իր համբերութեամբ, բարութեամբ և մարդասիրութեամբ հանդերձ Գուրգենը դաժան է շարութեան նը-

կատամար: Գուրգենը նաև սիրող ու հավատարիմ ամուսին է: Նա խորհուրդներ է տալիս և խորհուրդներ լսում Վարսենիկից, հուշս ներշնչում և հուսով ներշնչվում իր հետադարձ գործունեության համար:

Վեպում կան մի շարք այլ կերպարներ:

Վաչագան թագավորը բարի է, գլխաւոր, բայց իր համոզմունքների համար չի խնայում նույնիսկ հարազատ ազգրկան:

Արցունն ու Գեղեհակը հակադրված են Գուրգենին: Ներանց ավելի շատ հետաքրքրում է հարստությունն ու փառքը, բան սիրտ երջանկությունը: Ավաղակ Հասոն այն կարծիքին է, որ ինքը գող է ծնվել և գողությունը էլ պետք է շարունակի իր կյանքը, բայց Գուրգենի ազդեցության ներքո դառնում է աշխատասեր ու առաքինի անձնավորություն: Մ. Թադիսագյանն այն միտքն է հայտնում, որ մարդիկ ի ծնն տառքինի, աշխատասեր և կամ գող ու ավաղակ չեն լինում: Միջավայրը, շրջապատը և պայմանները մարդու վրա կարող են եւ՛րով ազդեցություն գործել, եւ՛ վատ:

Մ. Թադիսագյանը ցանկանում է արմատախիլ տնել հասարակության մեջ տեղ գաած շարիքները: Նա աշխատում է բարի խրատների, համոզելու միջոցով դատախարակել մարդկանց: Թադիսագյանը չի հավատում շարքերի և դեերի գոյությունը: Նա գտնում է, որ Ասրնուշ բերգում բնակվում են հասարակության համար շարիք ծնող մարդիկ և ոչ շարքեր:

Խ. ԹԱՂԻԱԳՅԱՆԸ ՀՈՒՇԱԳՐՈՂ ԵՎ ՊԱՏՄԱՐԱՆ

Մ. Թաղիադյանի հուշագրությունների և ուղեգրությունների հիմնական գաղափարը լուսավորականությունն է: Հակառակ Մ. Բժշկյանի և Ս. Զալալյանի ուղեգրությունների, Թաղիադյանը նկարագրելով երկրի անցյալն ու ներկան, միշտ նկատի ունի ժողովրդի նյութական ու հոգևոր կյանքի վերականգնումը, վերակառուցումը: Թաղիադյանի ուղեգրությունները մի կողմից մոտենում են հրապարակախոսությանը, մյուս կողմից՝ զեղարվեստական արձակին: Թերևս հենց այդ պատճառով էլ «Ճանապարհորդություն ի Հայսը» երբեմն զիտվել է որպես զեղարվեստական գործ:

Իր հուշագրային գործերում Թաղիադյանը հայ ժողովրդի ազատագրության հարցը կապում էր երկիրը տնտեսապես զարգացնելու հետ: Սրան զուգընթաց նա ներկայացնում էր երկրի տնտեսական զարգացման մի ծրագիր, որի կենսագործման հեռանկարի մեջ գրողը նշմարում էր Հայաստանի տնտեսական ինքնորոշման և ազգային վերելքի հնարավորությունը: Մասնավորապես շեշտում էր արգյունաբերության, արհեստների և առևտրի զարգացման անհրաժեշտությունը՝ որպես տնտեսական հետամնացությունից զուրս գալու միակ ելք:

«Ճանապարհորդություն ի Հայս»-ը և «Ճանապարհորդություն ի Պարս»-ը մեծ ներգրում են հայ հուշագրային և ուղեգրային գրականության ասպարեկում և արժանի են լուրջ ուսումնասիրման:

Կենսագրական, պատմագրական, աշխարհագրական և ազգագրական արժեքավոր ստեղծագործություն է Մ. Թա-

ղիաղյանի «Ճանապարհորդութիւն ի Հայս»-ը: Այս ուղե-
գրութեան լույս աշխարհ գալուն որպէս զրդապատճառներ
ծառայել են, անշուշտ, ինչպէս հայ, այնպէս էլ եվրոպական
հեղինակների նման բնույթի գործերը:

«Ճանապարհորդութիւն ի Հայս»-ը Թաղիաղյանը տը-
պագրել է 1847 թ. Կալկաթայում և ձոնել Ներսէս Աշտարա-
կեցի կաթողիկոսին:

Թաղիաղյանի նպատակը չի եղել գրել իր կենսագրու-
թիւնը, այլ տալ ժամանակի բաղարական, տնտեսական,
լուսավորական-կուլտուրական հարցերի ճշգրիտ պատկերը:
Նրա հաղորդած տվյալները մեր պատմագրութեան, կուլտու-
րայի և զարգացման վիճակի, աշխարհագրութեան և այլ հար-
ցերի ուսումնասիրութեան համար արժեքավոր են և այսօր
էլ համարձակուրեն կարող ենք օգտվել դրանցից:

Գրքի առաջաբանում Թաղիաղյանն ասում է, որ դեռևս
Էրիտասարգ հասակից հրապարակել է իր համար շատ սիրելի
այդ աշխատանքով և ճանապարհորդութեան քննաքննում գրի
առել պատմական վայրերի, ժողովրդի ծեսերի, ժողովրդա-
կան սակեղծագործութեան և այլնի մասին: Ի տարբերութեան
Մինաս Բժշկյանի պատմական աշխատութեան, Թաղիաղյա-
նը ծանրացել է զխառնուրդով իր ժամանակի հիմնական
խնդիրների վրա:

«Ճանապարհորդութիւն ի Հայս»-ը բաղկացած է վեց
հատվածից. առաջին հատվածում Թաղիաղյանը նկարա-
գրում է իր մանկութիւնը, պատանեկութիւնը և ուսումնա-
սութիւնը Էջմիածնում, երկրորդ հատվածում՝ Էջմիածինը,
երրորդ հատվածում՝ Էջմիածնի կաթողիկոսութեան, կրօնա-
կան ծիսակատարութեան և ուսման մասին, չորրորդում՝
իր առաջին ճանապարհորդութիւնը, հինգերորդում՝ ճանա-
պարհորդութիւնը դեպի Արագածոտն, վեցերորդ հատվածում
նկարագրում է ճանապարհորդութիւնը Սյունիքում 1819 թ. և
ավարտում Հաղպատից դեպի Հնդկաստան ուղևորութեամբ:

«Ճանապարհորդութիւն ի Հայս» զրքում հանդէս են
բերված մի շարք պատմական անձնավորութիւններ: Թա-

դիադյանը կերպարը բնորոշելու մեծ հմտություն ունի: Լազ է նկարագրում էջմիածնի միաբաններից շատերի, այդ թվում իր ուսուցիչներից ոմանց կերպարները: Եփրեմ կաթողիկոսին նկարագրում է որպես բարի, բայց զուրահավատ ու բնավորությամբ թույլ, սակայն ժիր ու տոկուն մի մարդ: Բնորոշ գծերով է պատկերում Քուրդ Հովհաննես Բագրեան-դացուն՝ բարձրահասակ, բարակ, շեշտ երեսով, նոսր մուրուրով և ղեղնաբիր աչքերով մի մարդ, «բուլբուլին գուրկ մեր լեզվի աղնվական հմտությունից»:

Գրքում Թադիադյանը սիրով է պատկերել իր ուսուցիչ Պողոս վարդապետ Ղարադաղցու բարեմասնությունները, հայոց լեզվի, պատմության և գրականության բնագավառում նրա քաջատեղյակությունը, ուսուցանելու նրա հմտությունը և այլն: Գրքում վեր են հանված հայ ճարտարապետների վասպուրականցի Գրիգոր Վանցու և Բագրեանդ գավառի Ռոմաս Վաղարշակեացու կերպարները, որոնց 1814 թվականին Եփրեմ կաթողիկոսը հրավիրել էր պարսկական զորքի կողմից էջմիածնի վանքի ավերված տանիքը վերանորոգելու:

Հովհաննես վարդապետ Շահխաթունյանցին համարում է «Մեր երկրի և ազգի հնությունների մեջ բանիբուն գիտուն մարդ»:

«Ճանապարհորդություն ի Հայս» գրքում Թադիադյանը խոսում է հայ ժողովրդի չարբաշ վիճակի մասին: Նկարագրում է, թե աշխատավոր ժողովուրդն ինչպես է հարստահարվում ներքին և արտաքին ճնշողներից: Խոր վշտով հայտնում է, որ հայ ժողովուրդը հնարավորություն չունի վայելելու իր երկրի՝ դառն քրահնքով ձեռք բերած բարիքը: Նկարագրում է, թե նրեանի կուսակալ Հասան խանը որքան ահավոր է հարստահարում հայ աշխատավորությունը:

«Ճանապարհորդություն ի Հայս» գրքում Թադիադյանը տալիս է ոչ միայն հայ աշխատավորության իրավազուրկ վիճակը. Թիֆլիսին վերաբերող բաժնում պատկերում է նաև վրաստանի աշխատավորության դառն կյանքը: Աղնվական

և իշխանական դասը զաժան ու անմարդկային է՝ ձորտերի նկատմամբ։ Իշխանները (պարոնները և աղջիկ պարոնները) լիիրավ տերն էին իրենց ձորա գյուղացիների և վարվում էին այնպես, ինչպես կամենում էին։

«Իսկ տէրութիւն Ռուսաց, որ առաւել անմտադիր, բան զսոսաւ. և ստրկութեան ազգի իրեանց ջատագով ի հարկէ՝ փոյթ անգամ շատնու աշտպիսի անկարգութեան, ուստի և երկիրն հեծէ անողորմ, փառքս մատուցանելով յաւէտ տէրութեան Պարսից՝ բան Քրիստոնէիցս աշտցիկ գերչաց»¹։

Աշխատավորութեան, հաշ գյուղացիութեան շարքաշ վիճակը և աղքատութեանը Թաղիադյանը բացատրում է ներքին և արտաքին տիրակալների հարստահարութեամբ, տնտեսութեան, արդյունաբերութեան հետամնացութեամբ և ժողովրդի տգիտութեամբ։

Ուշագրավ են այստեղ արտահայտված նրա տնտեսագիտական հայացքները։ Նա գտնում է, որ անհրաժեշտ է զարկ տալ արհեստներին։ Հայաստանն ունի հնարավորություններ ավելի մեծ չափերով առևտրական հարաբերություններ սկսելու հարեան երկրների հետ, որը մեծ եկամուտներ կրերի ժողովրդին։ Այսպես՝ «նաւարկութիւն ի Վրկանէ մինչև ցևհար, և ի Հարանդ Սիւնկոց փոքու ծախոց պէտս ունիւ Ռուս առ աշխարհաշէն հայրենասիրի՝ գրեթէ ոչինչ է։ Նաւարկութիւն ի Բասէնայ և ի Կարուց մինչ ի Նախշուան, նոյնպէս գրեթէ չունի ծախս ինչ. եթէ ոչ ի տեղիս տեղիս վասն ժաշոյց հասելոց ի վայր և խաղաղից աւազոց։ Հայրենասէր ժողովրդեան երկոքին ևս զուգնաբեայ իմն են, համեմատեալ ընդ մեծամեծ շահուն՝ զորս յառաջ բերէ աշտօրինակ հաղորդութիւն բերոց և վաճառաց, ոչ թէ միոյց նահանգի Հաչոց ընդ աշուտ, յորս յամենեւին գրեթէ նոյն առատութիւնք են, ալ մանաւանդ զրացի աշխարհաց ընդ աշխարհիս մերոց։

Հայեցեալ չարդեան ամուլ կացութիւն տուրեառութեան նրաւստական նահանգաց, և զանբաւութիւն ծախոց՝ որ ի վի-

¹ Մ. Թաղիադյան, *Հանապարհորդություն ի Հայտ, Կալկաթա, 1847*, էջ 314։

բայ բեռնաւոր, գրաստուց իշոց, ջորուց, և ձիոց. (որք մի-միայն կարեն շարժիլ յայտոսիկ) ևօթնամեայ և եթ հարկ կապ-կալ ի վերայ այսք նաւարկութեան՝ վճարե զբովանդակ ծախս մաքրելոյ և յարդարելոյ զնա գայն պաշտօն, ի Կառպան, մինչև ցՄուղան:

Տայ Հայաստան տեղի բան զհարիւր շահաստան քա-ղաքս. զբերս Հայաստանի գանպիտան զընկեցիկս՝ արա-զոյ և պատուական ընծայէ կողմանցն Կապից և Վրկանի, և անգր բան զԹաթարստան»²:

Մ. Թաղիաղյանը գործնական և շահութաբեր առաջար-կություններ է անում.

«Մի միայն բնակութիւն և շինութիւն ընդարձակածաւալ և սիլաւէտ դաշտին Մուղանայ, որ հարկիւ զհետ գայ բարե-կարգութեան ընթացից զետոյս մերոյ, և որպէս հաւատամս, բերել բերէ և գամենայն բոյս և զպտուղ ցուրտ և ջերմին աշ-խարհաց՝ որպիսի է լեզակ, շաբար, շերամ, և ալն, հերիք լինի վճարել գործունեայ ձեռին զվարձս վաստակոց իւրոց»³:

Թաղիաղյանը արհեստների, արդյունաբերության զար-գացման մեծ հետանկար է նախագծում: Նա ասում է, որ ե-թե ուրիշ երկրներ հումքը տեղափոխում են ալլ երկրներից և մշակում, ապա Հայաստանն ունի հումքի առատ պաշար և կարող է ինքը մշակել, եթե ունենա արդյունաբերություն:

«Այս գար արուեստից (իմա՝ արդյունաբերության—Ջ. Մ.) դար է, և ոչ բնութեան. ընդէ՞ր և ի սոյն արդեօք գերա-զանցել չփութացուք: Այն ինչ ալլք միայն արուեստ ունիլ կարեն և զնիւթ տրուեստին յալլուստ հալթալթեն, մեր գրե-թէ գամենայն պատրաստի ունիմք յաշխարհի և ի տան մե-րում»⁴:

Մ. Թաղիաղյանը տեսնում է աշխատավոր ժողովրդի սոցիալական դատը վիճակը: Նա այն կարծիքին է, որ մի բա-րեզործ ձեռք կամ արդյունաբերության զարգացումը կարող է փրկել և դուրս բերել երկիրն ալլ վիճակից:

2 Մ. Թաղիաղյան. Ճանապարհորդութիւն ի Հայս, էջ 57—58:

3 Նույն տեղում, էջ 61:

4 Նույն տեղում, էջ 84:

«Ճանապարհորդություն ի Հայս» գրքում Թաղիազյանը հիշատակում և ճշտում է մի շարք պատմական տեղանուններ: Նա մեջ է բերում Խորենացու, Նզնիկի, Փավստոս Բուզանդի, Ստրաբոնի և ուրիշների հաղորդումները և իր կողմից տվելացնում ու ճշտում մի շարք հարցեր: Այսպես՝ նա տեսնում է, որ էջմիածնում կառուցված թղթատան կամ քաղրդլսանի տեղում եղել է Տրդատի և նրա նախնիների պալատը⁵:

Ինչպես իր ողջ ստեղծագործության, այնպես էլ «Ճանապարհորդություն ի Հայս» հուշագրային և ուղեգրային աշխատության մեջ զրսևորվել է Թաղիազյանի ջերմ հայրենասիրությունը: Նա բազմաթիվ օրինակներով և փաստերով ցույց է տվել հայ ժողովրդի անսահման սերը դեպի իր հայրենիքը. «Հայրենասեր տարեց մեր ազգը ու այդպես էլ կա»⁶, գրել է նա:

«Ճանապարհորդություն ի Հայս» գիրքը իր ժամանակին արժանացել է ոչ միայն հայ, այլև օտար պատմաբանների և մամուլի ու արվեստի աշխատողների ուշադրությանը:

«ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ Ի ՊԱՐՍ»

«Ճանապարհորդություն ի Հայս»-ի շարունակությունը հանդիսացող «Ճանապարհորդություն ի Պարսը» Թաղիազյանը սկսել է տպագրել Արարատյան ընկերության տպարանում 1848 թ., բայց մի մասը տպվելուց հետո խափանվել է: Մ. Թաղիազյանի ջանքերը՝ միջոցներ հայթայթելու և տպագրությունը շարունակելու համար անհաջող են անցնում:

Պարսկաստանի տնտեսական և բաղադրական կյանքի մասին շատ հարուստ տվյալներ պարունակող և բազմաթիվ խնդիրներ առաջ բաշող այս աշխատությունը ուշադրով է ընթերցվում:

⁵ Ալ. Սանինյան, Մայր տաճարի հարստապետական կերպարը, «Էջմիածին», 1961 թ. № 11, էջ 43:

⁶ Մ. Թաղիազյան. Ճանապարհորդություն ի Հայս, էջ 80:

Մեր ձեռքն է հասել գրքի տպագրւած 1—108 և 145—180 էջերը:

Առաջին էջի վրա կարդում ենք. «Ճանապարհորդութիւն՝ Մ. Դ. Թաղիադեանց ի Պարսկաստան, հատոր Բ.»։ Գիրքը բաղկացած է հետևյալ ենթավերնագրերից. Ներածութիւն, Անուն, Դիրք, Լերինք, Օգ, Ավազուտք պարսից, Լիճք, Գետք, Բերք, Հանք, Տերութիւն, Սազր և Սարգար, Դէնպէտք, Ազդ պարսից, Արրեցութիւն, Բազմակնութիւն, Ձեք, Բազմամարդութիւն, Զօրք պարսից, Եկամուտք հարկաց, Յուցակ արդիւն և նախնի նահանգաց պարսից և երեւելի քաղաքացն պարսնակելոց ի նոսին, Լեզու պարսից, Քէշ պարսից, Սկիզբն մուսուլման, Լուսաւորք, Նշանք գրելոց ի պարսս և ի հալս, Եջէվակ, Լուանթագ, Արամազդ, Լուսատուր, Վանատուր, Հրատ, Մատեխ, Միհր, Խու, Խորշիդ, Լուսաբեր, Արուսեակ, Ասադիկ, Փայլածու, Տիր, Դպիր, Վարազ, Լուսին, Ատրպատական, Դավթէժ, Ելք ի Դավրիժոյ:

Մ. Թաղիադեանը մանրամասն նկարագրելով Իրանի կլիման, լեռները, լճերը, գետերը, բերքը և այլն ու շեշտելով բերքաւատ դաշտերի մասին, եզրակացնում է, որ այնուամենայնիւ աշխատավոր գյուղացիութիւնը հեծում է աղքատութեան ճիրաններում: Նա գրում է, որ աշխատավորութեան աղքատութեան պատճառը նրա անխնա հարստահարումն է աիրող խաւերից: Բարբարոս տերերի անմարդկային վերաբերմունքի հետեանքով ոչ միայն աշխատավոր ժողովուրդն է աղքատ, այլև բերքաւատ դաշտերը դառնում են խոտան:

«Թէ ի պատճառս մեծամեծ աղտաղտին անապատաց, ընդհանուր պակասութեանց, և թէ քաղաքական պատերազմաց, անկանոն կառավարութեանց՝ բարբարոս տերանց նորա. նա և մեծամեծ և ջրարբին դաշտք աշխարհին Պարսից՝ խոտան և անգործ մնան ի հերկոց անտի»⁷:

Նկարագրելով հարկային սխտեմը, Թաղիադեանը կարեկցելով պարսիկ աշխատավոր ժողովրդին, քննադատում է

⁷ Մ. Թաղիադեան, Ճանապարհորդութիւն ի Պարս, Կոպիսթա, 1843, էջ 13:

Իրանում տիրող կարգերը: Այդ տվյալները նաև համաստի
աղբյուրներ են Իրանի տնտեսական պատմությունն ուսում-
նասիրողների համար:

«Ամենայն եկամուտ գանձարանի տէրութեան յառաջ
դալ ի հարկաց անտի՝ և ի շարաշար կեղերանացն, որո՛շ
յոզիս ապաստան առնեն զսղորմելի բնակիչս աշխարհին:
Առաջին ի սոցանէ է Քովչին՝ կամ զխահարկն: Երկրորդն՝
Միրի, Մալխաթ կամ զեռնահարկն, որ յանգս ջրարբիս է
հինգերորդ ի բերոց և յանձրեայինսն՝ տասանորդ նոցա: ...Եր-
րորդն է Մուսղարաթ, որը են բնծայք սղզի սղզիք, տոյժք
և յարբունիս գրամուռնք սղխից և զանձուց պատմապարտից.
Կորս եթէ ոչ գառիցին օրէնք, գատին կամք թագաւորին...
Միրահի որ է հարկ իմն ի վերայ ուղտոց, ձիոց, ջորեաց և
իշոց: Մաւաշիր՝ հաս իմն յոշխարաց, այծից, արջառաց, և
այլն: Մաքս բաղաբաց և վարձք վաճառանոցաց է հանթից,
այլովքն հանգերձ: Զորս միահաղոյն առեալ՝ ըստ իւրաքան-
չիւր նահանգաց աշխարհին Պարսից զլիակարգեմ աստա-
նօր»³:

Նոսելով կառավարման եղանակի մասին Թաղիադյանը
ցույց է տալիս, որ շահը երկրի տերն է՝ անսահման իրա-
վունքներով: Շահից հետո գալիս են իշխանները, խաները,
որոնցից յուրաքանչյուրն իր նահանգում տեր ու անօրէն է:
Իշխաններին ու խաներին հաջորդում են գեղապետները, մու-
լաները, որոնք առաջնորդվելով Ղորանի զոգմաներով խավա-
րի, տգիտության ու աղքատության մեջ են պահում աշխա-
տաւոր ժողովրդին: Նրանք աշխատաւորության մեջ արմա-
տավարելով Ղորանի զոգմաները, ժողովրդին դարձրել են
մոլեհատնդ մի ամբոխ, հլու-հնապանդ և գեղապետների կոշիկն
արծաղանքող մի պանգված:

Աշխատավոր ժողովուրդը, ասում է Թաղիադյանը, այ-
նուամենայնիւ, չի հանդուրժում տիրողների կամայականու-
թյունները և երբեմն ապստամբվում է: Պարզ է, որ Թաղիադ-

3 Նույն տեղում, էջ 63:

յանք հասարակութեան մեջ արդէն տեսնում է հակամարտ ուժեր: Նրա համակրանքը ապստամբող աշխատավորութեան կողմն է:

«Աստի է, զի այնքան սաստիկ բարբարոսութիւն ինքնակալաց ոմանց Պարսից, տեղ ետ այնքան մեծամեծ ապստամբութեանց՝ որով և բաղաբային (իմա՝ քաղաքացիական—Ջ. Մ.) պատերազմաց՝ չեղծութիւն դատողացն զաշխարհն Պարսից»⁹:

Ինչպես իր իրավունքներով, այնպես էլ իր կեղեքմամբ ու հարստահարմամբ բոլոր իշխաններից վեր է կանգնած Իրանի շահը. «Եթէ ուրեք յիշխանութեան մարդպանացս ծաղիցի խոռվութիւն, և ինքեանք անբաւական լիցին խաղաղելոյ զնոսա՝ զայ արքայ բաղմութեամբ զօրաց, ծանրանայ ժողովրդոց բաղձօրեայ ժամանակաւ, և կեղեքեալ կողոպտեալ զաշխարհն բովանդակ՝ դառնայ յաթոռ իւր»¹⁰:

Թաղիադյանը քաջ ծանոթ է պարսիկների ծեսերին, սովորութիւններին, զրուցյներին, ժողովրդական ասացվածքներին և այլն: Ուշադրով են նրա մեջբերումները պարսիկների երգումների, հայհոյանքների և այլնի մասին:

Պարսիկներն իրենց մասին տարածել են, թե իբր իրենք ստախոսներ են: Թաղիադյանը նկատում է, որ դա տիրողների և մոլլաների սարքածն է և պախաբակելով նրանց, պաշտպանում է պարսիկ ժողովրդի շահերը: Ամբողջ մի ժողովուրդ չի կարող ստախոս լինել, եթե արտաքին ինչ-որ հանդամանք չի մղել դրան: Եւ Թաղիադյանը միանգամայն ճիշտ բացատրում է, որ այդ ախտը առաջ է եկել տիրող կարգերի անողորմ բարբարոսութիւնից. «Բայց այս ախտն աղապշին և ամենաթշուառ յառաջ զայ յանողորմ բարբարոսութենէ անտի տէրութեան նոցա»:

«Սուտն», ասեն նորա, որ կարող իցէ օգնել ընկերին՝ բարբի է: Եւ այսու մոլար վարդապետութեամբ բաղումբ ի պե-

9 Ե. Թաղիադյան, Ճանապարհորդութիւն ի Պարս, Լ. 21:

10 Նույն տեղում, Լ. 30:

աւաց անտի գիւղից և գաւառաց նոցա՝ որք ջանացան գղէմ ունիլ ցասման և պատուհասից թագաւորին, սուրբս համարեցան աղգին սնտուռը»¹¹։

Առանձին կարեկցանքով է խոսում Թաղիադյանը պարսիկ կնոջ իրավագուրկ վիճակի մասին։ Բաղմակնությունը, որք մեծագույն չարիք է ընտանեկան կյանքում, սրբազորովել է և՛ հին, և՛ նոր կրօնների կողմից։ Ավելի ահաւոր է կրնոջ հարեմական վիճակը. իրավագուրկ, փակված և գերի ամեն տեսակ դաժանություններին։

«Կանայք պարսից աշխարհին, մանաւանդ մեծամեծ քաղաքաց նորա, որ ջոկք ի ջոկս հատարին ի մի տուն՝ ի տաւանց մինչև ցհազարս, բանտարկեալք զրեթէ ընդ կեանս իւրեանց՝ պահպանեալ ներքինեօք և մարդպետեօք՝ առ ի գկամս պաշտելոյ լոկ զառն միոջ, որ ոչ օրէնս գիտիցէ և ոչ զպարտիս ամուսնութեան, այլ իբրև կամիցի՝ զան հարկանիցէ, տանջիցէ և արտաքս վարիցէ ի տանէ իւրմէ...»¹²։

«Ճանապարհորդություն ի Պարս»-ում խոսելով պարսկական ժողովրդական առացվածքների, նրանց սովորությունների մասին, Թաղիադյանը հանդամանորեն կանգ է առնում պարսկերեն լեզվի վրա։ Գիտականորեն մոտենալով այդ հարցին, նա ոչ միայն շեշտում է պարսկերենի բառային ֆոնդի հարստությունն ու լեզվական դարձվածքների ճոխությունը, այլև հակադրվելով ճանապարհորդ Շարդենին և պարսկերեն-արաբերեն բառգրքի հեղինակ Ռիշարդսոնին, որոնք գտնում էին, թե պարսկերենը հիմնականում արաբերենի խառնուրդ է, ապացուցում է, որ արաբերենից շատ բառեր փոխ առնելով հանդերձ, պարսկերենը բոլորովին էլ չի նախացրել իր արժեքը և բառերի արմատների մեծագույն մասը հին պարսկերենից է գալիս։ Նա համառոտակի շարադրում է նաև պարսկերեն լեզվի բերականական կառուցվածքը։ Թաղիադյանը միաժամանակ կանգ է առնում պարսկա-

11 Մ. Թաղիադյան, Ճանապարհորդություն ի Պարս, էջ 44։

12 Նույն տեղում, էջ 52։

կան պոեզիայի վրա և բարձր գնահատում մեծանուն բա-
հասակողծներ Ֆիրզուսուն, Հաֆեզին և Սաադուն:



Արեւելքի պատմութեանը խորապէս հետաքրքրել է Մ. Թաղիադեանին: Նա տակաւին երիտասարդ հասակում մեծ հետաքրքրութեան է ցուցաբերել ոչ միայն Հայաստանի, այլև Հնդկաստանի և Պարսկաստանի պատմութեանների նը-
կատմամբ: Անգլիական և պրոտեստական ճեմարանում ու-
սանելու տարիներին Թաղիադեանը գրել է Հնդկաստանի
պատմութեանը՝ երեք հատորով, որի առաջին հատորն է
միայն 1841 թ. լույս տեսել Կալկաթայում, իսկ մյուս հա-
տորները այդպէս էլ մնացել են անտպ:

«Պատմութեան հին Հնդկաստանի» գրքի առաջին հա-
տորը վկայում է, թե Թաղիադեանը որքան խորն է իմացել
Հնդկաստանի պատմութեանը: Նա կարող է համարվել XIX
դարի առաջին կեսի այն պատմաբանը հայ իրականութեան
մեջ, որն զբաղվել է Արեւելքի երկու հնագույն երկրների՝
Հնդկաստանի ու Իրանի պատմութեամբ և հանդես եկել որ-
պէս հայ արեւելագիտութեան հիմնադիրներից մեկը:

Լինոն շատ բարձր է գնահատում Մ. Թաղիադեանի պատ-
մագիտական հմտութեանը, նրան համարելով իր ժամանա-
կի ամենալավատեսիչ և զարգացած հայ պատմագետներից
մեկը:

Մ. Թաղիադեանի «Պատմութեան պարսից» գիրքը լույս
է տեսել 1846 թ. Արարատյան ընկերութեան տպարանում:
Գիրքն ընդգրկում է Իրանի պատմութեանը հնագույն շրջա-
նից մինչև իր օրերը:

«Պատմութեան պարսից» գրքում խոսելով պարսիկ ժո-
ղովրդի և Իրանի պատմութեան հին շրջանի մասին, Թա-
ղիադեանը մեծ տեղ է տալիս հատկապէս պարսկական ա-
ռասպելներին: Չնայած իշխողների անփութութեան հետեան-
քով շատ բան է փոխվել պարսկական առասպելների մեջ,

աշնուամենայնիվ նրանք կարող են որոշ բան ստել, կարեւոր նշութ տալ պատմութեան հին շրջանն ուսումնասիրելու համար: Տեսնելով հայ և պարսիկ ժողովուրդների դարաւոր պատմական ու մշակութային կապերը, Թաղիադեանը պարսկական առասպելների մեջ միաժամանակ տեսնում է հայ պատմական անցյալի հետ առնչվող շատ հարցեր:

«Եթե կամք իցեն բեզ զազգի ուրուք զպատմութիւն ի միտ առնուլ, ոչ է պարտ զառասպելօքն զանց առնել, չորս թողին ստուգութիւնք հին աւուրց: Քանզի՞ թէպէտ և իրաւամբ գանգատէ Քերթոզհաչր մեր զՊարսից անշարմար և անսճ բանիցն, սակայն և աշնպէս՝ իբրև ազգի զբացուց և կրթօնակցի կոտաշաշուովեան մերոյ աշխարհի՞՝ օգտակար համարի մեզ գիտութիւն առասպելեաց ստաց նորուն: Եթէ հաշիցուք ի դիրս Պարսից վասն ստուգագոյն անցից նախահարց իւրեանց, թէ բազդատովեամբ պտտմովեան մերոյ աշխարհիս, և թէ Յունաց և Հռոմայեաց, կարի սղալիմք. վասնզի էր՝ որ անփութութեամբ առաջին թագաւորացն, էր՝ ազգային պատերազմօք, և էր՝ որ ի հուստաց անտի Ղուրանին, բարձեալ անհետացան ի միջոյ. և փոխանակ ի ներս մութան մըտացածին և քստ քմաց բերթողացն առասպելք: Բայց և աշնպէս ի մէջ փակելով նոցա զխեշերանս ինչ նախնի պատմութեան ազգին, ի մեծի համարման կացին առինքեանս և առօտարս, որոց և մեր զկնի գնացեալ՝ շարակարգեացուք յարմարապէս զթագաւորս նոցա՝ որդի հօր յաջորդելով մինչև ի Մահմուդ Շահ...»¹³:

Իրանի պատմութեան հնագույն շրջանի բազմաթիւ հարցեր պարզաբանելու համար Թաղիադեանը օգտագործել է Ֆիրդուսու «Շահ նամեն», առանձին պատմական գրքեր, ինչպէս նաև Խորենացու և Նզիշի պատմութեանները:

Խոսելով իրանական առասպելների մեջ հանդես եկող արջունուշտ չար թագաւոր Զահակի մասին, Թաղիադեանը, ի թիւս մյուս աղբյուրների, մեջ է բերում Ֆիրդուսու և Մով-

13 Մ. Թաղիադեան, Պատմութեան պարսից, Կալիպատ, 1846, էջ 1:

սեա Խորենացու մօտ եղած ավյալները և վերջում հանգում
այն հետեւության, թե Զոհակը Բյուրասպի Աթահակն է:

«Սոյն ինքն է Բյուրասպին Աթահակ, զորմէ գրէ Խորե-
նացին մեր վասն անբանութեան և անբարի առաջնոյ նորա
բարերարութեան, և Դիւաց նմա սպասավորութեան, և ոչ վը-
րիպացուցանել կարելով զվրիպեալն և սուան և ուսոցն համ-
բուրումն և անգուտ վիշապացն ծնունդս և յայնմ հետէ չա-
րութեան յաճախութիւն ծախել զմարգրիկ ի պէտս որովայ-
նի, իսկ ապա և Հրուզենաց ումէմն կտակաւ զնա սարեօր
պղնձի և ի լեառն տանել որ կոչի Դմբաւընդ, այլ ի ճանա-
պարհի գննջելն Հրուզենաց և Բյուրասպեայ քարշէլն ի բը-
լտրն, և գարթէլն Հրուզենաց և տանել զնա յայրս ինչ լերին
և կտակ և զինքն անգրի բնոգեմ նորա հաստատել, յորմէ պա-
կուցեալ հնապանդեալ կայ շղթայիցն և ոչ զօրէ ելանէ և ապա-
կանել զերկիր:

Հայր Գոյթանն, Զոկը կոչին, և ունին լեզու օտար ի մեր
բարբառոյ»¹⁴:

Մ. Թաղիադյանը Իրանի նախախաւածական պատմու-
թյունը բաժանում է չորս շրջանի: Առաջինը առասպելական
շրջանն է՝ Փիշպադյան, երկրորդը՝ քերթնդականը, Պատմու-
թյունից հալոյնի է, որ Սասանյան զինաստիան իշխանու-
թյան զլուխ անցնելով հրի ու սրի միջոցով ոչնչացրել է այն
ամենը ինչ կապվում էր Արշակունյաց զինաստիանի հետ:
Թաղիադյանն այդ շրջանը համարում է անհայտության շրջ-
ան, իսկ չորրորդը՝ Սասանյանը, համարում է բանական
շրջան:

«Զի պատմութիւն պարսից ի չորրեակ միջոցս արոհի:
Յառասպելաբանականս՝ ի Մահաբաղեանն և Փիշպադեան
հարստութիւնս Ի Քերթնդեանն՝ Կայանեանն հարստութիւն:
Յանյայտականս՝ Վարշակունեացն կամ Պարթեական պե-
տութիւն, իսկ ի բանականն՝ Սասանեան»¹⁵:

14 Մ. Թաղիադյան, Պատմութիւն պարսից, 1846, էջ 6—10:

15 Նույն աեղում, էջ 21:

Խոսակալ Մեղիքշահ թագաւորի կողմից պարսկական տոմարի կարգաւորման մասին, Մ. Թաղիադյանը միանգամայն ճիշտ դիտողություն է անում միջնադարի վաղ վերածրնության մասին: Նա այն միտքն է հայտնում, թե վաղ վերածնությունը արեւելքում ալիլի առաջ հանդես եկաւ, քան արեւմուտքում:

«Այնինչ եւրոպա ի խորս խաւարին անդիտութեան մեծօրինակ պանդաղէր. Ասիա զժխոյճօրէն ճոխանայր քաջաւերութեամբ իմաստասէր թագաւորաց և իշխանաց: Արգարեքնդ խնամակալութեամբ սորին, և Աւագ նախարարին Պարսից Հասանայ, որ քստ պատուոյ պաշտպանն անուանեալ կոչէր խօջայ Բզուրկ կամ Նիգամուլուլք, արգարութիւն բարձր ի գլուխ ամբառնայր, գիտութիւն ծաղկէր, պարոյց հաստատէին և մզկիթք շինէին, որով բարեբաղտէր Պարսկաստան, զի անկաւ քնդ տէրութեամբ Սելջուկեանց»¹⁶:

Հայտնի է, որ իսմայիլիդները Հասան Սաբբահի գլխավորութեամբ միջնադարում լուրջ պայքար էին սկսել իշխանության գեմ: Նրանց պայքարը թեև տղանդավորական, սուֆիական էր, ունէր նաև սոցիալական բնույթ: Թաղիադյանը շնայած չի խոսում իսմայիլիդների զրական և բացասական կողմերի մասին, բայց այն հանգամանքը, որ նշում է նրանց գոյության փաստը, ինքնին կարևոր է:

«Պատմություն պարսից» գրքում Թաղիադյանը կանգ է առնում նաև իրանահայ դադութի՝ հատկապես Նուր Ջուղայի վրա և արժեքաւոր տեղեկություններ է հաղորդում պատմական, քաղաքական-տնտեսական կյանքի մասին:

16 Մ. Թաղիադյան, Պատմություն պարսից, էջ 128:

Մ. ԹԱՂԻԱԴՅԱՆԸ ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍ ԵՎ ԼՐԱԳՐՈՂ

Մ. Թաղիադյանի հրապարակախոսական ելույթները սրբան էլ բազմաբովանդակ ու տարբեր բնույթի հարցեր են քննարկում, այնուամենայնիվ երեան են հանում նրա ազգային-սոցիալական ձգտումների ամբողջությունը: Նրա դատողությունների և դիտավորությունների մեծ մասը կապվում է հայրենի երկրի զարգացման, հայության համախմբման, տնտեսական, քաղաքական, լուսավորական ձեռնարկումների միասնությունը հասնելու նպատակ-ծրագրերի հետ:

Թաղիադյանը շատ է խոսում կաշկաթահայ գաղթօջախի ներքին կյանքի մասին. սակայն նեղ վիճարանությունների մեջ անգամ տեսնում ենք ազգի հասարակական նպատակներով շահախնդիր հրապարակախոսին, որը հաշտեցնում է հակասությունները, փորձում էլք մատնանշել, ինչ-որ միասնություն մղել օտարի տիրապետության տակ ապրող մարդկանց: Հայրենասիրական բարոզը հրապարակախոսի ելույթներում վերաճում է ազգային համախմբման կոչի. դասային տարբերությունները նրա աչքում պաանեշներ չեն, որոնք հայերին բաժանում են հակամարտ խմբերի: Բուրժուական լուսավորականությունը հենց համազգային շահերի դիրքերից փորձում էր մի վերադասակարգային միասնություն առեղծել ցանուցիր ազգի տարբեր մասերի մեջ:

Հնդկահայ գաղութի «ներքին ու արտաքին» կյանքն այնպիսին էր, որ Թաղիադյան հրապարակախոսը շատ անգամ ստիպված էր «Ազգասիրի» էջերում լուսարանել երկրի քնդհանուր սոցիալ-քաղաքական վիճակի հետ առնչվող հար-

ցեր: Հենց այս կապակցութեամբ էլ անդրադառնում էր մարդկութեան ընդհանուր առաջադիմութեան խնդիրներին՝ ժըխտելով ուսական և պարսկական ճորտապիւրութունը, մեծ տերութիւնների գաղութարարական բաղադրականութիւնը Արեւելքի ժողովուրդների նկատմամբ, գաղապարտում էր գաղութական պատերազմները, սիրով ու համակրանքով էր խոսում փոքր ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների մասին: Թաղիազանի հողվածները լի էին բացահայտ դաշրույթով, մասնավորապէս, անգլիական նվաճողների և սրանց տնտեսական էքսպանսիայի դէմ: Նա իր բողոքի ձայնն էր բարձրացնում «Գաղգիացվոց տերութեան» Ալժիրում գործադրած դադանային անկարգութիւնների առթիւ և այլն:

Հնդկահայ գաղութի կյանքում, իհարկե, «Ալլաասերը» առաջին և եղտկի պարբերականը չէր: Հնդկաստանի հայերը 1794 թվականին Մադրաս քաղաքում ստեղծել էին «Ալլաասեր» հայ առաջին ամսագիրը, որը, շնայած նրա եռանդուն խմբագրի՝ Հարութիւն Շմալոնյանի, գործադրած ջանքերին, ընդամենը երկու տարվա կյանք ունեցավ: Այնուհետեւ, XIX դարի 20-ական թվականներին Կալկաթայում լույս են տեսնում «Հայելի կալկաթյան» և «Շտեմարան» պարբերականները, որոնք ուշագրավ և բովանդակալից նյութեր են հրապարակում Հնդկաստանի՝ առաջին հերթին հնդկահայերի մշակութային, տնտեսական և քաղաքական կյանքից: Բայց դրանց կյանքն էլ կարճատե է լինում:

1845 թ. Կալկաթայի մի քանի առևտրականների ընկերակցութեամբ, որոնց պիտավորում էր հարուստ վաճառական Մանուկ Զորարչանը, կազմակերպվում է Արարատչան ընկերութիւնը: Տակավին պարզ չէ, թե Արարատչան ընկերութիւնը հիմնականում ի՞նչ նպատակներ է հետապնդել:

Համաձայն ընկերութեան կանոնադրութեան մի շարք դրույթների, ընկերութիւնը զբաղվելու էր հնդկահայերի, ինչպէս նաեւ Հայաստանի ու Նոր Զուլայի մշակութային կյանքի խնդիրներով: Մինչդեռ «Ալլաասերում» արծարծված հարցերի

խորագրերին ուսումնասիրումը հիմք է տալիս եզրակացնելու, որ քննկերություն հայտարարությունը նպատակ է ունեցել շնչելու անգլիացիներին ուշադրությունը, իրականում այն արժարժում էր հասարակական-քաղաքական հարցեր, ազգային-ազատագրական շարժումների հետ կապված հրատապ խընդիրներ:

«...Յիշեալ լրտեսիկին կոչեսցի Ազգասէր, դիւրահասկանալի ոճով, պարտադարձ ղլխովին յառարկայս և ի նիւթս բարոյական, բարոյական, պատմական, վաճառականական և այլ սոցիոլիսի ազգայօգուտ բանից, զորս ստագիրն պարտ է կանխիկ հաւանութեամբ քննչացն տալագրել:

Մի քնաւ երբէք տպեսցի կամ թոյլ տացի տպել սոյն լրտեսիկի բան ինչ թշնամական, նախատական, խոցողական և բամբասանաց կամ պարսաւանաց զումեքէ առանձնակի՝ եղելոյ թէ աստ և թէ այլ ուրէք, ոչ պարզ և ոչ քօղարկեալ ձեւով. բայց հնար է ազգասիրական ոգով և յորդորական եղանակաւ, ցաւակցական բանիւ՝ խօսել և ճառել զպակասութեանց և զթերութեանց Ազգիս հասարակօրէն և բնդհանրապէս. և ոչ թէ տոանձնակի և յատկօրէն, դիւմամբ ուղղելոյ զպակասութիւնն զազգայինս և վասն աշգպիսեաց բանից զգուշութիւն մեծ պիտի ի կողմանէ քննչացն թէ ի վերայ իսկական գրութեանց իւրեանց, թէ ի վերայ գրութեանց տալագիրն, և թէ ի վերայ գրութեանց բանասիրաց արտաքնոց՝ որք հաճեսցին առաքել զբանասիրութիւնս ի տալագրութիւն»¹:

«Ազգասերի» հրատարակությունը ունեցավ երկու շրջան: Առաջին շրջանը սկսվում է 1845 թ. օգոստոսի 16-ից, երբ լույս է տեսնում «Ազգասերի» առաջին համարը և տևում է մինչև 1848 թ. հունիսի 24-ը, որից հետո «Ազգասերը» փակվում է: Երկրորդ շրջանը սկսվում է 1848 թ. սեպտեմբերի 16-ից, երբ լույս է տեսնում «Ազգասեր Արարատյանի» առաջին համարը և, 86 համար լույս տեսնելուց հետո, փակվում է 1852 թ. հուլիսին:

¹ «Ազգասեր», 1845, № 28, էջ 58:

«Ազգասեր» և «Ազգասեր Արարատյան» հանդեսների հրատարակման և խմբագրման ժամանակ զրուցելու մ է Մ. Թադևոսյանի հրապարակախոսական մեծ կարողությունը: Հանդեսի հենց առաջին համարում նա հրապարակում է մի հայտարարություն, որտեղ արտահայտում է իր գործունեության ծրագիրը: Հայտարարության մեջ զիտակեցելով այն ճշմարտությունը, որ գրում է համայն հայության և ոչ թե առանձին անհատների համար, նախ խոսում է հանդեսի լեզվի մասին: Լեզուն պետք է հասկանալի լինի բոլորին, ուստի հենց սկզբից հրաժարվում է գրաբարից և գրում հիմնականում նոր Զուղայի բարբառով, որը միաժամանակ հնդկահայերի բարբառն էր:

«Ազգասեր» և «Ազգասեր Արարատյան» հանդեսներում Թադևոսյանը տպագրում է իր բանաստեղծությունները, արձակ ստեղծագործությունները, թարգմանությունները, ինչպես նաև մեմուարային և պատմագրական գործեր: Հանդեսում հրապարակում է իր աշխատակիցների, աշակերտների և այլոց ստեղծագործությունները, թարգմանությունները, լույս բնծալում հոգվածներ դպրոցական, զիտական և այլ հարցերի մասին, տպագրում գրախոսականներ, հայտարարություններ առևտրական կյանքից:

XIX դարի 40-ական թթ. Թադևոսյանը հանդես է գալիս իր լուսավորական հայացքներով: Լուսավորիչների վերաբերյալ լենինյան սահմանումները լիովին բնորոշ են ինչպես Խ. Աբովյանի, այնպես էլ Մ. Թադևոսյանի համար: Ազգը լուսավորել, նրան մասնակից դարձնել առաջավոր երկրների կյանքին, առաջ մղել մշակութային-տնտեսական տեսակետից, պայքարել ճարտատիրության և հետամնացության դեմ, ահա Թադևոսյանի գլխավոր նպատակը:

Մ. Թադևոսյանի ողջ ստեղծագործության և մանկավարժական, հրապարակախոսական գործունեության մեջ երևում է նրա անսահման նվիրվածությունը իր հայրենիքին և ժողովրդին: Թադևոսյանն իր անձնական երջանկությունը տեսնում է իր ժողովրդի բարօրության մեջ:

«Այլ կամի երջանիկ կալ, նախ պիտի յուր հայրենյաց երջանկության միտ պնի»²։

Հնդկահայ պաշտօնը և տոհմատարակ բոլոր հայ զաղութները շին կարող հայերի վերջին հանգրվանը համարվել, որքան էլ նրանք ժամանակավորապես նյութական շահագրգռություն ունենան։ Դիմելով հատկապես հնդկահայերին նա պրն է. «Ահնր տեղս արմատական ծառեր շեմք, մեր արմատն մեր հայրենիքն է, և էթե չջանամք մի կամ մյուս եղանակով մեր հայրենյաց երջանկությունն հաստատել, կարելի չէ, որ մենք երջանիկ սպրենք»³։

«Ճանապարհորդություն փ Հայս», «Ճանապարհորդություն Ի Պարս» ստեղծագործություններում, ինչպես նաև «Աղգասերի» և «Աղգասեր Արարատյանի» բաղմաթիվ էջերում Թաղիադյանը քննադատում է սուլական, պարսկական ճորատաիրությունը, հիբոպակահ՝ կապիտալիզմը։

Անգլիան բարբարոսաբար կեղերում է հնդիկ ժողովրդին, տանում երկրի ողջ հարստությունը, մինչդեռ ժողովուրդը կրում է աղքատության ճիրաններում, խարխալում ազիտություն մեջ։ Տարեկան յոթ հարյուր միլիոն լիրա են տանում, անգամ մեկ միլիոնը շտրամադրելով ժողովրդի ամենատարական, կուլտուրական և կրթական պահանջները բավարարելու համար, պրում է Թաղիադյանը։ Այս բարերեր երկիրը ծանր գրություն մեջ է և «էթե տերությունն հոգ չտանի յուր տառապյալ հպատակաց վերա՝ կկարծվի, որ սովու կհանդիպի այս ամենատառա և բարերեր երկիրս»⁴։

Ֆրանսիական ստրկացնողների կողմից՝ իրենց ազատության համար պաշքարող 100 ալժիրցիների քարայրում աչրելու կապակցությամբ Թաղիադյանը պրում է. «Իրավի այս լուսավորյալ ժամանակում, այսպիսի զաղանային անգթություն երբեք լաված չէր։ Գաղղիացվոց տերությունն բոլոր Ալջիր

2 «Աղգասեր», 1845, № 18, էջ 139։

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում, № 4, էջ 25։

տանուլ տայր լավ էր, բան թե տյո վատահամբավութիւնս
կրեր»⁵:

Նվրոսական երկրները խարդախ միջոցներով ոչ միայն
ստրկացնում են ուրիշ ժողովուրդների, այլև խաբէությամբ
և անարդարությամբ մեկմեկու ձեռքից հափշտակում մյուսի
տերիտորիաները: Թաղիադյանը շատ ճիշտ է ընկալել կապի-
տալիստական՝ աշխարհը բաժանելու և վերաբաժանելու այդ
ձղտումը:

* * *

և

Մ. Թաղիադյանը իր գործունեության հենց սկզբից ունե-
ցել է ուսական կողմնորոշում: XIX դարի առաջին կեսին, և.
Աբովյանի հետ միասին, Թաղիադյանը առաջիններից մեկն
էր, որ հայ ժողովրդի ազատութեան միակ ճանապարհը տի-
սավ Ռուսաստանի և ուս ժողովրդի օգնութեան մեջ:

Մեր ձեռքն է հասել Կալկաթայի անգլիական եպիսկոպո-
սական ճեմարանում սովորելու տարիներին Թաղիադյանի
գրած մի նամակը, որտեղ շեշտելով, թե ինքը ինչպիսի առա-
ջադիմութիւն է ցուցաբերել անգլերեն, հունարեն և պարսկե-
րեն լեզուների մեջ, ամստանքով հայտնում է, որ մեծ թերու-
թիւն է իր համար ուսերին լեզվին շտիրապետելը և որ եթե
հնարավորութիւն ունենա, կարճ ժամանակամիջոցում կսո-
վորի այդ լեզուն, բանի որ իր համար խիստ անհրաժեշտ է:
Նա գրել է. «Մի միայն փափագ, որպէս միշտ գնել առ ոստ
տէրութեան ձեռոյ է իս բողոք, և այժմ իսկ երկրորդեմ, է մի-
այն ուսանիլ ինձ պարբառս Մոսկուացոց: Եվ խոստանամ.
զի եթէ միայն վեց ամիս, առանց այլ և այլ հարկաց, ներս-
ջիբ տկարութիւն իմում յայն լեզու կրթել. ի մէջ նոցին իսկ
Մոսկուացոց, յոսամ ընդ բաւականին ուսանիլ:

Քանզի՝ միայն Մոսկուացին արուստից քան՝ զորս ու-
սեալ էի ի հարեանցի ի սրբոյ Հովհաննու վարդապետ Ղրի-

⁵ «Ազդասեր», 1845, № 5, էջ 36:

մեցուլ ի Գիւլիստան, և զբաղում ի նոցանէ մինչև ցարդ մուսայեալ»⁶։

Ռուսական կողմնորոշման ճիշտ և վերջնական տեսակետ ունենալով հանդերձ, այնուամենայնիւ, Թաղիադյանը նկատել է, որ ցարական կարգերը միանգամայն հակադիր են ռուս ժողովրդի շահերին։

Եւ Թաղիադյանը խիստ քննադատել է ցարական կարգերը։

Ցարական կարգերի խիստ քննադատությունն է եղել պատճառը, որ «Աղգասերի» և Արարատյան ընկերության տպարանում լույս տեսնող գրքերի տարածումը արգելվել է ռուսական սահմաններում։

Թաղիադյանը հույս է հայտնում, որ կաթողիկոսի միջնորդութեամբ հնարավորություն կտրվի Արարատյան ընկերության կողմից հրատարակվող գրքերը և «Աղգասերը» տարածել ռուսական սահմաններից ներս, Հայաստան։

«Մա՞րթ ինչ իցէ մեզ յուսալ թէ մի յերեւելի մեծամեծ արարութեանց սբանչելոյն լիցի նա և մատուցանել զառաջնաւորին ամենաուղիւրմ կայսերութեան Ռուսաց և թագաւորին հայոց՝ զամենախոնարհ խնդիր Արարատեան Ընկերութեանս՝ վասն թողութեան մտից տպագրութեանց մերոց հայրենիս մեր, ի սահման իւրում կայսերական Մեծութեան»⁷։

Մ. Թաղիադյանը թեև չի տեսնում հասարակության մեջ գոյություն ունեցող առանձին դասակարգեր, բայց խոսելով հարուստների, աղքատների և աշխատավորների մասին, նրա համակրանքը վերջիններիս կողմն է։ Թաղիադյանը չքավոր խաղերի շահերը պաշտպանում է միայն քրիստոնեական բարոյագիտությունից ելնելով։

Իր գործունեության ընթացքում նա շփոխել է հարուստների և մեծատունների հետ։ Կալկաթայում մի քանի հարուստ բնտանիքներ օգնության ձևեր են մեկնել նրան։ Իր ուսումնա-

⁶ Մատենադարան, Ա. Հովհաննիսյանի ֆոնդ, թղթապանակ 243, մով. 41։

⁷ «Աղգասեր», 1847, № 75, էջ 24։

ռության շրջանում և հատկապես հետագա, 40-ական թվականներին, նա օգտվել է հնդկահայ մեծահարուստ ընտանիքների նյութական օժանդակությունից: Սակայն լուսավորիչ Թաղիադյանը հատկապես կյանքի վերջին շրջանում հիասթափված հարուստ խավերի շահամոլական վերաբերմունքից, խիստ բննադատում է նրանց:

Թաղիադյանը հատկապես բննադատում է այն մեծատուններին, որոնց կյանքի նպատակը միայն փող կուտակելն էր, որոնք չէին մտահոգվում ազդի տռաջընթացի ու բարօրության հարցերով:

«Ճանապարհորդություն ի Հայս» գրքում, ինչպես նաև «Ազգասեր» և «Ազգասեր Արարատյան» հանդեսներում բազմիցս անդրադարձել է այն հարցին, թե հայ աշխատավոր դուռըացիությունը ինչպես է հարստահարվում և իր ապրուստի վերջին միջոցը տալիս պարսիկ խաներին: Բայց Թաղիադյանը հայ ժողովրդի ներքին շահագործողների մասին լուծում է: Մի՞թե հասարակության մեջ գոյություն ունեցող այս հակասությունը չէր նկատում: Եթե կարողանում էր բննադատել ռուսական ճորտատիրությունը, եթե վրաստանի և վրացիների մեջ տեսնում էր ճորտատիրոջ և ճորտի միջև գոյություն ունեցող հակասությունը, եթե բննադատում էր հվրոպական կապիտալիզմը և ռուսական էր անվանում անգլիական ու ֆրանսիական գաղութարարներին, եթե բառացիորեն գրում էր, որ պարսիկ աշխատավոր դուռըացիությունը շահագործում, արշունաբում է անում պարսիկ ճորտատերը, շահը, խանը և ալին, ապա ինչո՞ւ չէր խոսի հայ ժողովրդի մեջ գոյություն ունեցող հակասությունների մասին:

Թաղիադյանը գիտավորյալ և գիտակցաբար հայ ժողովրդի մասին խոսելիս շրջանցում է այդ հարցը մի պարզ պատճառով, որը շատ թանկ էր համարում: Նա ցանկանում էր հայ ժողովրդին համախմբված տեսնել հայրենի երկնքի տակ: Թաղիադյանը մեծ հույսեր էր կապում դրսի հայ մեծատունների հետ, որոնք կարող էին իրենց կապիտալը ներդնել հայրենիքում արդյունաբերությունը զարգացնելու համար:

Մ. Թաղիադջանն առաջիններից մեկն էր, որ XIX դարի առաջին կեսում հանդես եկավ գրականության աշխարհիկ բնույթի պրոպագանդիստի դերում: Նա զգաց, որ հին, սխալաստիկ բովանդակությունն այլևս չի բավարարում ժողովրդին և հարկավոր է նոր բովանդակություն ու նոր ձև:

Գրականությունը ժողովրդին մատչելի դարձնելու անհրաժեշտությունը Թաղիադջանը զգացել է դեռևս անցյալ դարի 20-ական թվականներին: Հ. Գրովախոսի «Ճշմարտութիւն բրիտանական հաւատոյ»-ի թարգմանության առաջաբանում նա բնորոշել է, որ պետք է գրել ժողովրդին պարզ և հասկանալի ոճով և ոչ թե խճողել ճոռոմաբանութեամբ:

Զգո՞ւմ էր, արդյոք, Թաղիադջանը աշխարհաբարի դերը հայկական կյանքում: Անպայման՝ այո:

XIX դարի 40-ական թվականներին Կալկաթայում Թաղիադջանը իր աշխատությունները հրատարակում էր գրաբար: Մինչդեռ ՅՍ-ական թվականներին բանաստեղծություններ էր գրում աշխարհաբար: Կալկաթայում «Ազգասեր» հանդեսը սկզբում հրատարակում է աշխարհաբար: Նշանակում է, նա արդեն գիտակցում էր աշխարհաբարի դերը: Սակայն այդ հակասությունների և ներքին պայքարի ընթացքում կանգնում է գրաբարի կողմը:

Մ. Թաղիադջանը շատ լավ գիտակցել է, որ ինքը ստեղծագործում է ոչ միայն հնդկահայ զաղութի, այլև համայն հայության, հատկապես Արարատյան հայրենիքի հայության համար, բայց միաժամանակ քաջ ծանոթ էր հայոց լեզվի առանձին բարբառներին և գիտեր, որ առանց միասնական լեզվի գոյությունն այդ բարբառներով խոսողները մեկը մյուսին չառնում: Գովաբանութեամբ կհասկանան:

Թաղիադջանը շնչաժամ փորձել է, բայց չի կարողացել գրել Արարատյան բարբառով և միասնական լեզվի հիմքը դարձնել այդ բարբառը, որովհետև հնդկահայ պահպանողական բուրժուազիան չէր հանդուրժի: Իսկ նոր Զուղայի բարբառով գրելը, որ հասկանալի ու մատչելի էր հնդկահայերին, իր սկզբունքին դեմ էր, բանի որ ինքը գրում էր բոլորի հա-

մար, մինչդեռ բոլորը չէ, որ կհասկանային այդ բարբառը: Եվ նա հարցը լուծում է հօգուտ գրաբարի:

«Տեղական աշխարհագրարն (խոսքը Զուղայի բարբառի մասին է— Զ. Մ.) կարի ամփոփ է և գծուարահասկանալի յամենայն ուրեք: Օրինակի համար՝ լեզուն հին և նոր Զուղա՝ յԱղուլիս ոչ հասկանան. զԱղուլեացն ի Սիւնիս, զՍիւնեացն, յԱրարատ, յԱրարատին ի Պօլիս... որ ուամկօրեն գրէ, վասն մասնաւոր տեղոյ աշխատի, իսկ որ գրաբար գրէ՝ վասն ամենայն ազգին և ընդհանրոյ աշխատի»⁸:

Նույն սկզբունքն է առաջ բաշում «Մեսրոփբյան առաջնորդ մանկանց» գրքում, երբ խոսում է մինչ այդ լույս տեսած դպրոցական մի շարք գրքերի մասին, որոնք գրվել են աշխարհաբար, «Մակայն յոճ գաւառական գոլով, գրեթէ անհասկանալի մնան ի մերոյս՝ նաեւ օգնականութեամբ բառարտնաց»⁹:

Ուշագրություն են գրաւում հայերենի մեջ նրա ներմուծած և ստեղծած մի շարք նոր բառերը: Խոսելով Գերմանիայից մինչև Միջերկրական ծովը հեռախոսալար անցկացնելու մասին, «էլեկտրիկ» բառը Թաղիադյանը թարգմանում է «շփճրական»: «Մին մետաղյա թել վասն հաստատ պահելու զհամադատասխանություն Շփնաւական կամ էլեկտրիկ, հեռագիր կամ տելեգրաֆիա Ռուսնայ՝ որ ի Գերմանիա, երկաթե ձանադարհով մինչև ի Միջերկրական նահանգաց կառավարութեանն ջրերի ընթացքով տարել են, և Պոնդոս լա բոնկորե՛լ՝ ի տակիցն հանել են մինչև կառավարչի գործատան մեջն»¹⁰:

Հայտարարելով այն մասին, որ սկսել է «Ազգասերում» տպագրել Թադևոս Ավետումյանի «Արամայիս» նովելը, այդ բառը թարգմանում է կեղծարանություն:

«Այսօրէ օրագրումն մին զվարձալի կեղծարանություն (ըստ Անգղիացւոց նաւըլ եք տեսանելոց, որ ունի շարունա-

8 «Ազգասեր Արարատյան», 1848, № 1, էջ 3:

9 Մ. Թաղիադյան, Մեսրոփբյան առաջնորդ մանկանց, Կալկաթա, 1841, էջ 2:

10 «Ազգասեր», 1845, № 9, էջ 66:

կիւ հետզհետեւ Անուան է «Արամայիս» և հուսանք որպէս մեզ՝ նույնպէս և մեր պատուիւի ընթերցողաց ախորժիւի կլինի»¹¹։

Հետագայում Թաղիադջանը նովել բառը թարգմանում է նորավեպ։

Նորավեպ բառի շուրջը XIX դարի 90-ական թվականներին արեւմտահայ գրականութեան մեջ բավական ազդեցիկ է բարձրացել։ Գր. Զոհրապը նովել բառի փոխարեն գրում է նորավեպ։ Այդ պաշտպանում էին Ե. Տեմիրճիպաշեանը, Տ. Կամսարականը, Արփիարը և ուրիշներ։ Եղել են նաև շատ հակառակորդներ։

Նորավեպ բառի շուրջ ելույթներ են ունեցել և գրել «Մասիսում»։ Ի վերջո «Մասիսը» գրել է։

«Ենովք Արմեն «Արեւելքի» մեջ հոգոված մը նվիրելով նորավեպ բառին շուրջը հարուցված գրական-լեզվաբանական ծանոթ վեճին, կեցրակացնէ, թէ Մեսրոպ Սեթ նամակ մը գրելով իրեն՝ վավերական կերպով հայտնած է, թէ նորավեպ բառը հեղինակութուն է Մ. Թաղիադջանի, որ 1849-ին Մխիթարյան տպարանէն հրատարակված թերթի մը մեջ առաջին անգամ դործածած է գրելով սա նախադասութիւնը. «Ըստ նորավեպի Սըր Կալլըր Սկոտի»¹²։

Նոր բառ է նաև «շոգուղի», որ հետագայում դարձնում է երկաթուղի կամ երկաթգիծ։ Խոսելով երկաթուղիների կառուցման մասին, նա ծանոթագրութեան մեջ գրում է. «Կրակի նավին անդդիացիք ասէն սոսկ steamer (Սթիմըր)։ Շոգուղիսկ մէք լավ ևս՝ Շոգէնավ ասեմք։ Երկաթի ճանապարհին, ասէն Rail way (Ռեյլ վեյ), որ նշանակէ և ոչ ինչ բոտ իրեն, ալլ բոտ առման և էթ։ Յանկապատ կամ վանդակապատ ճանապարհ, իսկ մէք ասեմք՝ Շոգուղի, բարդալ ի շոգի և ուղի բառից արգ՝ որն է հարմարագոյն»¹³։

11 նույն տեղում, № 13, էջ 97։

12 «Մասիս», 1901, № 39, էջ 611։

13 «Ազատակեր», 1845, № 19, էջ 148։

Ինչպես նաեւ՝ նախնական—նախնական, սոցիալական—ցնդարարարական և այլն:



Լուսավորիչ Թաղիապետներ մեծ տեղ էր տալիս դպրոցական գործին: Նա աստիճան ազդեցիկ տնկերի, եկեղեցիների կառուցման գիւմ շէր առհասարակ, բայց առաջարկում էր, որ դրանք դառնան դպրոցներ և ծառայեն ազգի դարգացման գործին: «Հայկապ ի 1001 եկեղեցիս Անուշ,— գրում էր Թաղիապետը,— և համաձայնիս մեզ յասելս թէ երանի թէ կիսով չափ ի նոցանէ ուսումնարանք լիալ էին»¹⁴:

Թաղիապետն ասում էր, որ մի քանի դպրոցների կառուցմամբ չի բավարարվի ազգի պահանջը: Դպրոցաշինութեան գործը պետք է համընդհանուր բնույթ կրի, պետք է բոլորին մասհողի: Դպրոցներ պետք է կառուցվեն ոչ միայն քաղաքներում, այլև ամեն մի շնորհ, ամեն մի ավանում: Եվ այդ գործը պետք է ոչ թի ձեռնարկեն ինչ-որ անհատներ, այլ դրան պետք է մասնակցեն բոլորը, ուստի առաջարկում էր ժողովրդից դանձվող հարկերից մասհանում կատարել ազգ նպատակի համար:

«Սակայն՝ թի որ միմեք ընդգիմանալով ուզենա ասել՝ թի ներկա ևս մեր Ազգի միջում փոքր հառաջագիմություն չի որ արեմանա, և թի՝ առանց այդ արգելքներն մեջտեղիցն բանալու ևս, կարելի որ ուսմունքն դարգանա՝ դպրոցներ և վարժարաններ շինելով. ևս ևս այդ մասց բնդունելություն տալով՝ կասեմ թի մարթ է այդ կերպ հառաջագիմության այնքան հուսալ՝ որքան որ միմեք այժմ երեւցալ մեր միջում. բայց ասա մեր աստիճանն էնպիսի վերա է, թի՝ ինչպես հնար է բոլոր ազգն միանգամայն բարեկրթել, և բոլորովին միանգամայն դեպի գիտութեան լուսն տանել: Ահա, էստուր անհնար է հասանել մեր բնական ծանր բնթացքովն, և էն ևս միմեք քանի հաա դպրատուններով և միմեք քանի վարժարաններով:

¹⁴ «Ազդատեր Արարատյան», 1850, № 42, էջ 333:

Նախն Կի՝ բոլոր ազգս միանգամայն առաջ տանելու համար, հարկավոր է ամենայն քաղաքների և գեղերի մեջ դպրոցներ ունենալ, կարգալ կրել սովորել և սկզբնական օգտակար ուսմանը, մեծ քաղաքների միջումն ևս՝ բնական և բանասիրական վարժատունք. գեղեցիկ արհեստների մարզարաններ, արհեստի տեղարեներ, տպագրատունք, դրատունք, բնական պատմություն և վարպետաշեն ձեռագործների թանգարանք (մշտսիրմ) և այլ ուրիշ ինչ որ էստուր կվերաբերեն:

Արդ՝ ո՞վ ա կարող մին մեծ կարոտություն լցուցանել մի՞թե հնար է այս ընթացքով որ մինչ օրս ընթացականք, հասանել այս բանին, մի՞թե մին քանի բարերար մարդիկ բավական են բոլոր մին ազգ լուսավորելն՝ մին քանի դարատունք շինել տալով. ոչ թե մին և երկրի, այլ և ոչ տասն մարդի բան է այդ: Չեմ ասում թե մին ազոտ փոքր լույս չեն կարող ծագել, այլ յուրյանց մտքի առաջադիմությունն չեն կարող գլուխ տանել և մեծ-մեծ փոփոխությունք առել ազգի մեջ, թեպետե անհաստ գանձք ուղենան ծախսել այս բանի համար. վասնզի՝ մեծամեծ գործքերի ձեռ տալու ժամանակումն մին պատիկ դավարություն ևս թե դուս գա՝ չափսից դուրս մեծ մեծ հսկաներ կթվան: Եվ թեպետ որքան որ հեշտ լինի կտունց մնին կամ երկրին հաղթել, այլ շատ անգամ կլինի՝ որ երրորդումն կհաղթվի այն բարերարն, ձեռ վեր կառու գործքիցն, որով և յուր մտքում դրած գեղեցիկ առաջագրությունն անխնամ կմնա և անկատար...»¹⁵:

Մ. Թադիադյանը լավատես էր և մեծ հույսեր էր կապում ապագայի հետ: «Ազգասերում», խոսելով Թիֆլիսում հրատարակվող «Կովկաս» թերթի մասին, ավելացնում էր.

«Հաղիվ անց երեսուն ամ, յորս դպրություն և լեզու հայոց՝ զլիսվին բարձեալ անհետանալո ի միջոցս Մասեաց լերին և Կովկասու, իսկ այդ զոհութիւն շնորհաց ամենակալին, զի ոչ միայն դպրոցք հաստատեցան ի տեղիս տեղիս, այլև տպարանք և արուեստարանք ազատական և գործնական արուես-

15 «Ազգասեր», 1845, № 11, էջ 87:

տից, ուստի զիւ նոր ած է Հայաստան, զիւ նորաստունկ են որթ
և ոստր նոցա, և եթէ յայսմ իսկ մատաղութեան՝ կարիցէ պըս-
ղաբերել աշխատողին զծախս տպագրութեան և հրատարա-
կութեան լրագրոց՝ տակաւին մեծ է. և յոյս շատ մեծ վառէ
մեկ ակնունել տպագայ առատութեան գրաւոր բերոց իւ-
րոց»¹⁶:

Մ. Թաղիադյանը իր փիլիսոփայական հայացքներով ի-
գնալիստ էր, բնդունում էր ասածու գոյությունը և նրան հա-
մարում արարիչ բոլոր էակների: Աստված ոչ միայն ինքնա-
դոյ է, այլև ինքն է ստեղծել ամեն ինչ: Մեր իմացական գո-
րությունը նշութից չէ առաջացել, այլ ոգոյց, հայտարարում
էր Թաղիադյանը:

«Իմացական զօրութիւնք քոյ ոչ ի նիւթոյ կազմեցան, և
ոչ կեալ կարեն որով մարմինդ բո սնանի: Հան ի վարնգոյ
դշիւդն արեգական՝ եթէ կարող ինչ իցես և խորհուրդ կամ
զհանճար ի հացէ, ի մսոյ և ի խահից, զորս ուտես և ըմպես:
Միտք արտադրեցին զնիւթս, (քանզի Աստուած այնպէս արար)
բայց նիւթ երբեք ոչ արտադրեաց զմիտս»¹⁷: Ասածու գոյու-
թյան, նրա արարչական ստեղծագործության մասին է խոսել
«Տիեզերս է վարժարան մարդոյ» հոգվածում, ուր գրել է.

«Աստուած սէր է: Զի սէրն աստուծոյ շարժեաց զնա
յայտնել զփառս իւր ստեղծագործութեամբ աշխարհի վասն
հաղորդելոյ այլոց էակաց զմասն ինչ երջանկութեանն, զոր
ունի յինքեան»¹⁸:

Հոգին աննյութ է, անմարմին և հոգեոր ու նման աստ-
ծուն: Ուրեմն, ասում է Թաղիադյանը, հոգին անմահ է ու
մշտնջենական:

«Քանզի եթէ հոգին աննյութ է, ապա և անմարմին է. եթէ
անմարմին է, ապա և հոգեոր է, ապա և նման Աստուծոյ՝ ա.

16 «Ազգասեր», 1847, № 104, էջ 255, «Հայ քրիստոնյա ոմն»:

17 «Ազգասեր», 1845, № 11, էջ 87:

18 «Ազգասեր», 1845, № 5, էջ 38:

պա և անմահ. ուրեմն հոգին քստ նախկին զինչութեան իւրում պարտի զոլ անմահաբեր հրջանիկ կամ թշուառ»¹⁹:

Աստծու գոյութիւնն ընդունելով հանդերձ, Թաղիադյանը առաջարկում էր խորամուխ լինել նրա էութեան մեջ և ճանաչել աշխարհի ստեղծագործութիւնները: Որպէս լուսավորիչ փարձել է հաշտեցնել կրօնն ու գիտութեանը:

Սակաչն իդեալիստ և աստվածապաշտ Թաղիադյանը հետո էր կանգնած ամեն տեսակի սնոտիապաշտութիւնից: Մնոտիապաշտութեան շատ երևոյթներ նա հերքում էր գիտական բացատրութեամբ:

Մ. Թաղիադյանը Հնդկաստանի պատմութեան առասպելականութիւնը համարում էր բրահմինների գործը:

«Որք պիտակ բահանութեամբ յինքեանս կորզել կամելով զհաւատ ժողովրդեան, ջանացան մեծ և տհաւոր կացուցանել յաչս նոցա զամենայն»²⁰:

Աստվածավախ Թաղիադյանը աշնուամենայնիւ դեմ էր դնում կրօնական դոգմաներին և առաջարկում էր ստուգել, ճանաչել բնութիւնը ամբողջութեամբ, պրպտել բնութեան ընդերքը և հասնել ընդհուպ մինչև աստծուն:

«Արդարեւ ճշմարիտ է, զի ուրբան և հետամուտ լիցիք բնական գիտութեան, տակաւին անծանօթ և անհասանելի մնան մեզ իրք բազումք. և ոչ երբէք բաջ ճանաչի անձուկ սահման մտաց մերոց, բայց յորժամ խորամուխ լինել ջանամք ի խնդիրսն մեր. սակայն և այնպէս հնար է մեզ ուսանել և ստանալ զայնցանէ ծանոթութիւնս շափաւորս և բաւականս: Կանսն զի ո՞ր հողադործ ոչ կարիցէ հասու լինել թէ զիրաց հատն զոր սերմանէ յանդի իւրում, սնանի՞ աճի և տայ ընդ միոյ հարիւր»²¹:

Արարչի գործերը ոչ միայն պետք է իմանալի լինեն, այլև մեր պարտքն է փորձով ստուգել և հաստատել դրանք:

¹⁹ «Աղդասիր», 1847, № 104, էջ 256:

²⁰ Մ. Թաղիադյան. Պատմութիւն հին Հնդկաստանի, Կալկաթա, 1841, էջ 86:

²¹ «Աղգասիր», 1845, № 2, էջ 15:

Մ. Թաղիադյանը ժամանակի հայ հոգեկորականությունն նկատմամբ ընդհանրապես բացասական վերաբերմունք է ունեցել, չնայած գովեստով է խոսել անցյալի մի շարք անվանի հոգեկորականների մասին, որոնք պատմականորեն մեծ աշխատանք են կատարել հայ ժողովրդի կյանքում: Նրանց աշխատանքի արդյունքն է համարում հայ մատենագրությունը գարավոր պատմությունը, հայ դպրոցների ստեղծումը միջնադարում և այլն. «Թէ հոգեկորականը չլինէին յազգի մերում, ոչ զիրս ունէար և ոչ զրեանս: Կորուսեալ էար մինչ ցարդ և զլեզուս մինչ իսպառ»²²:

Թաղիադյանը համակրանքով է խոսում Մխիթարյան հայրերի մասին՝ Սուրբ Ղազար կղզին համարում «ալն պայծառ հայագիրտութեան»:

Ինչպես նոր Զուղայում, այնպես էլ էջմիածնում ու Կ. Պոլսում Թաղիադյանը տեսել և զգացել էր, թե իրենից ինչ է ներկայացնում հոգեկորականությունը: Նա քննադատում էր հատկապես անդործունշա, ծուլ, բանասարկու, խավարամիտ և տգետ հոգեկորականներին:

Բանավիճելով ճանապարհորդ վագների հետ, որը բացասաբար էր արտահայտվել հայ ժողովրդի մասին, Թաղիադյանը իրավացի էր համարում վագների բնադատությունը հայ հոգեկորականների հասցեին. «Զի եթէ և զչափազանցութիւն վագների ի բաց խուլեացուր զեռ տալաւին մնայ անդ անուսումնասիրութիւն յամօթ և ի նախաարինս մերս եթէ օրինակ ալլոց ազգաց ոչ ինչ ազգեն սրբակրօնիցն էջմիածնի՝ թող զոնէ օրինակի աշխարհականաց ազգի իւրեանց հետեացին»²³:

Փառաբանելով նախորդ կաթողիկոսների գործունեությունը, Թաղիադյանը սրաի կսկիծով էր հիշում իր օրերի էջմիածնի վիճակը. «Ախ, էջմիածին, էջմիածին, նախկին Աթոռ

22 «Ազգասեր Արարատյան», 1850, № 61, էջ 484:

23 «Ազգասեր», 1845, № 8, էջ 64:

Քրիստոնեություն մերո, կարծեմ հասկանումատ քե ինչամ ուղում ասել

— Այո և այս միայն»²⁴։

Հուսավորիչ Քաղիազյանն իր հայրենիքին ծառայելու համար հրաժարվեց հոգևոր կոչումից և հեռացավ եկեղեցուց։ Հոգևորականների մասին Քաղիազյանը արել է մի շատ դիպուկ և բնութագրող նկատողություն։

«Սորա երբ առաջնորդ կարգվեն, հետերնին ուրիշ բան չեն տանիր, բայց եթե ապականյալ բարբ, դարտակ քսակ, անհոռնի խիզախանք, անկուշտ որովայն, և իզձ՝ գանձ դիվելու բրով և իցի եղանակով։ վայ որոց հանդիպին... ինչի՞ համար ես աշխարհական դարձա, հոգիս ու մարմինս փրկելու համար»²⁵։

Քեե կրոնի և հայ եկեղեցու նշանակությունը նա նույնպես բարձր էր գնահատում, բայց միաժամանակ ամեն կերպ աշխատում էր ազատագրվել եկեղեցու ազդեցությունից և ձգտում էր ստեղծել աշխարհիկ նոր կուլտուրա²⁶։

Քաղիազյանը քննադատում էր նաև մահմեդական, ինչպես նաև եվրոպացի հոգևորականներին։ «Ատլաս» օրագրից թարգմանաբար տպագրելով ճիզվիտների հալածանքները Ֆրանսիայում և Իտալիայում, Քաղիազյանն իր կողմից ավելացնում է, թե դրանցից ավելի վտանգավոր են ամերիկյան միսիոներները, որոնք անվայել պարտականություն են ըստանձնել և խաբում են արեւելքի ժողովուրդներին, այդ թվում և հայերին, թունավորում նրանց կյանքը։ Պետք է ամենախիստ հակահարված տալ նրանց և վտարել երկրից, ասում է Քաղիազյանը։

Ամերիկացի միսիոներների գործունեության մեջ Քաղիազյանը տեսնում էր կապիտալիստական աշխարհի քաղաքակրթւթ մութ գործերը։ Այդ ամենը միայն նրա համար է,

²⁴ «Ազգասիր», 1845, № 9, էջ 65։

²⁵ Հովհ. Մկրչյան, Կենսագրություն Մ. Գ. Քաղիազյանց, 1886, էջ 47։

²⁶ Ա. Կալինյան, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. 1, 1956, էջ 283։

ասում էր նա, որ կապիտալիստական երկրները կարողանան ստրկացնել Արեւելքի երկրների ժողովուրդներին և նոր շուկաներ ձևաբերեն Արեւելքում՝ իրենց ժանգոտած երկաթը վաճառքի հանելու համար:

Հետաքրքիր է նրա մի ակնարկը միսիոներների անառակությունների մասին: Փաստը մեջ է բերված Կալկաթայում լույս տեսնող անգլերեն «Ինգլիշման» լրագրից:

«Քանի ատուրբք յառաջ հրատարակեաց Ինգլիշման լրագիր, թէ Ամերիկացի քարոզիչ ոմն մկրտեալ գերկրական որ և զկին նորա, զայն կարգեալ ուսուցիչ Քրիստոնեականութեան գարսցաց գենի իւրում. և զիւր սիրուն կին թողեալ՝ անկարնդ կնոջ նորընծայ հաւատացելոցն: Զոր և մեր զանց արարար վասն մարտութեան զրչի և թղթի մերոյ»²⁷:

Նախապաշարմունքը և սնոտիապաշտությունը, ասում է նա, ծնունդ են տգիտության և կամապաշտության: Ով որ ուզում է ազատ գործել, պետք է նախ իրենից թոթափի նախապաշարմունքի փոշին:

«Չիք ախտ ի մէջ մոլութեանց մարդկանց՝ որ աչնրան կապկանայ ազատ գործողութեան, որքան յամառութիւն: Յամառութիւնն որդի է կամապաշտութեան, և թոռն տգիտութեան և զոգցես տամբ և տեղե կերպարանակից թշնամի աւատ գործողութեան»²⁸:



Մ. Թադիադյանի գրական, գիտական, մանկավարժական և հրապարակախոսական գործին պալիս է լրացնելու նաև նրա խմբագրական եռանդուն և մեծ աշխատանքը:

Մ. Թադիադյանի կերպարը բնութագրելու, բնավորության գծերը պնահատելու և նրա գործունեությունն արժեքավորելու համար պետք է կանգ առնել խմբագրված և հրատարակված այն աշխատանքների վրա, որոնք կապված են նրա

27 «Ազգասեր», 1846, № 46, էջ 205:

28 «Ազգասեր», 1846, № 97, էջ 194

անվան հետ: Բայցի «Ազգասեր» և «Ազգասեր Արարատյան» հանդեսներից, նա խմբագրել և հրատարակել է մոտ երկու տասնյակ գրքեր, որոնք առանձին արժեք են ներկայացնում ու բնորոշում են և՛ ժամանակի հնդկահայ կյանքի որոշ կողմերը, և՛ Թաղիադյանի դեմքը:

Հայտնի է, որ Մ. Թաղիադյանը Հաղպատից դուրս գալիս իր հետ Հնդկաստան է տանում եպիսկոպոս Բերդումյանի «Աստվածամանուկներին» աշխատությունը իր ընդօրինակած ձևով: Այնուհետև եպիսկոպոսական ճեմարանում սովորելու ընթացքում և ղեկավարելով այդ ճեմարանում դործող տղաքանի: հայկական քաժինը, առիթից օգտվում և 1827 թ. տպագրում է այն: Սա համարվում է Մ. Թաղիադյանի առաջին խմբագրական աշխատանքը, որտեղ ավելացրել է նաև իր ծանոթագրությունները:

Այս, ինչպես նաև եպիսկոպոսական ճեմարանում լույս տեսած Հոգոնի Գրովտիոսի «Ճշմարտություն քրիստոսական հաւատոյ», Ռիչնալդ Հիբբի «Պաղեստին» գործերի թարգմանությունը և իր «Դիցաբանություն», «Պատմություն հին Հնդկաստանի», «Մեսրոփյան առաջնորդ մանկանց» և «Մեսրոփյան աշխատանք» գրքերը լույս են տեսել մինչև 1841 թ.: Մինչդեռ նրա և՛ ստեղծագործական-հրապարակախոսական, և՛ խմբագրական հիմնական գործունեությունը կապված է Արարատյան ընկերության ստեղծման հետ:

Արարատյան ընկերությունն ուներ տպարան, որտեղից դուրս եկան մի շարք գրքեր: Մ. Թաղիադյանն այս շրջանում իրեն գրսևորում է ոչ միայն որպես գրող, հրապարակախոս և մանկավարժ, այլև որպես հրատարակչական գործը լավ կազմակերպող և ակտիվ խմբագիր:

Մ. Թաղիադյանը «Ազգասեր Արարատյանի» 1851 թ. փետրվարի 15-ի համարում տպագրել է իր հրատարակած գրականության հետևյալ ցուցակը²⁹:

²⁹ Ցուցակից հանվել են Թաղիադյանի ստեղծագործությունները և թարգմանությունները, որոնք հիշվել են սույն աշխատության մեջ:

1. Աղօթամատուց Սանուկ Զօրապալ
2. Աղիւսակ Պիթագորեան
3. Այրբենարան Մ. Մկրտչեան
4. «Արամայիս» Թ. Խ. Ավետումեան
5. Երգարան
6. Զարգը երկնից Յովհաննէս Երզնկացոյ
7. Հայր մերի մեկնութիւն
8. Հրահանգ Քրիստոսական վարդապետութեան, Հ. Ալաիզարեան
9. Ճանապարհ երջանկութեան, Յովհաննէս Սարգսեան
10. Ճառ վասն ազգային յառաջադիմութեան
11. Ճշմարիտ քաղաքավարութիւն տիկնաց
12. Մեկնութիւն յայտնութեան սրբոյն Յովհաննու
13. Ողբը և հառաչք Ստեփանոսի Սիւնոյ
14. Պատմութիւն հնդկաց (Թ. Խօջամալ)
15. Պատարագ, Մ. Զօրապալ
16. Պատմութիւն Ս. Գրոց, Հ. Գալստեան
17. Ռոպէնտոն համառօտ
18. Փոխերեցն Վեկֆիլդ— թարգմ. Թ. Խ. Ավետումեան
19. Քերականութիւն համառօտ

Այս ցուցակից դուրս է մնացել Մ. Թադիսդյանի խմբագրած ու «Ազգասեր Արարատցանի» տպարանում հրատարակված վերջին գիրքը, որը տպագրվել է 1852 թվականի մարտին և որից մի բանի ամիս հետո վերջնականապես փակվել է «Ազգասեր Արարատցանը»:

Գիրքը հետեւյալն է.

«Զաւիա կամ ընդհանուր ծանօթութիւն բազմակղզի ծովու առեւելեան հնդկաց՝ որ շարժի հոլանդացոց աէրութիւն ընդ նմին և հարկաւոր գիտելիք զկղզեաց և զբնակչաց զսովորութեանց և զվարուց ազգացն, զբնիկ և զօրինական կառավարութեանց՝ և զայլ և այլ կարգադրութեանց:

Համառօտաբար տեսալ յաշխարհագրութենէ հնդկաց հոլանդացոց և յաւելեալ ի նա զաէնպէս պիտանաւոր ծանօթութիւնս ի զանազան գրոց, ի հաւատարիմ լրոց և յականատես անձանց.

Ի Գեորգայ Ա. Զաքարեանց
յՅզուտ սիրելի ազգի իւրոյ
Ի տպարանի Ազգասիրի Արարատեան
Ի Կալկաթա 1852 թ.»³⁰։

Գիրքը բաղկացած է 2 մասից և ունի ընդարձակ առաջաբան։ Առաջին մասը 17 գլուխ է, երկրորդը՝ 30 հատված։ Գրքում նշվում են Ճավա կղզու աշխարհագրական դիրքը, բնակչությունը, սովորութիւնները և այլն։

Գրքի առաջաբանն ընթերցելիս պարզվում է, որ Թաղիադյանը ձգտել է ամեն գնով միջոցներ հայթայթել, որպէսզի կարողանա տպագրել իր թերի մնացած աշխատութիւնները, սակայն նրա բաղձանքը չի իրականանում։

30 Գ. Ա. Զաքարեանց, Ջավա կամ ընդհանուր ծանոթութիւն բազմազգի ծովու արեւելյան Հնդկաց, Կալկաթա, 1852։

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մ. Թադիադճանի բեղմնավոր մանկավարժական գործունեությունը բացատրել տեղ է գրավում XIX դարի առաջին կեսի մեր մշակույթի պատմության մեջ:

Մ. Թադիադճանը ոչ միայն մանկավարժական առաջավոր, գեմոդրատական տեսական հարցեր է առաջադրել, այլև ինքն իր գործունեության ընթացքում կիրառել է այն:

Մինչև Կալկաթայում «Սուրբ Սանդուխտ» դպրոցի հիմնելը, ինչպես հայտնի է, Թադիադճանը մանկավարժական գործունեություն է ծավալել տարբեր վայրերում:

1822 թ. եփրեմ Կաթողիկոսից թույլտվություն ստանալով, Մ. Թադիադճանը դուրս է գալիս Հաղպատից՝ ուսման նրկատմամբ ունեցած իր ծառավը հագեցնելու համար: Տաթև վրամ վանքի առաջնորդ Մարտիրոս Տաթևացու հորդորները՝ մնալ այնտեղ և զբաղվել ուսուցչությամբ, չեն կասեցնում նրան և նա շարունակում է իր հանապարհը: Նոր Ջուղայում մի քանի ամիս զբաղվելով ուսուցչությամբ՝ անցնում է Հրնդկաստան:

1825 թ. Կալկաթայում, Հայկական Մարդասիրական հեմարանում, ստանձնելով հայոց լեզվի ուսուցչի պարտականությունը, շատ շուտով թողնում է այն, որովհետև ընդունվել էր Կալկաթայի անգլիական եպիսկոպոսական հեմարանը՝ ուսանելու:

1831 թ. Թադիադճանը, ավարտելով անգլիական եպիսկոպոսական հեմարանը, նոր ջուղայեցիների հրավերով գնում է այնտեղ:

Ինչպես հայտնի է, նոր Զուգան XVII—XVIII դարերում ապրում էր իր զարգացման վերընթաց շրջանը: Հայերեն տպարան ունենալը (1641) հնարավորություն էր տվել ունենալու տպագրություն և դպրոց: Խաչատուր Կեսարացու ջանքերով բացված դպրոցը տվեց մեծանուն գիտնականներ: Սակայն հետագայում նոր Զուգայի առևտրի, տնտեսության քայքայման հետ միասին անկում է ապրում կուլտուրական կյանքը, իր գոյությունը չի պահպանում նաև դպրոցը:

XIX դարում, նոր Զուգայի առևտրական և մշակութային կյանքի որոշ աշխուժացման շնորհիվ, լուսավորչական եկեղեցու կողմնակիցները ցանկանում են ունենալ իրենց դպրոցը: Գրան օգնում է նաև հնդկահայ բարերար Գրիգոր Սամյանի կտակած գումարը. արդեն 30-ական թվականների սկզբին նոր Զուգայում գործում էր Ամենափրկչյան ճեմարանը: Ճեմարանի բացմանը մեծ շափով նպաստում է նաև Մ. Թադիսդյանը: Չնայած Գ. Սամյանի կտակած փողն ուշանում էր, նա համաձայնվում է իր միջոցներով բացել դպրոց և որոշ ժամանակ աշխատել, մինչև որ կտացվեր գումարը: Սակայն չհանգուրժելով նոր Զուգայի հոգաբարձուների խարդավանքներն ու հալածանքը, հայրենիքում աշխատելու բուռն ցանկությամբ տոգորված, Թադիսդյանը թողնում է նոր Զուգան և գալիս Հայաստան:

Երկար դեպերումներից հետո, ինչպես ասվել է կենսագրության բաժնում, Թադիսդյանը վերջնականապես հաստատվում է Հնդկաստանի Կալկաթա քաղաքում, ուր և ծավալում է մանկավարժական բեղմնավոր գործունեություն:

Հնդկահայ գաղութի հայկական դպրոցի պատմությունն սկսվում է XVIII դարի վերջից: 1798 թվականին Կալկաթայում Հարություն Գալուցյանը իր տանը կազմակերպում է մի դպրոց, ուր ուսուցանում էր հայերեն և անգլերեն լեզուներ: 1821 թվականին Կալկաթայում «Իմաստասիրական ընկերության» ջանքերով բացվում է Հայկական Մարգարաթական ճեմարանը, որին 1824 թվականին միանում է Հ. Գալուցյանի դպրոցը:

Մարդասիրական ճեմարանն սկզբում ունենում է աղաների և աղջիկների դասարաններ, բայց հետագայում աղջիկների դասարանը փակվում է, մնում է աղաների բաժինը:

Անցյալ դարի 40-ական թվականներին հնդկահայ գաղութի կուլտուր-լուսավորական գործն առաջ մղող կենտրոնական դեմքը Մ. Թադիսադյանն էր: Իր գրական, գիտական, հրապարակախոսական և մանկավարժական գործունեությամբ նա առաջ է մղել հնդկահայ մշակութային գործը: Արարատյան բնկերությունը կազմակերպումից և «Ազգասեր» պարբերականի հրատարակությունը ձևանարկելուց անմիջապես հետո, նա մեծ ջանք է գործադրում նոր դպրոց բացելու համար:

Մարդասիրական ճեմարանն այլևս չէր արդարացնում իրեն: Այնտեղ ավելի շատ ուշադրություն էր դարձվում անգլերեն, քան հայերեն լեզվի ուսուցմանը: Շատ հայ մանուկներ կամ հաճախում էին անգլիական դպրոց և կամ դուրս էին մնում դպրոցից: Աղջիկները զրկված էին կրթություն ստանալու հնարավորությունից:

Որպեսզի ուղղակի չհակադրվի Մարդասիրական ճեմարանի ղեկավարությունը և նոր հալածանքների չենթարկվի, Բադիսադյանը սկզբում հարց է դնում միայն աղջիկների զրպոց ունենալու մասին: Եվ որպեսզի խուսափի հնդկահայ խիստ պահպանողական մտայնությունից, նա հայտարարություն է հրապարակում իր կնոջ՝ Շուշանի անունից: Հայտարարության մեջ, որը հրապարակվում է «Ազգասերի» 1846 թվականի հունվարի 31-ի համարում, ասված է, որ տիկին Շ. Թադիսադյանը բնութանում է աղջիկներին՝ հայերեն գրել, կարգալ, ինչպես նաև կար ու ձև սովորեցնելու համար:

Կարճ ժամանակ անց հրապարակվում է երկրորդ հայտարարությունը¹, այս անգամ արդեն երկսեռ դպրոց ունենալու մասին: Եվ ապա կազմակերպվում է Սուրբ Սանդուխտ երկսեռ դպրոցը, որը մի քանի տարվա իր գոյության ընթաց-

¹ Տե՛ս «Ազգասեր», 1846, № 69:

քում արժեքավոր և գնահատելի գործ է կատարում՝ կրթելով և դաստիարակելով տասնյակ պատանիներ ու աղջիկներ։ Հենց այս դպրոցի հետ էլ հիմնականում կապվում է Մ. Թադիադյանի մանկավարժական գործունեությունը և ձևավորվում նրա մանկավարժական առաջավոր հայացքները։

Մ. Թադիադյանը մի շարք մանկավարժական ձեռնարկների և հոգվածների հեղինակ է։ Ինչպես, օրինակ. «Մեսրոպրյան շարագրիչ», «Մեսրոպրյան ալբեհնարան», «Մեսրոպրյան առաջնորդ մանկանց», «Ճան դաստիարակության օրիորդաց», և «Աղգասեր»-ում տպված մի շարք հոգվածներ։

Մ. Թադիադյանը ծանոթ էր հայ մանկավարժության անցյալին։ Մոտիկից գիտեր էջմիածնի կղերի դաստիարակչական հայացքները, ուսուցման մեթոդները։ Բայց նա սովորել էր Պողոս Ղարադաղցուն՝ մյուսներից խիստ տարբերվող մեթոդներով։ Իր «Ճանապարհորդություն ի Հայս» գրքում օրինակներ էր բերում և հիացմունքով խոսում իր ուսուցչի մասին։ Թադիադյանը ծանոթ էր և Հ. Ալամդարյանի մանկավարժական հայացքներին։

Թադիադյանն առաջին հերթին հակադրվում էր մինչև այդ գոյություն ունեցող ուսուցման սխալաստիկ սխառնմին և բացասում այն։ Ուսուցումը գրաբար լինելու հետևանքով նա զգում էր, որ երեխան դժվարություններ է ըմբռնում անծանոթ նյութը, ուստի իր կազմած դասագրքում գրաբար բառերի կողքին տալիս էր աշխարհաբար բացատրությունը։ «Մեսրոպրյան ալբեհնարան» դասագիրքը հենց վերոհիշյալ սկզբունքներով էր կազմել։

Մ. Թադիադյանը քննադատում էր գոյություն ունեցող բերականական դասագրքերը։ Նա գրում էր. «Յայս դար ծաղկեցան վարժակեր բերականութեանց, յազգի մերում և ջանացան հաւատացուցանել, թէ կանոնք իւրեանք իցեն լսել միջոցը հայկական շարագրութեանց։ Իսկ աշակերտք շոր ու ցամար կանոնացն ջան եղեալ բնդ անհմուտ դաստիարակութեան նոցա, առանց ճիշտ կիրառութեան օրինականացն էղելոց ուսան բառս ի բերան և ոչ իմացան, թէ առ որ վախճան։

Իսկ որք ուսան ինչ կամ գրեցին ի ձև շարագրութեան,
յաւեա կապկանալով արարին, բան ունակութեամբ...»²։

Թաղիաղյանը բերականութեան ուսուցումը կապում էր
կենդանի խոսքի ուսուցման հետ, որը երեխային հանելով
վերացական մտապատկերների ըմբռնման գովարտությունե-
րից, մոտեցնում էր կենդանի շրջապատի կոնկրետ նյութին։

Որքան էլ հայրենիքից հեռու, նա միշտ վառ էր պահում
ազգային-հայրենասիրական ոգին։ Մի կողմից՝ ամբողջ հո-
գով կապված լինելով իր հայրենիքի հետ, և, մյուս կողմից՝
զգույնով զազույթահայտության բայքայտումը, նա աշխատում էր
տանն կերպ իր հայրենակիցներին փրկել ուժացման վտան-
գից։ Հիմնելով Սանդիսյան դպրոցը և այնտեղ ուսուցանելով
անդլերեն, աստղնակարգ առարկաներ էր համարում հայերե-
նը և հայոց պատմությունը։

Իր հոգվածներում խիստ բննադատում էր անգլոֆիլ այն
մեծատուններին, որոնք խրախուսում էին անգլերեն լեզվի
մեջ առաջաժուր աշակերտներին և ոչ մի տեղ չէին տալիս
մայրենի լեզվին։ Նա այն կարծիքին էր, որ կարելի և անհրա-
ժեշտ է սովորել օտար լեզու, բայց բոլոր դեպքերում առաջ-
նայինը մնում է մայրենի լեզուն։ Թաղիաղյանը բննադատու-
թյան ուլարն ուղղում էր առաջին հերթին Մարգասիրական ճե-
մարանի ղեկավարներին, որոնք մրցանակներ էին շնորհում
այն աշակերտներին, ովքեր առաջագիմ էին միայն անգլերեն
լեզվի մեջ։

Թաղիաղյանը երեխաներին դաստիարակելու գործում
մեծ պարտականություն էր դնում ծնողների վրա։ Կան ծնող-
ներ, ասում էր նա, որոնք դիտեն ուսման հարկը և հոգ են տա-
նում իրենց երեխաների համար, բայց կան և շատերը, որոնք
չդիտեն, թե ինչ գիրք բռնեն իրենց երեխաներին ուսման տա-
լու հարցում։

Երեխայի առաջին դաստիարակը, առաջին ուսում տվողն
ու կրթողը ծնողն է, ասում էր Թաղիաղյանը։ Յուրաքանչյուր

² Մ. Թաղիաղյան, Մեթոդիկան այբբենարան, Կալկաթա, 1840, էջ 1։

տնհատ, առաջիկայիս յուրաքանչյուր ծնող, պետք է հսկ տանի իր ազգի առաջագիմության և լուսավորության համար:

Նա բննադատում էր այն ծնողներին, որոնք ներում են երկխաչի կատարած հանցանքը: Մյուս կողմից դատապարտում էր նրանց, ովքեր գիմում են ծայրահեղ միջոցներով՝ երկխաչի հետ բաղցրությամբ չեն վարվում, ամենափոքր սխալի համար բարկանում են, ծեծում, որով երկխաչի մեջ առաջ են բերում ատելություն դեպի մարդը:

Թաղիազյանը մեծ ուշադրություն էր դարձնում երկխաների բարոյական դաստիարակությանը, որով պարտավոր են դրողվել և՛ ծնողը, և՛ ուսուցիչը: Խիստ անհրաժեշտ էր համարում դաստիարակի անձնական օրինակը: Նա իր արտաքինով, իր շարժումներով պետք է օրինակ հանդիսանա երկխաչի համար:

«Ճանապարհորդություն ի Հայս» գրքում պատմում էր իր ուսուցիչների մանկավարժական մեթոդների մասին, որոնցից յուրացրել է միայն լավ կողմերը: Նրա մանկավարժական գործունեության մասին հիացմունքով են հիշում նրա աշակերտները և ժամանակակիցները:

«Երբունի ճարտարապետ Սերվերյան Հովհաննես ամիրան՝ յուր հարակից տուններին միուցն մեջ առանձին դասարան բանալով՝ դավակալը դաստիարակությունը Թաղիազյանցի կհանձնե, որ կդաստիարակեր մանկավարժական մեթոդներով:

Աշակերտաց ուշադրությունը գրավելու համար ի հարկին ձևերի շարժումներ կներ:

Արտասանությունը՝ սուր շեշտեր ուներ, ոճը՝ ընտանի և հեշտալուր էր, և համակ տղայոց դյուրըմբռնելի ընել տալու համար ուսումը՝ զվարճալի կարճ խոսքերով կհամեմեր դասախոսությունը:

Եվէ՛ ուսանողաց շարագասութեանց մեջ՝ թերություններ խոկ տեսներ, բնավ չէր սաստի, այլ համոզելով՝ կողզեր սխալը, և այսու աշակերտաց հառաջագիմության մղում կուտար:

Մեկ խոսքով, դաստիարակությունը և խոսակցությունը գրավիչ ընկելու ամեն զազանիքը գիտեր և սուր դիտողություններ չէր խնայեր»³:

Մ. Թադիադյանը գտնում էր, որ երեխան պետք է դաստիարակվի փոքր տարիքից, որ դաստիարակը պետք է կարողանա ուսումնասիրել երեխայի հոգեբանությունը, նրա անհատականությունը: Ուսուցիչը պետք է սիրի երեխային: «Ազգասերի» էջերում տպագրված են մի շարք հոգվածներ, որոնք վերաբերում են Ս. Սանգուստ գյուղացի գործունեությանը և աշակերտների առաջադիմությանը: Այդ հոգվածներում շատ է խոսվում պատժի և խրախուսանքի տարրեր ձևերի մասին: Խրախուսանքի մեթոդները նրա մոտ բազմազան են՝ լավ սովորող աշակերտին հրապարակով գովաբանել, շնորհակալություն հայտնել, նվիրատվություն և այլն:

Ուսուցիչը պետք է կարողանա նվաճել երեխայի սիրտը: Պէտք է ոչինչ չվրիպի ուսուցչի աչքից: Նա պարտավոր է ճիշտ կիրառել մանկավարժական մեթոդները, օգտագործել իր իրավունքները, թույլ չտալ, որ վատ արարքների դիմեն աշակերտները, պատժի նրանց, և ընդհակառակը, գովաբանի համեստ և լավ սովորող աշակերտներին:

«Նաև՝ եթէ վարժապետ կամ վարժապետուհին չիցէ նուաճեալ ի հաճոյս ճոխաց, և չիցէ վարձուն՝ որպէս ողորմութեան ակնկալ, այլ անկախ և ազատաբար վարեացէ ըստ կանոնի զիշխանութիւն իւր ի պատժել զխեղ և զստահակս, և ի սլաակել զհեզոսն և զուսումնասէրն, անկարելի է՝ եթէ բարեգոյն վախճանի չժամանեացի որդի քո...»⁴:

Հայ մանկավարժական մարի պատմության մեջ Թադիադյանն առաջինն է, որ մեծ նշանակություն է տվել աղջիկների կրթությանը: Նա առաջինն է ընդգծել աղջիկների կրթության իրավունքը և անհրաժեշտությունը:

Կարևոր նշանակություն տալով հայ ժողովրդի լուսավորության զարգացման գործին, նա բարձր էր գնահատում կտ-

3 Ա. Ալվազյան, Շար հայ կենսագրություն, հ. 3, 1893, էջ 201:

4 Մ. Թադիադյան, Հաս դաստիարակության օրբորդաց, էջ 47—49:

նանց դերը հասարակության պարզացման գործում: Ուստի գտնում էր, որ պետք է հայ աղջիկները ստանան աղաներին հավասար կրթություն:

Շրեանցիներին դրած նամակում, շնորհավորելով նրանց ազատագրության տոթիվ, նա առաջարկում էր նորաբաց դպրոցում ընդգրկել նաև աղջիկներին:

Հարվածն ուղղելով հետագիմ կղերին և հետամնացությանն առհասարակ և օրինակ բերելով առաջավոր Եվրոպայի կանանց, Թադիագյանը ցավ է գգում, որ հայ օրիորդը խարխափում է տգիտության մեջ:

Թադիագյանը հատուկ ուշադրություն դարձնելով աղջիկների կրթության և դաստիարակության վրա, գրել է «Ճառ դաստիարակության օրիորդաց» գիրքը, որն սկզբում առանձին հատվածներով տպագրվել է «Ազգասիրում» և ապա 1847 թ. առանձին գրքով լույս է տեսել Կալկաթայում: Այս աշխատության մեջ նա հորդորում է ծնողներին, որ ոչինչ չխնայեն իրենց աղջիկներին կրթություն տալու համար: Այն ծնողները, որոնք հեռու են պահում իրենց աղջիկներին դպրոցից, ասում էր Թադիագյանը, նրանց կամովին սպանում են չարաչար մահով:

«...Տան,— բարեկարգեալ և կառաւար տան ասել կամիմք, հոգին որ կա՝ կինն է, և այն ուսեալ և ժրագլուխն: Արդ որպէս մարմին կարոտի հոգույ զի կեցցէ, նույնպէս հոգին կարոտի գիտութեան, զի բարւոք կեցցէ: Ուրեմն որ զրկէ զգտաւրս իւր չաչափսի իմն էական և ի դերալրական ամբողջութենէ կենաց, կամովին մեռուցանէ զնա բազմապիսի շարաշար մահուամբ»⁵:

Ուստի, ավելացնում է Թադիագյանը, անուսում մարդը նման է աչն կույրին, որը ոչինչ չի տեսնում բնությունից և ոչինչ չի հասկանում կյանքից:

Բացեք դպրոցներ, նրանցում ընդգրկեցեք ձեր աղջիկներին և դուք կստանաք լավ պատուհներ: Նրանք կգառնան կյան-

⁵ Մ. Թադիագյան. Ճառ դաստիարակության օրիորդաց, էջ 11:

քի համար պիտանի մարդիկ, իրենց ամուսինների պարծանքը կլինեն, և, որ զլիսավորն է, նրանց կփրկեք ծուլությունից և անգործությունից, որն ամեն շարիքի աղբյուրն է:

Մեզ աղջիկներին հարկավոր չէ արտաքին փալլ. նրանք պետք է լինեն հոգով արի, որպեսզի տձեցնեն և զստախարակեն հայրենիքի պաշտպանության համար պատրաստ քաջ մարտիկներ: Իսկ աշգրիսի զստախարակութուն միայն զըսարոյր կտա, շարունակում է նա:

Այստեղից էլ պարզ է դառնում, թե նա ինչպիսի ծրագիր էր մշակում հայ ազգային ազատագրության բոցը բորբոքելու համար: Թաղիադչանը զեմ էր իր ժամանակ տարածված կրթության այն սխառմին, որ հայ մեծատունները ուսուցիչ էին հրավիրում տուն և ուսում ու կրթություն տալիս իրենց նրեխաներին:

Միայն ազգային դպրոցն է, որ կանոնավոր կրթություն է տալիս և հայրենիքի համար արի ու հայրենասեր սերունդ տձեցնում:

«Ասացար թէ կանոնաւոր կրթութիւն կարօտի ազգային՝ դպրոցի Քանդի դպրոց, և այն ազգայինն է միայն, որ ուսուցանէ որդւոց բոց ուստերաց և դստերաց միանգամայն՝ զբարս, զբնաւորութիւն և զսեպհական հատկութիւնս ազգիդ: Ի՞նչ որ կարէ սիրել զայն՝ զոր ոչ ետես երբէք և ոչ լուսաւ. ազգային դպրոցն է՝ որ ուսուցանէ որդւոց բոց զվճիտ պատմութիւն ազգիդ և վառէ զնոսա ի սէր հայրենեաց իւրեանց»⁶:

Ասվեց, որ Թաղիադչանի մանկավարժական գործունեության հիմնական մասը կապված է Սանդխտչան դպրոցի հետ, որ հիմնադրել էին ամուսիններ Թաղիադչանները և մեծ ջանք էին գործադրում բարեկարգ դպրոց ունենալու համար:

Չնայած իր նյութական անբարենպաստ պայմաններին, ամուսիններ Թաղիադչանների անդուլ աշխատանքի և մեծ ջանքերի շնորհիվ դպրոցը կղկ է կանոնավոր, ժամանակի պահանջները բավարարող և առաջադիմական:

⁶ Նույն տեղում, էջ 42—43:

Սանդիստյան դպրոցը Կալկաթայում գործել է մինչև 1852 թվականը, որից հետո Թաղիադյանը այն տեղափոխել է Զիշրա:

Սուրբ Սանդիստ դպրոցի պատմության համար ուշադրավ է մեր փաստաթուղթ, որը որոշ լույս է սփռում այդ դրոշմագի գործունեության վրա: Դա մանկավարժական և ծնողական միացյալ խորհրդի կողմից ընդունված կանոնադրությունն է, կամ ինչպես այն կոչվում է՝ «Կարգ և կանոնը Սուրբ Սանդիստ դպրոցի օրիորդաց և պատանեկաց բացառ յամի տեառն 1846 ի Կալկաթա» (ի տպարանի Արարատեան ընկերության ի Կալկաթա 1847 թ.):

100 կետից բաղկացած այս կանոնադրությունը ընդունվել է 1847 թվականի ապրիլի 5-ին և հունիսի 28-ին կայացած երկու ժողովներում: Այն բաղկացած է հետևյալ գլուխներից. Կանոնը դպրոցին, Վարժապետը, Դասատուը, Օրական աշակերտաց, Բնակ աշակերտաց, Կանոնը վարուց, Մնողը, Դասակարգությունը, Վարձ, Հարցաքննությունը, Ասուրը:

Դրբուշկի տոսջարանում գետեզված է Թաղիադյանի՝ ժողովում արտասանած հակիրճ ելույթը աշխարհաբար լեզվով: Այնտեղ նա, կտրեսր տեղ տալով ուսման և կրթության գործին, շեշտում է հասկապես հալոց լեզվի անհրաժեշտությունը հնգկահալ պատանիների և աղջիկների համար:

Դրբուշկի «Կանոնը դպրոցին» գլխի մի բանի կետերից պարզ երևում է, որ դպրոցը եղել է կազմակերպված և չէր գործել տեր-թագիկյան մեթոդով: Դասերն սկսվել են առավոտյան ժամը 9-ին և ավարտվել ժամը 2-ին: Ժամը 12-ին ունեցել են երկար ընդմիջում, որի ընթացքում երեխաները նախաճաշել են:

Դպրոցն ունեցել է առանձին մաշր մատյան, որտեղ նըշվել են աշակերտների ընդունելության մասին, և ընթացիկ մատյան, որտեղ հաշվառման են ենթարկվել աշակերտների հաճախումները:

«Պատճի ի դպրոցին յիշատակագրութիւն վասն երթեկի աշակերտացն, յորում նշանակին անուն, հասակ և թիւ մտից և ելից նոցա» (կետ 3):

«Պատճեսցի ընդհանրական ցուցակ մի օրական աններկայութեանց աշակերտացն ի դպրոցին՝ խորանագիծ ձեով, յորում յիշատակեսցի անուն և օրաթիւ աններկայացեալ աշակերտացն» (կետ 4):

Ս. Սանգուխտ դպրոցն ունեցել է ուսուցիչներ և դաստիարակներ: Ըստ որում ուսուցիչները համարվել են վարժապետներ և դաստիարակները՝ դասատուք: Այդ երևում է գրքերուցի ճամադատասխան պոխներից:

«Վարժապետք» գլխում նշված է ուսուցիչների պարտականութիւնների մասին: Յուրաքանչյուր ուսուցիչ պարտավոր էր առաւօտյան դասից առաջ ներկայանալ դպրոց և իր աշակերտների հետ միասին մտնել դասարան: Մ. Թաղիադջանը հիշվում է որպէս «առաջին վարժապետ երկուց լեզուաց և թարգմանութեանց, թէ մանկանց և թէ օրիորդաց»:

Առաջին վարժապետի պարտականութիւնն էր շաբաթը երկու փամ երեք անգամ ընդհանուր ստուգման ենթարկել աշակերտների վարքը և առաջագիմութիւնը:

«Առաջին վարժապետին պարտ է՝ բաց յընդհանրական վերահասութեանց վարուց և ուսմանց աշակերտացն, զէթ երկից կամ երիցս յիւրաքանչիւր հօթնեկի անձամբ վերահասու լինել բոլոր դասուց աշակերտացն եղելոց ընդ կառավարութեամբ դասատուացն՝ առ ի դիտել զպարտադատ յառաջագիմութեան ուսմանց նոցին, և թէ արդեօք վարեա՞լ իցեն քստ կանոնաց դաստիարակութեանց՝ սահմանելով յորմէ առ ամբառնալոյ զնոսա ի վերագոյն դասս, թէ ոչ» (կետ 13):

Ուսուցիչը պետք է օրինակելի լինի աշակերտի համար. «Պարեկեալ լիցի բերան վարժապետաց և վարժապետահաջ» (կետ 14):

«Գասատուք» գլխում նշված է մի քանի կետ դաստիարակի պարտականութիւնների մասին: Գաստիարակը պարտավոր էր հոգ տանել աշակերտների առաջագիմութեան, վար-

րի և կարգադատ հովան մասին: Ընդմիջումներին նա անպայման պետք է աշակերտների մոտ լինելու Դաստիարակի կամ ինչպես նշված է «Դասատուր կամ երկրորդական վարժապետ»-ում ընտրությունը կատարվում էր առաջին վարժապետի կողմից: Դաստիարակը պետք է ներկայացնէր փաստաթուղթ կրթության և վարքի մասին:

«Դասատուր կամ երկրորդական վարժապետը նույնպես պարտին ունիլ զվարս բարիս և զգիտութիւն բաւականս պաշտամանց իւրեանց վկայականօք: Ընտրութիւն սոցա կախի զառաջին վարժապետէ զպրոցիս, որ ընտրեսցէ զընտիրն ուսմամբ՝ և վարսք աստրինականօք» (կես 15):

«Սրական աշակերտաց», «Բնակ աշակերտաց» և «Մնողը» զլուսներում նշվում է ընդունվող աշակերտների տարիքի, երթևեկ և գիշերօթիկության կարգի, աշակերտների և ծնողների պարտականությունների մասին:

Երեխաները զպրոց են ընդունվում 4 տարեկան և բարձր հասակից:

Յուրաքանչյուր ծնող, ասված է կանոնադրության մեջ, պարտավոր է հոգ տանել իր երեխայի զպրոց ներկայանալու համար: Ճիշտ հիվանդության կամ այլ հարգելի պատճառներով երեխան բացակայել է զպրոցից, ծնողը պարտավոր է բանավոր կամ գրավոր բացատրություն ներկայացնել: Իսկ այն ծնողները, որոնք իրենց երեխային կհանեն զպրոցից, պարտավոր են նույնպես գրավոր բացատրագիր ներկայացնել: Շեշտվում է հատկապես, որ այս կետերը պարտագիր են բոլորի համար: Ովքեր չեն ենթարկվի, թող իրենց երեխային չբերեն զպրոց:

Յուրաքանչյուր աշակերտից պահանջվում է լինել զուսպ, պարկեշտ և մաքուր: Այստեղ խոսվում է նաև ուսման վարձի, իսկ գիշերօթիկների համար նաև գիշերելու վարձի մասին: Ընդ որում աղջիկները ընտկվում են վերեի, իսկ աղաները՝ ներքևի հարկում: Յուրաքանչյուր երեք աղջկա, ասվում է կանոնադրության մեջ, մեկ աղախին է լինելու, իսկ ովքեր հնարավորություն ունեն, կարող են իրենց հատուկ աղախինը ու-

նենալ, պայմանով, որ նրա նկատմամբ բացարձակ հրամայողի գերում հանդես չգան, որովհետեւ զաւանդամատեղելի է դպրոցում իրենց ստացած դաստիարակութեան հետ:

Սնուցները պետք է հետեւեն դպրոցական դաստիարակութեանը և հակառակ դաստիարակչական մեթոդներ չկիրառեն:

«Մնողը կամ պաշտպանը պիտին ի տան իւրեանց հետեւել կերպի դաստիարակութեան դպրոցին, զի մի աշխատակութիւն ծնանիցի ի միտս աշակերտին» (կետ 62):

«Պիտի իւրեանք ձեռնամուխ չլինիցին ի կերպն դաստիարակութեան նոցա, զի մի գուցէ փոխանակ շինելոյ՝ խանդարեացեն զկարգն» (կետ 63):

Ուշադրով է «Կանոնք վարուց» գլուխը, որտեղ խոսվում է երեխաների վարքի մասին: Թվարկվում են հետեւյալ կետերը.

Դպրոցից տուն վերադառնալիս փողոցում չխոնովել, փոքրերին տանել աղախնի հսկողութեամբ, բնկերն բնկերոջը չըզբրայարախ, տան կամ փողոցի խոսակցութեանը դպրոց չբերել և ոչ էլ դպրոցի խոսակցութեանը տուն տանել, վարդեր և թանկագին իրեր չկրել, դպրոց զաւ մաքուր, լվացված, սանրւված և տաքացուի:

«Դասակարգութիւնք» գլխի մի քանի կետերից երկուսն է, որ դպրոցն ունեցել է առանձին դասարաններ և ուսուցումն ընթացել է շատ կանոնավոր:

«Նախ աշակերտը ամենաւն բաժանեցին ի դասս դասս՝ ուրույն ուրույն, սկսեալ ի միոյ մինչև որբան և տէր յաւելցէ, ի մէջ վարժապետին և դասատուացն՝ ըստ պատշաճականութեանցն» (կետ 64):

Այնուհետև շեշտվում է, թե ինչ հաջորդականութեամբ պետք է ընթանա առարկաների դասավանդումը: Ուշադրով է դասի ընթացքի մասին եղած կետը: Ուսուցիչը չպետք է դասը փախի, եթե աշակերտները շեն յուրացրել այն, ամեն օր պետք է ստուգվի աշակերտների գրավոր աշխատանքները, ամեն օր լինելու է թվաբանութեան դաս, նոր դասը անպաշտան պետք է կապվի անցած դասի հետ:

«Ամենայն դատ ատանց հասկացուցանելոյ մի անցցէ» (կեա 71):

«Ամենայն օր զգիրս աշակերտաց տեսցեն, և նշանակեսցեն զօրն» (կեա 72):

«Թուարանութիւն ատօրին լիցի և ատանց տեսանելոյ, որոշելոյ և ձեռագրելոյ մի անցէ» (կեա 73):

«Սրական հարցմունք զանցեալ բնթերցուածոց՝ անխափան լիցին» (կեա 74):

Այստեղ նշվում են դասավանդվող հետեւյալ առարկաները. հայերեն, անգլերեն, տառագիտութիւն, հեղել, բառագիտութիւն, ստուգարանութիւն, իմարանութիւն, առաջնորդ մանկանց, բարոյականք Չեստըֆիլդա, Մեսրոպյան շարագրիչ, աշխարհագրութիւն, աստղագիտութիւն, բերականութիւն, ճարտասանութիւն, տրամաբանութիւն, տարրալուծութիւն, պատմութիւն հայոց, պատմութիւն սուրբ գրոց, հրահանգ բրիտանական վարդապետութեան, թարգմանութիւն հայերենից անգլերեն և անգլերենից հայերեն, երաժշտութիւն, կար, ձև և ձևակերպութիւն:

Նւսուցումը տարվել է մեկ օր հայերեն և մեկ օր անգլերեն: Փրաքար բառերը բացատրվել են աշխարհաբար, որպէսզի հասկանալի լինի աշակերտներին, սակայն դժվարանում ենք ասել՝ զաստիճանումը կատարվել է պարբեր, թե՞ աշխարհաբար. Հետեւյալ կետը թեև որոշ չափով պարզաբանում է, բայց դարձյալ մութ է և դժվար է կողմնորոշվել:

«Յետ բաւականին հասկանալոյ զգրաբարն, տալ զքերականութիւնն. նախ՝ զհոլովել բառից, և ապա զմեկնութիւն նոյն բառիցն սամիօրէն. բնգումին և խելամտեցուցանել զնոսա ի մեկնութիւնս և ի պարագայս հոլովոցն, յետ հասանելոյ ի խոնարհումս բայից՝ նոյնպէս մեկնել նոցա զփոփոխութիւնս ժամանակաց, եղանակաց, լծորդութեանց և այլոց պարագայից նոցին ի ձև հարցմանց և պատասխանեաց: Իսկ հնախադրութիւնս զշաղկապ, զմակբայ՝ և զմիջարկութիւն որչափեամբ օրինակաց» (կեա 69):

Ս. Սանդուխտ դպրոցում կիրառվել են խրախուսանքի և պատժի միջոցներ: Ըստ որում պատժը եղել է համոզման, աշակերտների առաջ պարսալանքի, անային լրացուցիչ հանձնարարությունների միջոցով: Ծայրագույն պատժը եղել է դպրոցից հեռացնելը: Կանոնադրության «Պատժը» գլխում, ուր հիշվում են պատժի ձևերը, չի նշվում ոչ մի մարմնական պատժ: Նշանակում է այն չի կիրառվել դպրոցում:

«Ամենայն աշակերտ ի կալն հակառակ կարգաց, կամ ի վարիլն անպարկեշտ՝ նախ խրատի բանիւր, բազմապիսի օրինակօք և ջանիւր, այլ ի յամառիլ աշակերտին ի նախնի մուլտիբինս իւր՝ և յոչ գալն յուղղութիւն՝ մերժէ ի դպրոցէս, առ ի շտալ զօրինակ մուար վարուց աշակերտակցաց իւրոց, և դվատահամբաւութիւն դպրոցիս» (կետ 82):

Պատժը տրվում էր քստ հանցանքի չափի: Այսպես. ով այդ օրը դասի չի եկել, պետք է տվյալ դասը անդիր սովորի: Ով մի անգամ սուտ է խոսում, այլևս նրան չհալատաւ: Ով քնկերոջը բամբասում կամ գրպարտում է, գրկվում է քնկերակցութունից:

Ս. Սանդուխտ դպրոցի աշակերտները քննություն են հանձնել տարին մեկ անգամ՝ հունվարի 15-ին: Բայց եղել է նաև բառորդային հարցաքննություն՝ ապրիլ, հուլիս և հոկտեմբեր ամիսներին:

Ուշագրավ է մեկ օրվա ուժիմը.

«Հեղել, թէ հայերէն և թէ անգղիերէն, օրական մեկ տուն հեղելով կարգալ, նշանակութիւնը հասկանալ, դիր գրել, միրգ ուտել, քաղուկ առնել, համար կամ թվաբանութիւն սովորել, օրական հարցմունք թէ հայերէն և թէ անգղիերէն» (կետ 100):

**ժողովրդական բանաշարային
ԱՇՈՒՂԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԸ Մ. ԹԱԳԻԱԴՅԱՆԻ
ԳԵՍԱՆՈՒԹՅԱՄԲ**

Հայ ժողովրդական ստեղծագործությունը միշտ հանդիսացել է մեր գեղարվեստական գրականությանը նյութ մատակարարող աղբյուրներից մեկը:

XIX դարի առաջին կեսին (30—40-ական թթ.) ժողովրդի էսթետիկական նոր բմբուսումների և գրական ճաշակի զարգացման ու հասարակական նոր հարաբերությունների հիման վրա մեծ հետադարձություն առաջացավ ժողովրդական, ինչպես նաև աշուղական ստեղծագործության նկատմամբ: Սկսեցին հավաքել, գրի առնել, հրատարակել այդ ստեղծագործությունները:

Այդ ազգանվեր աշխատանքում պիտներենր հանդիսացան Խ. Աբովյանը, Դ. Ալիշանը, Մ. Թադիսագյանը և ուրիշներ: Իսկ ավելի ուշ, 1852 թվականին՝ բժիշկ-բանասեր Գ. Ախվերդյանը հրատարակեց մեծանուն երգիչ-գուսան Սալախ-նովաչի երգերը:

Ժողովրդական ստեղծագործության հավաքման և մշակման մեջ, իհարկե, մենք հավասարության նշան չենք գնում Աբովյանի և Թադիսագյանի միջև: Աբովյանն ավելի լայն ընդգրկում ուներ և բազմակողմանի մոտեցում ժողովրդական ստեղծագործությանը: Նա ավել է այդ ժանրի մշակման բարձրարվեստ նմուշներ: Բայց այդ գործում Մ. Թադիսագյանը նույնպես ունի իր համեստ զերը:

«Թադիսագյանը ժողովրդական բանահյուսությանը մոտենում է որպես բանասեր և հրապարակախոս: Տպագրության

համար ընտրելով որոշ երգեր, աշխատում էր ասել իր սեփական խոսքը, արտահայտել իր մտորումները: «Աղյուսների» ընթերցողները տեսնում էին, որ տպագրելով Արզունի տխուր բանաստեղծությունը («Ղարիր տեղ նաչաղ եմ, հալս փերիշան») Թաղիադյանը կոչ էր անում ընթերցողներին՝ լսել ամենից առաջ ժողովրդի ձայնը: Պոեզիան «Աղյուսների» խրմբագրի համար ոչ միայն արվեստ էր, այլև՝ ավելի մեծ շափով բարի և իմաստուն խոսքի քարոզ»¹:

Մ. Թաղիադյանի կենսագրությունից հայտնի է, որ նա հնարավորություն է ունեցել մոտիկից ծանոթանալու ժողովրդի համով-հոտով զրույցներին, ատաղձածքներին, հերիաթներին: Էջմիածնական տարիներին, տակավին 14—15-ամյա Մեսրոպը, որպես փոքրավոր, նվիրակների հետ շրջել է հայկական դավառները: Այդ տարիներին ժողովրդի հետ ունեցած շփման մասին հետագայում շարադրել է «Ճանապարհորդություն ի Հայս» գրքում: Իր ստեղծագործություններում նա բազմաթիվ օրինակներ է բերում հայ բարբառներից ու ժողովրդական ստեղծագործությունից:

Աստանդական կյանքը Մ. Թաղիադյանին Հայաստանից նետել է նոր Ջուղա, Կալկաթա, Թավրիզ, Պոլիս և այլուր:

Մ. Թաղիադյանի ողջ ստեղծագործությունը համեմված է ժողովրդական խորիմաստ, ուրախ, երգիծական, երբեմն էլ թախիծ ու տրամուլյուն արտահայտող խոսքերով:

Իր շրջագայությունների, ուսումնառության և գործունեության ընթացքում Թաղիադյանը ոչ միայն հետաքրքրվել և զբաղվել է ժամանակաշրջանի կյանքով, այլև ժողովրդի անցյալով: Ուշագրություն արժանի է, որ հենց նույն «Ճանապարհորդություն ի Հայս» գրքում նա բազմաթիվ անդամներ խոսել է հայ անցյալի մասին: Այսպես՝ Հայկի և Բելի, Արամի, Արաչի, Արտավազի, Խորենացու, Նղիշի, Փյոթ-օղլու, պատմա-աշխարհագրական տեղանունների, Գողթան երգերի, աշուղներ Բեշիշ-օղլու, Ալլահվերդու և ուրիշների մասին:

¹ Ա. Կալինյան. Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. 1, 1956, էջ 311:

Մ. Թաղիադյանը մեծ նշանակություն էր տալիս ոչ միայն հայ առասպելներին, գրույցներին, ժողովրդական և աշուղական երգերին, այլև մյուս ժողովուրդների առասպելներին: Իրանական ժողովուրդների հին պատմությունն ուսումնասիրելու համար, ասում է Թաղիադյանը, կարևոր են նրանց առասպելները, որոնք թեև շատ հաճախ չափազանցված են, ոչ իրական և լիերի, բայց որոշ նյութ են տալիս հին պատմությանն: ուսումնասիրելու համար:

«Եթե կամք իցեն քեզ զազգի ուրուք զպատմութիւն ի միտ առնուլ. ոչ է պարտ պառասպելօրն զանց առնել, յորս թողին ստուգութիւնք հին աւուրց»²:

1880 թ. Կովկասում՝ անգլիական եպիսկոպոսական հեմարանի տպարանում, լույս է տեսնում Մ. Թաղիադյանի «Գիցարանութիւն» առաջին գիտական աշխատությունը, որ երիտասարդ գիտնականը, ուսումնասիրելով համաշխարհային և հայ պատմությունը և հանդես բերելով պատմաքննական մոտեցում, գտնում է, որ հին աշխարհին վերաբերող բազմաթիվ հարցեր կարելի է մեկնել գիցարանության, ժողովուրդների առասպելների օգնությամբ: Թաղիադյանը բարձրը գնահատելով եվրոպացի գիտնականների ջանքերը՝ ժողովրդական բանահյուսության միջոցով, պատմության կրնճառա հարցերի մեկնաբանման դործում ցավ ի սիրտ հայտարարում էր, որ տակավին հայերը ձեռնամուխ չեն եղել առասպելների քննությանը, որի պատճառով շատ է տուժում հայագիտությունը:

Մ. Թաղիադյանը բացատրում և քննում էր գիցապաշտության և առասպելների առաջացման պատճառներն ընդհանրապես և ապա մասնավորեցնելով իր խոսքը հայկական առասպելների վերաբերյալ աշխատում էր պարզել նրանց հետ առնչվող որոշ հարցեր: Ըստ Թաղիադյանի «Գիցարանութիւն հանուր»՝ նշանակէլ գրացատրութիւն ունիցէլ առասպելեալ ա-

2 Մ. Թաղիադյան, Պատմություն պարսից, էջ 1:

ւանդութեանց, իսկ մասնավոր պատմութիւն դից ե գիցա-
վանց»³:

Թաղիաղյանը հիմնականում դիտականորեն էր շուծում
դիցապաշտութեան և առասպելների ստաջացման հարցը՝ աշն
կապելով բնութեան ուժերի զեմ մարդու անգործութեան հետ:

«Նախ՝ բնական և ընդարձակ՝ ցանկութիւն, որ առ ի շղոյշ,
ճշմարիտ աստուածապաշտութեան՝ մղեաց զնոսա արարա-
ծապաշտս լինել: Երկրորդ՝ խորամանկութիւն բրմաց և օրէնս-
դրաց, կեղծիք Քերթողաց և անհնարին աղիտութիւն առաջին
ժողովրդեան: Աստուած պակալ կրեալուց պարծան իշխանի
խրեանց՝ Արամաղղ Ողիմպոսի համարեցան զնոս և զՄինոս
զօրինաղիր իւրեանց որդիացուցին նմա: Երրորդ՝ պարմանք
ընդ զեղ լուսաւորացն երկնից, բնդ շրջան մոլորակաց, և չափ-
մունս ամաց: Յորտա պրեթէ մեծ մասն եղիպտական և յոյն
դիցամոլութեան ծագեաց, սաբէական պաշտօն յԱրարիս,
խորհուրդ Միթրա առ Պարս և Հայս, բնապաշտութիւն ազ-
գաց, և շուշն աշն ժամանակադրութիւն Քենաց և Հնդկաց, որ
բիւր բիւրաւոր ամօք յառաջ տանի վարարչութիւն քան զոր է:
Չորրորդ՝ անսանձ ցանկութիւն մարդկան առ անմահութիւն,
որո հրապուրեցան յանդրիս պարծանաց մշտնջենաւորել, յի-
շատակա իւրեանց և զմահացուն յանմահութեան վերադրեալ,
աստուածական վերնառութեամբ դրուատեցին»⁴:

Խոսելով կապաշտութեան մասին, Մ. Թաղիաղյանը ցու-
ցաբերում է լավատեղեկութեան հասկապեա հին շրջանի
պատմութեան և առասպելների աստարեկում, որոնք տարած-
ված էին տարբեր ժողովուրդների մէջ:

Մ. Թաղիաղյանը «Դիցաբանութեան» գրքում հասկապեա
կանգ առնելով հայկական առասպելների վրա և բնեկով նը-
րանց ստաջացման պատճառները, ասել է միանգամայն ճիշտ
և բնգունելի մեկնաբանութեան: Հայկական առասպելների բա-
ցատրման համար ոչ միայն հենվում է V դարի մեր պատմիչ-

3 Մ. Թաղիաղյան, Դիցաբանութեան, Կաթիաթա, 1830, էջ 2:

4 Նույն տեղում, էջ 1:

ների համակարգի Մովսէս Խորենացու հաղորդած տվյալների, ալի հունական աղբյուրների և հայկական ավանդությունների վրա:

Խոսելով Մովսէս Խորենացու դրի առած «Վահագնի ծընունդը» առասպելի մասին, Մ. Թաղիադյանը երկնքի ու երկրի երկունքը բացատրում էր որպէս ահեղ պատերազմի նշան: Կարծիք հղեղը պատերազմի փուլն է, իսկ ծուխ և բոցը պատերազմի խրախույս: Եթէ բոցի միջով պատանի էր վազում, ապա դա նշանակում էր մարդկանց արիւթթյուն և քաջություն էր ներշնչվում: Արիւթթյունը բորբոքվում էր հրով և հուրը նշան է անպարտելի դորոթթյան: Աշքերի արեգակ լինելը, ասում է Թաղիադյանը, իսկապէս նշան էր հուսալի հաղթութեան⁵:

Յուրովի է բացատրում Արա Գեղեցիկի առասպելի հետ կապված հարցը: Նրա կարծիքով Արան առաջածածին է. «Այս է, դի իմաստութիւն քննէ զխոյս աստուծոյ և լիզելով յատուցանել զնա դից՝ ակնարկէ աստուածածին իմն զալ քան թէ մարդածին»:

Թաղիադյանը Արային համարում էր Միթրոսը, Ապոլոնը կամ հայերի արեւը, որովհետեւ, ասում էր նա, արեւից գեղեցիկ ոչինչ չկա, երկրորդ, արեւը ամեն օր մայր է մանում և կրկին ծագում, և երրորդ, արեւը լույսով բացում է խաւարի գրկում թաղված բոլոր զաղանիքները և իր ճերմութեամբ կյանք է տալիս մարմնին⁶:

Մ. Թաղիադյանի «Գիցաբանությունը» հայ բանասիրութեան մեջ առաջին լուրջ և դիտական ուսումնասիրութեանն էր, որ քննում էր առասպելների առաջացման խնդիրը և կարեւոր նշանակութեան տալիս դրանց:

Ուշագրավ են Թաղիադյանի դրի առած մի շարք երգերը, առաջվածքները, գրույցները, առակները, հանելուկները:

Ժողովրդական ստեղծագործութեան շատ գեղեցիկ և ուշագրավ նմուշ է «Նանասարհորդութեան ի Հայս» գրքում

⁵ Տէ՛ս նույն տեղում, էջ 7:

⁶ Տէ՛ս նույն տեղում, էջ 11:

մեջ բերված մի հատված Թիֆլիսի հայ ժողովրդական քրդերից: Կենսախինդ, ուրախ, կյանքով լի մի երգ է, որտեղ գովերգվում է գինին:

Ուլ էիր և տիկ դարձար
Տկահան շարշարվեցար.
Հավլաբարի դարիդուսին
Տվինք մշակի ուսին:
Ով, ով սուրբ տկճոր
Լուլեդ բաց մեզ ողորմաց⁷:

«Ճանապարհորդություն ի Հայս» գրքում խոսելով Աշտարակի, Օշականի մասին, ասի՛վը չի փախցրել արտահայտվելու ժողովրդի դառը կյանքի մասին: Ժողովուրդը ծանր մամանակներ է ապրել օտար բռնակալների ձեռքին: Եղել են մարդիկ, որոնք ըմբոստացել են նրանց դեմ: Ժողովուրդը երգեր է հորինել ըմբոստացող մարդկանց մասին: Ահա դրանցից մեկը, որ մեջ է բերել Թաղիադյանը: Այստեղ արտահայտվում է այն միտքը, որ թշնամին ձերբակալել է Վարդիկ անունով մեկին և ստիպել, որ հայտնի իր բնկերների տեղը, սակայն նա հանձն է ասել շարշարանքը, խոշտանգումը և չի դադարեցնում նրանց:

Օշականա մարդիկ,
Անունս է Վարդիկ
Ինձ տեսիք
Ձեզ լացիք
Ուր որ կեր՝ ամուր կացեք⁸:

Մի այլ տեղ, ցույց տալու համար Կարբիի ձոխ ու փարթում կյանքը, մեջ է բերել ժողովրդական այս երգը:

⁷ Այս երգը երկար ժամանակ գիտվել է որպես Թաղիադյանի ստեղծագործություն:

⁸ «Ճանապարհորդություն ի Հայս», էջ 199:

Դուքան բազար է Կարբի
Գինի խմողը հարբի՞ն:

Հայ նոր գրականությունն էսփեռիկական սկզբունքները
հիմքում դնելով ժողովրդացությունն զազափարը, Բաղիադ-
յանը իր կարողությունն սահմաններում հավաքում է ժողովրդ-
դական բանարվեստի տարրեր ժանրերի նմուշներ:

Մ. Բաղիադյանը, ևս Արությունի նման, ոչ միայն գրի է
տռել, այլև մշակել է ժողովրդական երգեր: Եվ «Ճանապարհ-
հորդություն ի Հայաստան» գրքում աեղ-աեղ մեջ է բերում աչգ եր-
գերից նմուշներ, ապա «Մոս և Սոնդիպի» պոեմում հանդես
է բերել ժողովրդական ասույթների գեղեցիկ մշակումը: Պոե-
մը, որ գրված է ավելի վերամբարձ ոճով, քան Բաղիադյանի
մյուս գործերը, համեմատվում է ժողովրդական գեղեցիկ խոսքե-
րով, արտահայտություններով, սրունց մշակումը կատարել է
ինքը:

Այսպես՝

Արաբիս շանթա՛հա
Երկաթ ի բովույց,
Մուխ ի սառուցեալ
Աւազան ջրբույ՛ն:

Էրիկական շատ նուրբ շունչ է ավել աչս հատվածում.

Մին՝ աչապիս խունջիկ
Մին՝ աչնապիս մնջիկ
Մին նազ նազելով՝
Դործ առնէ հերիք՛ն:

Ժողովրդական խորիմաստ արտահայտություն է.

Ո՞ր շաղկալ ընդ մար
Եւ կաշցի մարտը,

⁹ «Ճանապարհորդություն ի Հայաստան», էջ 221:

¹⁰ Մ. Բաղիադյան, Մոս և Սոնդիպի, էջ 11:

¹¹ Նույն տեղում, էջ 16:

Փորձ գտակին յաշանէ
Ընկերս զընկեր իւր¹²:

Եվ կամ՝

Բայց զի՞նչ խեղին ճառ
Կամ սեղին օճառ¹³:

«Ճանապարհորդութիւն ի Պարս» գրքում մենք հանգիստում ենք պարսկական ժողովրդական երգերի, գրույցների, հանգիւսկների, դարձվածքների և գեղեցիկ ու սրամիտ արտահայտութիւններին: Այսպէս՝ պարսիկ կանանց լաջն զգեստներին համար ասված է.

Հինգ պարակ զանաւուպիս
Ոչ բաւցին բեզ ի վարտիս¹⁴:

Կամ մի այլ արտահայտութիւն պարսկերեն, որ մեջ է բերել հայերեն տասերով.

Շարվար բին զոշադի
Գիգար բանդան նեմիխաղ¹⁵:

Այսպիսի լաջն տափառը
Բացելու (հանելու) կարիք չունի):

Մ. Թաղիադյանը «Ազգասեր»-ի էջերում և գեղարվեստական գործերում ու «Պատմութիւն հին Հնդկաստանի» գրքում խոսել է նաեւ հնդկական ժողովրդական ստեղծագործութիւն մասին:

Ուշագրաւ է հնդկական ժողովրդական հեռեկալ գեղեցիկ ասացվածքը, որ մեջ է բերել հնդկերեն և ապա տվել նրա թարգմանութիւնը.

¹² Նույն տեղում, էջ 84:

¹³ Նույն տեղում, էջ 99:

¹⁴ Մ. Թաղիադյան. Ճանապարհորդութիւն ի Պարս, էջ 58:

¹⁵ Նույն տեղում:

Անդէր նազրի՝ Բէրուջ ուռաւ.
Տրկի սէր բհաջա, տրկի սէր քաջա:

Թարգմանութեանը.

Միին քաղաք՝ արքա հիմար
Ուր մին գին է խոտ և շաքար:

Նշված հարցերի հիման վրա էլ պետք է նկատել, թե Թաղիազյանը որքան մեծ տեղ է հատկացրել ժողովրդական ստեղծագործութեանը: Տարբեր ժողովուրդների բանավեճատին սիրով մոտենալը մի «կամուրջ» է բարեկամական կապերի ամրապնդման, որի համար մեծ ջանք էին թափում լուսավորիչները:

Թաղմաթիվ են Մ. Թաղիազյանի օգտագործած ժողովրդական տառիչքները և դրանց զեղարվեստական մշակումը: Նա «Ազգասերի» և «Ազգասեր Արարատյանի» էջերում պատկերել է զեղարվեստորեն մշակված աչք ասացվածքները:

Հույսով վատ մարդու, խաբեբայի վրա շղնես ժողովրդական ասացվածքը նա մշակել է.

Մի քնդ կամուրջ վառին պնար,
Թէ գլիցէ պեա րպեղ,
Մի ապաստան յաղուէսն կար,
Թէ յօշիցէ առիւծ քեզ¹⁶:

Մտկին հիմարին մարդ է պարձնում ասացվածքը պարձել է.

Գարին պէշն ասնէ էշ Եգիպտական
Իսկ դրամ րզմարդ՝ աչք եղեմական¹⁷:

Հիմարների ձեռքը շտալ իշխանութեան

Զեղջիւրս եպին թէ էշն ունէր
Զաշխարհ համայն նոքօք ջնջէր¹⁸:

16 «Ազգասեր Արարատյան», 1852, № 84, էջ 672:

17 Նույն տեղում, էջ 688:

18 Նույն տեղում:

Անժամանակ եկած չյուրի ծախսը իր հաշիվին է.

Հիւր անժամանակ՝ յուրմէ քսակէ¹⁹:

Մ. Թաղիադջանը մեծ ուշադրութիւն է դարձրել նաեւ աշուղական-գուսանական երգին ու երաժշտութիւնը: Նա ժողովրդական պոեզիայի ուրույն մասն է համարել աշուղական արվեստը և բարձր գնահատել հատկապէս այն աշուղներին, որոնք իրենց երգերով հայրենի երկրի սերն են երգել:

Մ. Թաղիադջանը շնայած մանկութիւնն ու պատանեկութիւնն անց էր կացրել էջմիածնի կրօնականների շրջապատում, բայց տակաւին այդ շրջանում առիթ էր ունեցել շրջիվել ժողովրդի հետ, մասնակցել նրա հանդեսներին և հենց այդտեղ էլ, անշուշտ, լսել էր հայ աշուղների երգերը և զմայլվել նրանցով: Նոր Պուղասում ուսումնասիրել է պարսկահայ աշուղների կյանքը և ստեղծագործութիւնները ու հետագայում «Աղլասեր» պարբերականում տպագրել առանձին համալածներ նրանց ստեղծագործութիւններից:

Տարբեր առիթներով խոսելով հայ աշուղների մասին, նա առանձին գովեստով է արտահայտվել և զրվատել աշուղներ Քեշիշ-օղլուն, Ալլահվերդուն և ուրիշներին:

«Մեր ազգի բերթողութեան,— գրում է Թաղիադջանը,— այսինքն բանաստեղծական կարողութեան վերա փոքր ի շատե տեղեկութիւն սիրողանին պիտի մեր զրախտի նման Հայաստան գոնէ մի անգամ պըտըտած լինին: Թե որ ներկա ևս նստեմ ու մեր հայրենիաց բոլոր շարժողական առիթներն մեջ բերել ուզենամ, պիտի համարձակվիմ և տվետարանիչիցն յուր գրած չափազանցութեան ձեն փոխ առնում:

Շատ է որ խորենացին յուր սրանչլի պատմութիւնն աղլային ամենաճշմարիտ բերթողութեամբ՝ ոչ միայն դարդարել, այլ լուսավորել ևս: Մեր հարգելի վենետիկցիք ևս, այս տեսակ աղլային բերթվածոց վերա ընտրութեամբ ան խոսել շատ տեղ յուրջանց օրագրութեանց միջում («Բաղմավէպի» է-

¹⁹ Նույն տեղում, էջ 155:

ջերում 1843 թվականից Ղ. Ալիշանը սկսում է տպագրել ժողովրդական և աշուղական երգեր— Ջ. Մ.): Մեզ վիճակ ա հասել նոր Ջուղա և որսկա հարց գրավորական աշխատությունն ըստ կարի, նույնպես և նորա անմահ բերթողաց ոսկեղեն պատգամանին՝ պիտի պարզելով գնանք, բերթողաց անվանքն են. էղազ, Արզունի, Բաղեր-օղլի, Վանվան, Ամիր-օղլի, Ղուլ Հովհաննես և այլք: Որոց ասացվածոց՝ որ մնից ինչ որ գտանք և հաւմաւ տեսանք (ընդգծումը մերն է— Ջ. Մ.) կտպենք: Բայց նախ մեր ընթերցողաց մատարությունն աղաչում անք ներկա առ բերթող Արզունիս բարեպաշտոն և պարկեշտագույն մեզ աչն, որ տվել ա»²⁰:

Այս բացատրությունից հետո տպագրել է Արզունու մի երգը, որի մեջ որոշակիորեն արտահայտված է նրա սոցիալական բողոքը: Արզունու «Ղարիր տեղ նաշաղ հմ» երգում երգիչ-գուսանը նկարագրել է հայրենիքից և հարապատենիքից հեռու, օտարություն մեջ հիվանդ պառկած և անօգնական իր վիճակը:

XVIII դարի վերջի և XIX դարի սկզբի հայ պոեզիայում առավել զրված են ազգային ազատագրության, ժողովրդի լուսավորության և այլ կարևոր հարցեր, բայց բուն սոցիալական հարցերը թիչ են տեղ գտել կամ համարյա չկան: Մինչդեռ աշուղական պոեզիան այս հարցի պատասխանը տալիս է: Այդ իսկ տեսակետից էլ առանձին նշանակություն ունի աշուղական պոեզիայից Մ. Թադիսյանի օգտագործած այն նմուշները, որոնց մեջ շեշտը դրվում է սոցիալական կողմի վրա:

«Ղարիր տեղ նաշաղ հմ» երգի մասին Թադիսյանը գրել է. «Ո՞վ կարող ա տոանց արտասովաց կարգալ հետադաշտ ազգու բերթվածս, մանավանդ՝ որ օտարության աջ ու ձախ պատահարաց փորձասու եղել իցե»²¹:

«Ազգասերի» մի այլ համարում նա կրկին խոսել է հայ անվանի աշուղների Քեչիշ-օղլու և Ալլահվերդու տաղանդի մասին և գրվաթել նրանց երգերը. «Հռչակաւոր եղեն զայսու ժա-

²⁰ «Ազգասեր», 1845, № 19, էջ 151:

²¹ «Ազգասեր», 1846, № 21, էջ 7:

մանակաւ նաեւ Քեշիշ-օղլի և Ալլահօլէրդի, աշխինքն Աստուածատուր, քերթողքն Հալուց, երկսքին և աշուր կոչուք, ալլ մտօք լուսատուր արեգակունք եղծովեան և ստեղծովեան միանգամայն»²²,

«Ազգասեր» հանդեսում նա տպագրել է պարսկահայ աշուղ Ղուլ Հովհաննէսի «Ուռ և սշխար» ղեղեցիկ երգը:

Առակի ժանրը նույնպէս հմայել և հետաքրքրել է Մ. Թաղիադջանին: Նրա ստեղծագործութիւններից երևում է, որ ծանոթ է եղել հայ միջնադարյան անվանի առակագիրների՝ Մխիթար Գոշի և Վարդան Ալպեկցու, ինչպէս նաեւ ժողովրդի հորինած առակներին: Նա ծանոթ է եղել նաեւ պարսկական, հունական և հնդկական առակներին:

Մ. Թաղիադջանը կալկաթալում 1846 թ. հրատարակել է «Զվարճախոս առակք պարսից» առակների ժողովածուն, որը կազմված է երկու մասից: Առաջին մասում ղետեղված է պարսկական 60 առակ: Գրանք թարգմանել է, իսկ մյուս մասը, որ կրում է հավելված բնգհանուր խորագիրը, բնգամենը 24 առակ, ավելացրել է ինքը:

Մեր բանասիրութեան մեջ շատ քիչ է խոսվել Մ. Թաղիադջանի «Զվարճախոս առակք պարսից» գրքի մասին: Որոշ գեղարքում միայն հայտարարվել է որպէս պարսկական առակների ժողովածու, իսկ նրա հավելվածի մասին, առհասարակ, խոսք չի ասվել:

Այս առակները որոշ չափով պարզում են Թաղիադջանի մտաւիշումը ժողովրդական ստեղծագործութեանը և զրա օգտագործումը իր գաղափարների ու նպատակների համար:

Ինքնուրույն մշակած առակներում ու զրույցներում նա ավելի համարձակ է բննադատել հասարակութեան արատները: Տիրակալների բռնութիւնների և աշխատավոր ժողովրդին

²² «Ազգասեր», 1846, № 30, էջ 78:

Հարստահարելու արտահայտման մի գեղեցիկ օրինակ է հավելվածում տեղ գտած «Հաջի Իբրահիմ» առակը: Նյութը վերցրել է պարսկական կյանքից: Շեշտված է հատկապես սոցիալական բողոքը: Առակի համառոտ բովանդակությունը հետևյալն է.

Պարսկական նախարար Հաջի Իբրահիմի ժամանակ համարյա ամբողջ երկիրը զեկավարում էին նրա հարազատները և ազդականները:

Սպահան քաղաքից մի կոշկակար, որ շատ էր նեղվել արքունի հարկահանների կեղերումից, գնում է քաղաքի բզեշխի մոտ, որը Հաջի Իբրահիմի եղբայրն էր և աղաչում է, որ իրենից հարկ չվերցնեն: Բզեշխը պատասխանում է, որ անպաշտան պետք է վճարի հարկը, հակառակ դեպքում թող իր սահմաններից հեռանա ու գնա ուրիշ քաղաք:

— Ո՞ւր գնամ,— հարցնում է կոշկակարը:

— Գնա Թեհրան,— ասում է բզեշխը և բողոքի արքային:

— Բարի է,— ասում է կոշկակարը,— բայց գիտե՞ս, որ քո եղբայրը մեծ նախարար է Թեհրանում:

— Գնա Շիրակ:

— Այնտեղ քո եղբորորդին է իշխանաց իշխան:

— Գնա Քաշան:

— Տեք, այնտեղ իշխում է քո բեռին:

— Կորիք, ուրեմն, գժոխք,— ասում է բզեշխը:

— Բայց այնտեղ ձեր լուսահոգի հայրը բարձակից է ստանալիս,— ասում է կոշկակարը,— գուցե չարաշար բռնանան իմ գեմ:

Բզեշխը հուսահատված ասում է նրան.

— Որովհետեւ իմ ազդականները իշխում են այս աշխարհում և գժոխքում, ես ներում եմ քո հարկը, գնա և ուրախ ապրիր:

Սնտիապաշտություն, կրոնի և կրոնավորների քննադատության և ծաղրի մի ուշադրավ նմուշ է հետևյալ առակը.

Մի պատալ կին ամեն օր գտնաթեմ ջուր է տանում բա-
հանալի մօտ, որ օրհնի, որպեսզի ամանները աչգ ջրով լվա-
նա, բանի որ կատուն դունչը կպցնում է դրանց:

Եվ որովհետեւ օր շէր անցնում, որ պատալը շատր իր դա-
վաթով, բահանան ձանձրանալով տսում է.— Ինչո՞ւ ես աչգ-
քան շարշարվում, մայրիկ, և ինձ էլ հոգեհան անում: Բէր բո
կատվին, օրհնեմ նրա դունչը և աչգ հոգսից քեզ էլ ազատեմ,
ինձ էլ:

Աչգ տեսակետից ուշագրավ է նաև «Գող» ծագված կրո-
նավորի զգեստով» տուակը, որտեղ դարձյալ պախարակվում
են և՛ ավազակը, և՛ բահանան:

Նրա մշակած առակների մի մասը բարոյախոսական
բնույթ է կրում:

Մ. ԹԱՂԻԱՂՅԱՆԻ ԱՆՏԻՊ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ
ՇՈՒԲՁԸ

Մ. Թաղիաղյանը թողել է գրական և հրապարակախոսական հարուստ ժառանգություն, որի միայն մի մասն է հասել մեզ, իսկ մեծ մասը կամ անհայտացել է և կամ գեոեզմնում է փակված առանձին արխիվներում:

Արխիվային որոշ փաստաթղթերի հիման վրա պարզվում է, որ բազմաշխատ գրող և գիտնական Մ. Թաղիաղյանը թողել է անտիպ և տակավին անհայտ հարուստ գրական ժառանգություն, որի հայտնաբերումը և հրապարակումը կհարստացնի նրա կյանքի ու գործունեության մասին մեր ունեցած պատկերացումը և նոր արժեքավոր նյութեր կտա XIX դարի առաջին կեսի հայ կյանքի և մշակույթի ուսումնասիրման համար:

Մեր նպատակը չէ թվարկել, առավել ևս կանգ առնել Թաղիաղյանի տպագրված և մեր բանասիրությանը հայտնի գործերի վրա: Միայն ցանկանում ենք Մ. Թաղիաղյանի հայտնած տվյալների և արխիվային այլ փաստաթղթերի հիման վրա ճշտել, թե որոնք են նրա անտիպ և մեզ տակավին անհայտ ստեղծագործությունները, որոնք ուշադրության արժանի են:

1840 թ. Կալկաթայի անգլիական եպիսկոպոսական ճեմարանի տպարանում լույս տեսած «Մեսրոպյան աշքբենարան» գրքի վերջում Մ. Թաղիաղյանը տվել է իր այն աշխատությունների ցանկը, որոնք պատրաստ են եղել տպագրության, բայց նյութական միջոցներ չունենալու պատճառով հնարավորություն չի ունեցել հրատարակելու: Դրանք են.

«Ընթերցարան» իրրեւ երկրորդ հաստը դորա (նկատի ունի «Մեարտփրջան աշրբենարանը»—Ջ. Մ.) «Բանալի հաշկարա-
նութեան» չորում գնին անգլիական նախադասութիւն և կա-
նոնը գլինի՝ յեզլոյ գնոսա ի վճիտ հաշկարանութիւն: «Շար-
ժարանութիւն», որ զգորութիւն աշաց և լուսաւոր գունաւորացն
բացատրէ: «Աստղաբանութիւն» որ զմոլորակաց զվարճանայ
և զանմոլար աստեղաց ճառէ»¹:

Մ. Թաղիադջանը 1830 թվականին տպագրել է իր առա-
ջին լուրջ գիտական աշխատութիւնը՝ «Դիցարանութիւնը»,
ստեղ գիտականորեն քննել է մեր աստասպելական հերոսների
վարքը: Ելնելով հետազայում ավամ վերոհիշյալ աշխատու-
թյունների ցանկից, պետք է ենթադրել, որ Թաղիադջանի գի-
տական այս գործունեութիւնը կրել է ծրարացին բնույթ:
Բացի վերոհիշյալ գրքի վերջաբանից ասկա են նաեւ այլ հա-
վաստի ավյալներ, որոնք վկայում են, որ նա իրոք գրել է
«Աստղաբանութիւն» աշխատութիւնը և ներկայացրել տպա-
գրության: Այսպեա, գեուեա Կ. Պոլսում եղամ ժամանակ Մ.
Թաղիադջանը «Աստղաբանութիւն» գիրքը ներկայացրել է
բողոքական միախոնեհների Ռոբերտյան կոլեջի տպարանում
տպագրելու, բայց Կ. Պոլսից նրա արտաբսումը խափանել է
ալգ գերծը: Դա երեւում է ԳԱԹ Թ. Ազատյանի ֆոնդում պահ-
վող Մ. Սեթյանի նամակից՝ ուղղված Մկրչանին, որտեղ խո-
սելով Մ. Թաղիադջանի բնավորութիւն և ստեղծագործության
մասին, միաժամանակ մեջ է բերում նրա նամակը ուղղված
կնոջ հարազատներին: Նամակը գրված է Կ. Պոլսում 1839
թվականի ասրիլի 11-ին: Թաղիադջանը գրում է. «...նոր մին
գիրք էլ շինեցի, աստղաբաշխութիւն վերա, և հիմա կը տպվի,
ասածով չորս կամ հինգ ամսեն ետ դուրս կուգա, և բեզ կու-
դարկեմ քանի հասա»²:

1839 թվականի մայիսի 16-ին Տրապիզոնից Անգրեան
Ռուպելյանին գրում էր. «Աստղաբաշխութիւնը սկսավ տպա-

1 Մ. Թաղիադջան. Մեարտփրջան աշրբենարան, Կաթիվա, 1840:

2 ԳԱԹ. Թ. Ազատյանի ֆոնդ, № 16090:

գրիլ»։ Սակայն Մ. Թադիազյանին Կ. Պոլսից արտաքսելուց հետո ոչ մի տեղեկություն չի հասել, և հայտնի չէ, թե ինչ բախտի է արժանացել գրքի տպագրությունը։

1852 թվականին «Ազգասեր Արարատյանի» տպարանում լույս տեսած Գևորգ Զաքարյանի «Ջափա կամ քնդհանուր ծանոթութիւն բազմակողի ծովու արեւելեան հնդկաց» գրքի շէրքում Թադիազյանը հայտնել է, որ տպագրվող վերահիշյալ գրքից ստացվող եկամուտը պետք է հատկացնի «Ճանապարհորդութիւն ի Հայս» և «Պատմութիւն հին Հնդկաստանի» աշխատությունների երկրորդ հատորների տպագրությանը։

«Ճանապարհորդութիւն» մնացորդ տսելով պետք է հասկանալ «Ճանապարհորդութիւն ի Պարս» աշխատությունը, որի մի քանի մամուլն էր հրատարակվել և խափանվել էր նյութական միջոցներ չլինելու պատճառով։

Մ. Թադիազյանը «Ազգասերի» բազմաթիվ համարներում խոսելով իր օրագրերի և այլ ստեղծագործությունների մասին, նշում էր նաև արմատական բառարան կազմելու անհրաժեշտությունը³։

Այսպիսով պարզվում է, որ Թադիազյանը իր մահից հետո ժառանգություն է թողել տպագրված գործերից բացի չլուրջ թվով անտիպ աշխատությունների։

Աւր ցնացին, ում արխիվում մնացին և հետագայում ինչպիսի՞ բախտ ունեցան և արդյո՞ր հայտնաբերվեցին ու հայտնի դարձան, ոեւէ մեկի կողմից օգտագործվեցին այդ նյութերը, թե ոչ։ Ահա այդ մասին է, որ մենք ցանկանում ենք մի քանի խոսքով ամփոփել մեր ասելիքը։

Կալկաթայից հեռանալիս Թադիազյանը տպարանը հանձնում է Հովհ. Խաչիկյանին։ Անտիպ և տպագրված գործերի մի մասը հանձնում է իր աշխատակից և բարեկամ Թադեոս Ավետումյանին, իր հետ վերցնելով քսան արկղ դիրք ու ձեռագիր աշխատություններ ճանապարհով է գնալի հայրենիք։

3 «Ազգասեր», 1846, № 33։

Շիրազում մահամերձ վիճակում գտնվելով, Թաղիադյանը իր հետ վերցրած զրքերով ու ձեռագրերով լեցուն արկղները խնդրում է, որ անպայման փոխադրեն Նոր Զուղա և հանձնեն Ամենափրկչյան վանքի մատենադարանին: Դրանք Թաղիադյանի մահից հետո տեղափոխվում են Նոր Զուղա: Այդ պարզ երևում է և՛ Ավետումյանի և՛ Մ. Նալբանդյանի հայտարարությունից՝ և այլ աղբյուրներից: Մ. Սեթյանը Հովհ. Մկրչյանին ուղղած մի նամակում հայտնում է, որ իր հայրը Նոր Զուղայի վանքում ականատես է եղել այդ նյութերի ստացմանը⁴:

Մեզ ոչինչ հայտնի չէ Նոր Զուղայի Ամենափրկչյան վանքում եղած նյութերի մասին, հավանաբար, դրանք պահվում են վանքի մատենադարանի մի անկյունում: Կալկաթայի իշխանականների մոտ թողնված նյութերի մասին հայտնի է հետևյալը. 1886 թ. Հովհ. Մկրչյանը հրատարակելով Թաղիադյանի կենսագրությունը, ի լուր Նոր Զուղայի և Կալկաթայի հայերի հայտարարել և խնդրել է, որ նրա գրական ժառանգությունից պատշաճիկներ գտնելու գեղքում հրապարակեն կամ հաղորդեն իրեն:

Այս կոչին Նոր Զուղայից և Կալկաթայից արձագանքում են Մ. Թաղիադյանի կնոջ հարազատները՝ Հովհ. Սարգսյանը և Մ. Սեթյանը, որոնք հռանգուն կերպով պահվում են Մ. Թաղիադյանի անտիպ նյութերի որոնման խնդրով:

Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, Թ. Ազատյանի ֆոնդում գտնվում են Հովհ. Սարգսյանի և Մ. Սեթյանի մի շարք նամակներ: 1890-ական թվականների սկզբին պրած իրենց նամակներում նրանք Հովհ. Մկրչյանին տեղեկացնում էին, որ իրենք հաշիկ Ավետումյանի մոտից ձեռք են բերել Թաղիադյանի անտիպ ստեղծագործությունների, օրագրերի մի քանի տետրեր: Նամակներում Մ. Սեթյանը հայտնում է, որ պատրաստվում է ընդօրինակել այդ

4 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, 1943, էջ 268:

5 ԳԱԹ, ԹԱ. ֆոնդ, № 10092:

նյութերը և ուղարկել Մկրչանին: Նա կատարում է իր խոստումը: Ամիսներ շարունակ ամենայն ջանասիրտությամբ բնագործակում է Մ. Թադիազյանի նորահայտ ձեռագիր նյութերը և ուղարկում Հովհ. Մկրչանին՝ իր մոտ պահելով բնագրերը:

Արդ սրտնք են այդ նյութերը, որ հիշվում են նամակներում: Հովհ. Սարգսյանը 1888 թ. դեկտեմբերի 29-ին Բաթավիայից գրում էր. «Ընկալայ ի բարեկամէս ի Կալկաթա զհետազա ցուցակ բանի մանր հեղինակութեանց բազմաշխատ Բեսրովբա հանգուցելոյ, որք կան ի Կալկաթա»:

1. Բառարան Ա.— մինչև Օ, ինքն կասէր մի հազար բաներ են, լի մեկնությունամբ և հաստատությունամբ, իւր ձեռագիր:

2. «Թուփակ Թադիազեանց», ձեռագիր:

3. Մանսխութիւնք վասն օրագրութեանց և հնութեանց գտելոց:

4. «Ճանապարհորդութիւն ի Պարս», Ատրպատական, թիվ 5:

5. Պատասխանի տետրակին, որ 1831 ամի էլ ի տպարանէն Անգղիականաց. ինք հիշէ այսպէս. Հրեշտակ ազգեցութեան առ հայս հոսովեապեալս առարէ Մ. Գ. Թադիազեանց 1831 թ. նուիրէ առ պարոն Յարութիւն Արզարեան:

6. «Ճանապարհորդութիւն ի Հայաստան» երէք տետրակ և մի ևս կարճառօտ մասն տպված:

7. «Առակք» հատոր Բ.

8. Մի տետրակ իւր ձեռագիր բանաստեղծութիւնք.

9. «Գինի ջերմեռանդ», թարգմ. 1842 թ.

10. «Օրագրութիւնք 1830—1842 թվերի»⁶:

Այնուհետև 1890, 1891 թվականներին գրած իր նամակներում Հովհ. Սարգսյանը հայտնում է Մ. Աեթյանի կողմից վերոհիշյալ նյութերն արտագրելու և Կ. Պոլիս ուղարկելու մասին:

⁶ ԴԱԲ, ԲԱ Ֆոնդ, Հովհ. Սարգսյանի նամակը:

1890—1891 թթ. գրած իր նամակներում Մ. Սեփյանը թվարկելով վերոհիշյալ նյութերի մասին, ավելացնում է նաև հետևյալները.

1. «Օրագրութիւն Կ. Պոլսից Բաղդադ»:

2. «Ճանապարհորդութիւն Քաղբիւղից Շիշվան»:

3. «Աշուղաբանական բառարան» (Յերես հենց նույն արմատական բառարանն է—Չ. Մ.):

4. Ճանապարհորդութիւն ի Հնդկիս»:

5. «Բառարան գեղջուկ բառից»:

6. «Եղերերգութիւն յօրհաս Քանկա Քաղիադեանց»:

Հետագա նամակագրությունից և փաստաթղթերից պարզվում է, որ Հովհ. Մկրչանը ստացել է բոլոր նյութերը և «Եղերերգութիւն յօրհաս Քանկա Քաղիադեանցը», 1893 թ. առանձին գրքով հրատարակել է Թիֆլիսում:

Հովհ. Մկրչանը հենվելով Մ. Քաղիադջանի օրագրի վրա գրել էր նրա բնագարծան նոր կենսագրությունը, որ նպատակ ուներ մի շարք աչլ անտիպ նյութերի հետ հրատարակել: Բայց վրա հասած 1896 թ. ծանր դեպքերը, սուլթանական Քուրբխաչի դաժան ճնշումն ու հալածանքը, և Մկրչանի ծերությունն ու մահը (1909) թույլ չտվեցին հրատարակ հանելու այդ նյութերը և գրանք դարձյալ մնացին արխիվում փակված:

Այդ բոլոր նյութերի բնագրերը մնացել են Կալկաթայում Մ. Սեփյանի մոտ: Բայց նա զբաղված լինելով իր առեւտրական գործերով և հույսը դրած լինելով Մկրչանի վրա, չէր կարողացել հրատարակել գրանքը: Մ. Սեփյանը շատ ուշ է անգրագարձել այդ հարցին: Նա 1926 թ. վեհերկրում հրատարակած իր «Գրիչ ոսկեգրիչ մատենագրին Մեսրոպբաջ Դավթեան Քաղիադեանց» գրքում գրել է, որ ինքը ժամանակին մեծ գծվարությամբ այդ նյութերն արտագրել և ուղարկել է Հովհ. Մկրչանին, որպեսզի վերջինս հրատարակի:

Սեթյանը միաժամանակ հայտնում է, որ ինքը կաշխատի հրապարակել գրանք⁸:

Մ. Սեթյանը վախճանվեց 1939 թվականին՝ անկատար թողնելով տասնյակ տարիներ փայփայած իր իղձերը:

1934 թ. Հովհ. Մկրյանի հարուստ արխիվը, որը պարունակում է մի շարք ձեռագրեր, հնատիպ և արժեքավոր գրականություն և այլն, այդ թվում նաև Մ. Թադևոսյանի այն գրական նյութերը, որոնք արտագրել և նրան էր ուղարկել Մ. Սեթյանը, Կ. Պոլսից տեղափոխվել է Անթիլիաս, ուր և պահվում է մինչև այժմ: Այս հավաստի տեղեկությունը ստանում ենք հետևյալից.

«Երկու տարի առաջ ողբացյալ Բաբադեն կաթողիկոս փափաղելով ճոխացնել Անթիլիասի գրադարանը, նյութական մեծ գոհողությամբ մը գնած և Անթիլիաս փոխադրած էր բարհիշատակ Հովհ. Ա. քհ. Մկրյանի ձեռագիր և տպագիր հարյուրավոր հատորները: Ես ամիսներ առաջ առիթ ունեցաքննելու Մկրյանի ձեռագիրները, ուր գտա հազիվ թե ութը հատոր, նկարագրելու արժանի: Մնացյալները XIX դարու հատուկ բնօրինակություններ են»⁹:

Այդ նյութերի մեջ, անշուշտ, ալիւի ուշադրությանը արժանիները Մ. Թադևոսյանի օրագրերն են և հիշատակված աշխատությունները:

Ինչպես տեսնում ենք բաղմակողմանի է եղել Մ. Թադևոսյանի ստեղծագործական միտքը: Նա թողել է գրական, հրապարակախոսական հարուստ ժառանգություն, որն արժանի է լուրջ ուսումնասիրության:

⁸ Մ. Սեթյան, Գրիշ օտեկորիչ Մ. Կ. Թադևոսյանց, Վենետիկ, 1926:

⁹ Արտ. արժ. Ալուսեւյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Հայկաթի և Անթիլիասի ու ժառանգորաց, Կ. Բ., Հալեպ, 1936:

Ի Ո Վ Ա Ն Գ Ա Ն Ի Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ն Ե Ր Ա Ժ Ո Ւ Ե Ն	.	.	.	.	.	.	5
Կլանքի համառոտ պատմությունը	.	.	.	.	.	.	19
Բաղիաղյանի պոեզիան	.	.	.	.	.	.	43
Գեղարվեստական արձակը	.	.	.	.	.	.	74
Մ. Թադիսյանը հաշտարոցի և պատմության	.	.	.	.	.	.	89
Մ. Թադիսյանը հրապարակախոս և լրագրող	.	.	.	.	.	.	103
Մանկավարժական գործունեությունը	.	.	.	.	.	.	124
Ժողովրդական բանահյուսությունը և աշուղական արվեստը	.	.	.	.	.	.	
Թադիսյանի գեղահատությունը	.	.	.	.	.	.	132
Մ. Թադիսյանի անտիպ գրական ժառանգության շուրջը	.	.	.	.	.	.	153

ԶԱՆԻ ՄԿՐՏՁԻ ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ
ԱՋԱՆԻ ԱՔՐԻՊՈՅԻՄԻ ՄԻՐՅԱԲԵԿՅԱՆ

ՄԵՍԻՐՈՎ ԹԱԳԻԱԳՅԱՆ

Տպագրվում է Հայկ. ՍՍՀ ԳԱ
Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ


Պատասխանատու խմբագիր
Ս. Ն. ՍԱԲԻՆՅԱՆ

Հրատարակչական խմբագիր
Ս. Ա. ԱՆՈՍՏԱՆՅԱՆ

Տեխնիկական խմբագիր
Ս. Կ. ԶԱԿԱՐՅԱՆ

Սրբագրիչ Ռ. Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՎՏ 03971 պատվեր 235 տպաքանակ 4009
ԽՀԽ 1337: Հրատ. 3533: Հանձնված է տպագրության 31/Մ
1971 թ., ստորագրված է տպագրության 21/Մ 1971 թ., տպագր.
10.0 մամուլ, մրատ. 6,52 մամուլ, պաշման. 8,4 մամուլ, թուղթ
№ 1, 84 × 1081/32: Գինը 90 կոպ.:
Հայկական ՍՍՀ ԳԱ. հրատարակչության տպարան,
Երևան. հարեկամության 24







ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



220046888

A 11
46888